I-177

ԱՐԱՐԱՏ

1907 ԱՄՍԱԳԻՐ ՌՅԾԶ

Տարի Խ. ՅՈՒՆՈՒԱՐ Համար Ա.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆՈՒԱՐ 1907 Թ.

---

1. Կոնդակ Վեհափառ Հայրապետի . . . 3

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

2. Քաղուածք ի կոնդակաց Վեհ. Հայրապետի . .
3. Քաղուածք Սինոդի օրագրութիւններից . . 9

ԿՐՕՆԱԿԱՆ

4. Կատարելութեան ճանապարհը. Գ. վ. Յովսէփեան . 15
5. Հողի վաշխառութիւնը. Փոխադրեց Ե. վ. . . 28

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

6. Ռուսաց եկեղեցի 31
7. Կաթոլիկ եկեղեցի 31

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

8. Հայոց եկեղեցին 1906 թուին Գ. վ. Յ. . . 33

ՄԱՅՐ ԱԹՈՌ 43

ՄԱՀԱՅՈՒՅԱԿ

9. Նահապետ եպիսկոպոս Նահապետեան Գ. վ. Յ. . 44
10. Արիստակէս արքեպ. Սեդրակեան Երուանդ վ. . 51
11. Մուղաֆէր-Էդդին Շահի մահը 55

ՏԱՃԿԱՀԱՅՔ 56

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

12. Մի կարևոր գիւտ.—Իրենէոսի ցոյցը առաքելական քարոզութեան Գ. վ. Յովսէփեան . . . 59
13. Հայերը Ռուսաստանում. Երուանդ վ. . . . 66
14. Անապատականներ և վանականութիւն. Երուանդ վ. 70

ԳԻՏԱԿԱՆ

15. Մանազկերտի ժողովը Երուանդ վ. . . . 75
16. Դաւիթ փիլիսոփայ Գ. վ. Յովսէփեան . . 81

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 94

17. Ստացուած գրքեր.

ԱՐԱՐԱՏ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1907—ՌՅԾԶ

Տարի Խ.	ՅՈՒՆՈՒԱՐ	Համար Ա.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

ՊԱՏՃԷՆ

Տ. Կ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ·

Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետի Յովսէփեան հարազատի Մայր Աթոռոյս Հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք։

Այսու կոնդակաւ մերով կարգեմք զՁեզ ի 1-էն յառաջիկայ յունուարի խմբագիր «Արարատ» ամսագրի Մայր Աթոռոյս, նշանակելով Ձեզ ռոճիկ ըստ նախահաշուի սոյն 1906 ամի։ Ձքաշխումն 600 ռ. դրամոց աշխատակցաց ամսագրին և 180 ռ. սրբագրողի այնուհետև թողումք ընդ տրամադրութեամբ Ձերով, առնելով զտուչութիւն դրամոցդ ըստ տումարի վարչութեան տպարանի Մայր Աթոռոյս։ Ունել նաև ընդ հսկողութեամբ Ձերով զտպագրութիւն «Արարատայ» ի ձեռն նշանակեալ գրաշարի միոյ։

Լիայոյս եմք, եթէ դուն գործեսջիք ըստ ամենայնի հետաքրքիր դարձուցանել զամսագիրդ վասն ժողովրդեան միանգամայն ըստ ներկայ պահանջից նորին։

Ողջ լերուք զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց

26-ն Դեկտեմբերի 1906 ամի
և ըստ տոմարիս ՌՅԾԶ
ի Հայրապետութեան Մերում ԺԳ. ամի
յԱյրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 1732.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական անօրինութիւնք.

Կոնդակ *յանուն Սինոդի վասն բարեփոխութեան սեղանատան։ Թ.* 1734.

— *Տ. Գարեգին արքեպիսկոպոսի՝ վասն ընտրելոյ Թեմական տեսուչ։ Թ.* 1738.

— *Տ. Յուսիկ եպիսկոպոսի ի նոյն միտս։ Թ.* 1739.

— *Աստրախանի Հայոց վիճակային Կոնսիստորիայի ի նոյն միտս։ Թ.* 1740.

— *Տ. Ներսէս արքեպիսկոպոսի ի նոյն միտս։ Թ.* 1741.

— *Տ. Աշոտ եպիսկոպոսի ի նոյն միտս։ Թ.* 1742։

— *Տ. Անանիա արքեպիսկոպոսի ի նոյն միտս։ Թ.* 1743.

— *Տ. Եզնիկ արքեպիսկոպոսի, որով հրամայեցաւ Թոյլատրել Դուրիժեցի Սողոմոնի Ծատուրեան մտանել յերկրորդ ամուսնութիւն։ Թ.* 1757.

— *Ամուսնալուծութեան Մշեցի Յովհաննէս Մահաեսի Յարութիւնեանի ընդ կնոջն Սլմաստի և իւրաւանց կնոջն մտանել յերկրորդ ամուսնութիւն։ Թ.* 30.

— *Ամենապատիւ Պատրիարքին Հայոց Ս. Երուսաղիմայ, որով շնորհաւորեցաւ Ամանորն։ Թ.* 37.

— *Եկեղեց. խորհրդոյ Հայոց Պետերբուրգի, որով պատուիրեցաւ զՄկրտիչ Տ. Մկրտչեան առաքել ի Գերմանիա վասն ուսանելոյ զգիւղատնտեսութիւն։ Թ.* 38։

— *Սինոդի, որով պատուիրէ ի կիր արկանել «զկանոնադրութիւն ծխական Հայաստանեայց ս. եկեղեցւոյ» ի 29 յօդուածոյ (տպեալ յԱրարատ — դեկ. 1906)։ Թ.* 40.

— *Վանահօրն Սաղիանու Տ. Հմայեակ վարդ. վասն առնելոյ հանգանակութիւն ի նպաստ նորոգութեան վանուցն։ Թ.* 66.

— *Շրջաբերական յանուն Թեմակալ առաջնորդաց՝ վասն առաջի առնելոյ զամենայն արգելուս Թեմին իւրեանց. Թ.* 74—80.

— *Տ. Ներսէս արքեպիսկոպոսի, որով պատուիրեցաւ կազմել նախահաշիւ արդեանց և ծախուց ս. Խաչ վանուց որ ի Հին Խրիմ և ի Նոր Նախիջևան և առաջի առնել մեզ։ Թ.* 81.

— *Սինոդի Ս. Էջմիածնի, որով կարգեցաւ Եղիա վարդապետն վանահայր Ծիրանաւոր վանուց. Թ.* 82.

— *Երեցփոխի եկեղեցւոյն Հայոց որ ի Փոթի, վասն հանգանակելոյ զնպաստ շինութեան ծախուց նորոգ կառուցանելի եկեղեցւոյ տեղւոյն։ Թ.* 86.

— *Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի, որով առաքեցաւ նմա մասն ի նշխարաց ս. Յովհաննու Կարապետի ի մխիթարութիւն ժողովրդեան։ Թ.* 52.

Բ.

Հայրապետական գոհունակութիւնք և օրհնութիւնք.

Կոնդակ *Գ. Աւագայ Սարեան, վասն նուիրաբերութեան քսան և հինգ րուբլեաց։ Թ.* 1750.

— *Պօղոս փաշայի Նուպարեան, որով յայտնեցաւ գոհունակութիւն, հանդերձ օրհնութեամբ՝ վասն շնորհելոյ զմեծագումար ծախս շինութեանց երկուց վարժարանաց*

և առաջնորդարանին Հայոց որ ի Գահիրէ և այլոց ևս բարերարութեանց։ Թ. 35.

— Բուդաղեան եղբարց Մովսիսի և Արսենի, որով յայտնեցաւ շնորհակալութիւն վասն շինութեան՝ ուսումնարանի իւրեանց ի վանս Սաղիանու։ Թ. 62.

Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ Տ. Կարապետ քահանայի Տ. Կարապետեան, որով շնորհեցաւ նմա իրաւունս կրելոյ գծաղկեայ փիլոն։ Թ. 1749.

— Տ. Եփրեմ քահանայի, որով տուաւ նմա իրաւունս կրել լանջախաչ։ Թ. 1758.

— Տ. Մամբրէ եպիսկոպոսի միաբանի Ս. Աթոռոյն Երուսաղիմայ, որով տուաւ նմա պատիւ արքութեան։ Թ. 20.

— Տ. Գէորգ եպիս. Երիցեան ի նոյն միտս։ Թ. 21.

— Տ. Տիրայր վարդապետի Մարգարեան, որով շնորհեցաւ նմա լանջախաչ։ Թ. 22.

— Տ. Սահակ վարդապետի ի նոյն միտս Թ. 23.

— Տ. Սարգիս քահանայի Շիոյեան, որով շնորհեցաւ պատիւ աւագութեան։ Թ. 24.

— Տ. Առաքել քահանայիի Տ. Յովհաննիսեան, որով շնորհի նմա լանջախաչ։ Թ. 26.

— Տ. Աղէքսանդր քահանայի Տ. Գէորգեան, որով շնորհի նմա կամիլաւկայ։ Թ. 27.

— Տ. Խաչատուր քահանայի Տ. Գէորգեան, որով շնորհի նմա կամիլաւկայ։ Թ. 28.

— Տ. Իսահակ քահանայի Տ. Մարգարեան, որով շնորհեցաւ նմա լանջախաչ։ Թ. 99.

— Տ. Յուսիկ եպիսկոպոսի, որով շնորհեցաւ նմա պատիւ արքութեան։ Թ. 51.

— Տ. Խորէն քահանայի Խանզատեան և Թադէոս քահանայի Ծխատեան, որովք շնորհեցան նոցա կամիլաւկայ։ Թ. 53—54։

— Հանդերձ օրհնութեամբ յանուն Տ. Փոխարքայի Կովկասու կոմս Իլլարիոնի Իվանովիչ Վորոնցով-Դաշկովի, և ամուսնոյն Ելիզաւետա Անդրիեւնայի, որով շնորհեցաւ նոցա մասն ի նշխարաց Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետի։ Թ. 99.

Մակագրութիւն «Պատուիրեմք հոգ. կառ. Տաթեւու իսկոյն և եթ առաքել զՍտեփան վարդապետն Բուլեան ի Սևան, որպէս միաբան, կարճելով յօրէ հրամանագրութեան զռոճիկ նորա, տալով դիտել նաև Սևանայ վանահօրն ի հոգևոր Կառավարութենէ»։ Թ. 11.

Մակագրութիւն ի խնդրագրի առաջնորդին Բեսարաբիոյ՝ «հինգերորդ աստիճան ազգակցութեան ոչ է թոյլատրելի»։ Թ. 16.

Գրութիւն Դիւանի յանուն Տ. Եղիշէ վարժապետի Մուրադեան, որով խնդրի առաքել ի Դաւրէժ ա. Կնիք առաջնորդական. բ. փաստաթուղթս հանգանակ. Լիլաւայի դպրոցին և գ. վաւերագիրս դրամոց Կենտրոնական Վարժարանի։ Թ. 9.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Դեկտեմբերի 29-ին Սինոդը իրաւունք տուեց Տ. Համազասպ վարդապետին 30 րուբլի առնել Մ. Աթոռի գանձարանից և գնալ Տփխիս բժշկութեան։

Նոյն թուին Սինոդը լուծուած է համարում Հայկանուշի ամուսնութիւնը Նիկոլայ Սարգսեանի հետ և իրաւունք է տալիս կնոջը նորից ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը հրամայեց լուծել Մատթէոս Զօքանեանցի ամուսնութիւնը Մարիամ Զօքանեանցի հետ, մարդուն իրաւունք տալով կրկին ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը կարգադրեց Ղուրդուղուլի գիւղի ծխական հոգաբարձութեան 25 րուբլի տալ Յովսէփ քահանային և ծառատունկը ընդունել եկեղեցու սեփականութիւն։

Նոյն թուին Սինոդը պատուիրեց վանական կառավ. վերջացնել հաշիւները Փարաքարի այգու նախկին կապալառուի հետ և Սինոդի երկու անդամների ներկայութեամբ աճուրդ նշանակել։

Նոյն թուին Սինոդը որոշեց Սպառողական ընկերութեան իրաւունք տալ Վաղարշապատում ոգելից ըմպելիք ծախել. երկրորդ հրամայում է վանական կառավարութեան նշանակել աճուրդ մի տարով Վաղարշապատում ոգելից ըմպելիքի մի խանութ պահելու համար. երրորդ աճուրդով տալ հիւրատան բուֆետ բանալու իրաւունքը։

Նոյն թուին Սինոդը որոշեց յանձնել Տ. Յուսիկ վարդապետին, մասնագէտների միջոցով գնահատել Ռէյսերի շինութեանց գործը և ուղարկել Սինոդ վերջնական վճռի համար։

Դեկտ. 30-ին Սինոդը հրամայեց Հայոց Վրաստանի

Կոնսիստորիային թոյլ տալ Սիմէոն քահանայ Աբրահամեանին քահանայագործութիւն անել։

Նոյն թուին Սինոդը որոշեց Բառնաբաս վարդապետին կարգել պաշտօնակատար Տաթեւ վանուց, Գեղամ վարդ. Հաղբատայ վանուց, Միքայէլ վարդ. Շահնապատի, Ստեփան վարդ. Շիրակունուն ուղարկել իւր տունը նշանակելով ամսական 15 րուբլի. Յովել վարդ. վանահայր Հոռոմոսի, Աբրահամ վարդ. Խնծկոնից. Հմայեակ վարդ. Տ. Սարգսեանին թողնել Շամախու Կոնս. անդամ, Ընձակ վարդապետին Մողնու վանահայր և Ապարանի գործակալ, Անտոն վարդապետին՝ Զարեքայ վանքի վանահայր, դպիր Խաչատրին Բճնու անտառի կառավարիչ՝ տալով բոլորին էլ ճանապարհածախս՝ ուղարկել իրենց պաշտօնատեղիները։

Յունուարի 5-ին Սինոդը հրամայեց գանձապահ Համազասպ վարդապետին տալ վանական Կառավարութեան 50 րուբլի ելեքտրական կայարանի վարպետներին վճարելու. գրել Կարսի հոգեւոր Կառավարութեան, որ 114 ր. 60 կ. փայտի ծախսը մտցնէ վիճակային արդեանց հաշուին։

Նոյն թուին Սինոդը որոշեց իմաց տալ հանգուցեալ Արիստակէս արքեպ. պարտապաններին՝—Երևանցի Վասիլ Եղիազարեանցին, որի պարտքն է 2000 ր. և Վաղարշապատաբնակ Մատթէոս Տէր Պետրոսեանին, որի պարտքն է 1400 ր.—որ առաջինի ժամանակը լրանում է մարտի 16-ին, իսկ երկրորդը պարտքի հետ պիտի վճարէ $7\frac{1}{4}$ ր. տոկ. հաշուած 1897 թուականից։

Յունուարի 12-ին Սինոդը հրամայեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիային ձեռնադրել Արտաշէս Տ. Գալստեանին քահանայ Ճանճղայ, Մոլիթ և Ջխարուլայ գիւղերի վրայ։

Նոյն թուին Սինոդը որոշեց պահանջել Երևանի Կոնսիստորիայի միջոցով Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանից 1896 թուականից ի վեր փոխարինաբար ստացած, բայց ցարդ մոռացութեան տուած պարտքը՝ 102

րուբլի, նոյն և Մեսրովբ քահանայ Մելեանից՝ 130 րուբլի. և ներկայացնել Սինոդին։

Նոյն թուին Սինոդը վճռեց Տփխիսի շրջանային դատարանի Պրոկուրորի առաջով Արսէն Ղլտճեանին քրէական պատասխանատուութեան ենթարկել մի շարք զեղծումների համար. ինչպէս՝ մատեանը այրել և ս. Սարգիս վանքի հաշիւները կեղծել էին.

Նոյն թուին Սինոդը որոշեց թոյլտուութիւն խնդրել Օտար Դաւանութեանց Հոգևոր գործոց Դեպարտամենտից՝ Գանձակի ծխական ժողովի արձանագրութեան համաձայն՝ Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցու «Արարլու» կոչուած հողից յատկացնել 5 դես. 350 ր. արժողութեամբ՝ շտաբ-կուարտիր շինելու տեղ զօրքի համար։

Յուն. 17-ին Սինոդը հրամայեց վկայական տալ Աւագ Դանղեանին Վաղարշապատում գինեվաճառութեան խանութ բանալու։

Նոյն թուին Սինոդը անհիմն գտնելով Նոր Նախիջևանցի Գէորգ Թելլեքեանի խնդիրը ամուսնալուծութեան համար՝ մերժեց։

Նոյն թուին Սինոդը հաստատեց Նոր Նախիջևանի Կոնսիստորիայի վճիռը, որով լուծւում է Կարապետ Ալաճալեանի պսակը իւր կնոջ Կատարինէի հետ, տալով վերջինիս կրկին ամուսնանալու իրաւունք։

Նոյն թուին Սինոդը պատուիրեց թեմական Կոնսիստորիաներին կազմել 1906 թուի տեղեկագիրը և առաջի առնել Սինոդին։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուեց Երևանայ Կոնսիստորիային Վահան Աստուածատուրեանին ձեռնադրել քհնյ.

Նոյն թուին Սինոդը պատուիրեց գանձապահ Համազասպ վարդապետին՝ տալ վանական կառավարութեան արտաքոյ նախահաշուի 800 րուբլի։

— Նոյն թուին. Սինոդը նոտարական պայմանով 1897-ից մինչև 1907 մարտի 1-ը կապալով է տալիս վանքապատկան «Նորագեղի» այգին Երևանցի Համբարձում Գէորգեանին տարեկան 576 ր. 9 տարուանը 5184 ր., ըստ պայմանի կապալադրամը պարտաւորւում է վճարել տարեկան երկու նուագ։ 1093-ից մինչև 1906 թիւը ոչինչ չէ վճարում։ 1906-ի մայիսի 17-ին Գէորգեանը մի խնդրով դիմում է Սինոդին և խնդրում է զիջել 1904 և 1905-ի կապալադրամը, մնացածը խոստանալով վճարել։ Սինոդը «վասն անբարեյաջող հանգամանացն» խնդիրը յարգում է և ի հաշիւ առնելով նրա ցոյց տուած 192 ր. 8 կ. հնձանի և պարսպի ծախսը (թէև թոյլ էր տուած ծախսել միայն 100 րուբլի) 1344 ր. անպահանջ է թողնում և մնացածը պահանջելով կրկին 9 ամեայ պայման է կապում։

Տ. Բաբգէն վարդապետը առանձին յայտարարութեամբ դիմում է Սինոդին և ի նկատի ունենալով՝ որ 1904 և 1905 տարիների բերքը սովորական է, որ Գէորգեանը ոչ մի փաստ ցոյց չի տալիս վասն «անբարեյաջող հանգամանաց», որ Սինոդը ոչ մի կերպով հասու չէ Համբարձումեանի կրած վնասին, որ Սինոդը պայման կապելիս անբարեյաջող հանգամանաց կէտ չէ մտցրել, որ այդ որոշումը վնաս է Մայր Աթոռի առանց այն էլ սուղ միջոցներին, որ այդ զիջումով հ. հ. անդամք բարոյական պատասխանատուութեան տակ են ընկնում թէ Մայր Աթոռի թէ միաբանութեան և թէ ժողովրդի առաջ, որ կապալառուն ամբողջ 4 տարի վճարը պահելով պայմանազանց է գտնուել, պնդում է կապալը լրիւ պահանջել և այլ ևս այգին նրան չտալ։

Սինոդը անհետեւանք է թողնում Տ. Բաբգէն վարդապետի պահանջը և հրամայում է 467 րուբլի 32 կոպ. մնացորդը ստանալ։

— Փետրուարի 18-ին. Ինժեներ Կիրակոսեանը կամենում է հիմնել Երևանում ելեքտրական կայարան և

առաջարկում է Սինոդին, յանձնել իրեն 24 տարով վանքապատկան ջրաղացը, խոստանալով առաջին 12 տարին վճարել 500-ական ր., իսկ հետեւեալ 12 տարին 1200-ական ռուբլի, պայմանաժամը լրանալուց յետոյ ամբողջ կայարանը իր բոլոր պարագաներով նուիրել Մայր Աթոռին։ Սինոդը ընդունեց այս առաջարկութիւնը և պարտ ու պատշաճ կարգադրութիւն արաւ։

Նոյն թուին. Սինոդը քննելով Վրաստանի թեմի վիճակային և օտարին ելից և մտից տումարները, մի շարք ջնջումներ և ապօրինի փոխումներ է գտել, ուստի որոշեց՝ Սինոդի պ. Պրոկուրորի պնդման համաձայն «յանձնել ի դատ մարմնաւոր իշխանութեան զՏ. Գարեգին արքեպիսկոպոսն, զԱնդամ Կոնսիստորիային զԵփրեմ վարդապետն, զԳրիգոր քահանայն Շիրմազանեանց, զԶաքարիա քահանայն Զարդեղեանց, զԳրիգորիս քահանայն Երզնկեանց, զԳանձապահ Սարգիս քահանայն Շիոյեան և զԱտենադպիր Բեկժանեանց՝ ի ձեռն պրոկուրորի շրջանական դատարանին Տփխեաց»։ Իսկ պ. Պրոկուրորի երկրորդ պահանջը՝ հեռացնել նոցա պաշտօնից քննութեան ընթացքում՝ թողնել առանց հետեւանքի։

Նոյն թուին. հրամայեցին Թեմ. Կոնսիստորիաներին մատուցանել Սինոդին՝ որքաղնադործ պաշտօնէից որբոց և այրեաց հոգաբարձութեան դրամարկղի մանրամասն հաշիւը 1906 թուի վերաբերեալ։

Նոյն թուին. Սինոդը հրամայեց պատուիրել ճեմարանի վարչութեան մատուցանել Սինոդին ճեմարանի վերաբերեալ 1906-ի տեղեկութիւնը. երկրորդ՝ պատուիրել Թեմ. առաջնորդաց Հայոց Վրաստանի, Ղարաբաղի, Բեսարաբիոյ, Աստրախանի, Երեւանի անցեալ 1906 թուի մանրամասն տեղեկութիւն Թեմ. դպրանոցների վերաբերեալ։

Նոյն թուին. Սինոդը մերժեց Երեւանի Կոնսիստորիայի միջնորդութիւնը՝ ձեռնադրել քահանայ Բարաղամ Բարաղամեանցին նրա թերուսութեան պատճառով։

Նոյն թուին. Սինոդը հրամայեց գանձապահ Համազասպ վարդապետին, Սարգիս Բոշարեանի գրաւականը՝ 50 րուբլին մտցնել Մայր Աթոռուի վարձադրամոց հաշուի տումարում։

Նոյն թուին. Սինոդը հրամայեց գրաւել Մելքոնեանցի 25 րուբլին և մտցնել Մայր Աթոռի մուտքի տումարը և նշանակել վերջնական աճուրդ հիւրանոցի բուֆէտը մի տարով բանալու համար։

Նոյն թուին. Սինոդը հրամայեց վանական Կառավարութեան կազմել վանքապատկան գիւղերի համար մի մի մատեան և մտցնել այնտեղ վանքապատկան գիւղի տների, այգիների և վարելահողերի սահմանները և տարածութիւնը։

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ.

Եղերուք կատարեալք որպէս և
երկնաւոր հայրն ձեր կատարեալ է։
Մատթ. Ե. 48

Ա.

Կատարելութեան ձգտումը աստուածային օրէնքներից գերագոյնն է և յատուկ մարդկային բնութեան։ Այն օրուանից, երբ մարդը ինքնագիտակցութեան է հասել, նկատելի է դորա հետ և նորա կատարելութեան ձգտումը։ Պատմութիւնը կարելի է սահմանել որպէս մարդկային կատարելութեան ձգտման նկարագրութիւն, և նորա իսկական հերոսներն են այն անձնաւորութիւնները, որ կարապետ և մարգարէ են հանդիսացել բարձրագոյն ձգտումների և նպատակների համար։ Մեր Տէրն էլ, որ պատմութեան մէջ այդպիսի անձնաւորութիւններից կատարելագոյնն է, անսահման կատարելութեան ուղին է գծում իւր հետևողների համար՝ «եղերուք կատարեալք որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» խօսքերով։ Փորձենք այս լուրջ խնդիրը խորհրդածութեան նիւթ դարձնել, որի ըմբռնումն ու գործադրութիւնը քրիստոնեայի կեանքի էութիւնն ու նպատակը պիտի կազմէ։

Կեանքի նպատակ։ Շատ ազնիւ հոգիներ գլուխ են կոտրել, արիւն քրտինք մտել կեանքի նպատակը հասկանալու և ուրիշներին հասկացնելու համար։ Կեանքի ամենամեծ հանելուկն է այդ, որ դրուած է մեր առաջ և որին պիտի նուիրուին մեր ամենաթանգ րոպէները։ Ում համար պարզ է կատարելիք գործի ծրագիրն ու նպատակը,

ուելի հեշտութեամբ էլ դուրս կբերէ յանձն առած պարտաւորութիւնը։ Եթէ ճարտարապետը գծագրել է մակարդակը, այլ ես որմնադրի և քարտաշի համար դժուար չէ հոյակապ շինութիւններ կանգնել։ Գիտակցութիւն ունենալ, թէ ինչ է կեանքի նպատակը, մարդկային կատարելութեան յաջողութեան կէսն է։ Տարաբաղդաբար շատ չեն այնպիսի մարդիկ, որոնք առաքեալի նման ասել կարող են. «Արդ ես այնպէս ընթանամ, ոչ որպէս յաներեւոյթս, այնպէս մրցեմ, որպէս ոչ թէ զհողմս ինչ կոծելով»։ Մարդկութեան դժբաղդութիւնն հէնց այն է, որ մեզնից շատերս հողմերի դէմ ենք կռւում, խարխափում ենք խաւարի մէջ առանց գիտակցութիւն ունենալու մեր գոյութեան էութեան և նպատակի մասին։ Սակայն եթէ ապրում ենք, անհրաժեշտ է, որ մեզ համար պարզ լինի, ինչու ենք ապրում, և ուր ընթանում։

Կեանքի նպատակը պարզելու համար, նախ պէտք է որոշ լինի, թէ ինչ է կեանքը։ Ահա մի հարց, որի լուծման համար շատ տարբեր հասկացողութիւններ կան և այդ տարբեր հասկացողութիւնների չեա էլ կապուած են վերոյիշեալ հարցի տարբեր պատասխանները։ Սակայն այդ տարբերութիւնների մէջ ճշմարտագոյնն այն է, որ ամենից հինն է և պատմութեան ընթացքում հոգևոր կեանքի մէջ հանդէս է եկել այլ և այլ ձևակերպութիւններով, ըստ էութեան միշտ նոյն մնալով. այսինքն կեանքն ըմբռնել որպէս հոգևորի և մարմնաւորի պատերազմ։ Բնախօսական տեսակէտով որքան էլ ճշմարիտ լինին մարմնի և հոգու փոխադարձ ազդեցութիւնն ու նոցա սերտ առընչութիւնը, բայց և այնպէս անուրանալի են և նոցա տարբեր յատկութիւնները։ Մարդը միայն այն չէ, ինչ որ ուտում է, ինչպէս պնդում էին մի ժամանակ նիւթապաշտական ուղղութեան հետևող գիտնականները, այսինքն միայն մարմին չէ, այլ և հոգի։ Մարդու մարմինը կարելի է վերլուծել քիմիական տարրերի, բայց նոյն տարրերի միութիւնից մտածող, զգացող և կամքի տէր անձնաւորութիւն

չի ստեղծուիլ։ Ոչ մի բնագէտ չէ կարող պնդել, թէ գիտակցութիւնը նիւթ է և ճիշդ այն օրէնքներին է ենթարկւում, ինչպէս նիւթը։ Ուրիշ է հոգին և ուրիշ մարմինը. մենք յաճախ մեր ներքին աշխարհում զգում ենք այդ երկուսի մաքառումը։ Ուրիշ բան է կամենում մարմինը և ուրիշ հոգին. մարմնի ցանկութիւնը յաճախ հոգու կորուստն է, կամ ինչպէս առաքեալն է գեղեցիկ կերպով ձևակերպում, «խորհուրդ մարմնոյ մահ է և խորհուրդ հոգւոյ կեանք և խաղաղութիւն»։ Կրկնում ենք այս իրողութիւնն անժխտելի է մեր հոգևոր աշխարհում և հէնց այս երկու աշխարհների մաքառումն էլ պատմութեան էութիւնն է կազմում։ Կեանքը պատերազմ է, աւելի պարզելու համար կասենք, կեանքը հոգևորի և մարմնաւորի պատերազմն է։ Ձգտում յաղթելու չարը, ձգտում բարւոյ դրօշակակիրը դառնալու կատարելութեան ճանապարհն է, որ դէպի վերջնական նպատակը՝ յաւիտենականութիւնն է տանում։

Բ.

Այս իրողութիւնն ամենահին ժամանակներից յայտնի էր մարդկութեան, ուստի և նորա լաւագոյն անդամները կրօնական հանճարներն ու փիլիսոփաները երկնաթռիչ արուեստագէտներն ու բանաստեղծները, այլ և այլ միջոցներ են առաջարկել և գործադրել հոգու յաղթութիւնը ապահովելու համար։ Բաւական է հին ազգերից յիշել միայն յոյների և հռոմայեցիների փիլիսոփայութիւնը, որ աւելի սերտ առընչութիւն ունի մեր քաղաքակրթութեան հետ. քրիստոնեայ լինելով՝ երախտագիտութեամբ պիտի յիշենք Սոկրատէսի, Պղատոնի, ստոյիկեան և էպիկուրեան փիլիսոփայութիւնների հիմնադիրների անունը։ Նոքա էլ մի մի ազնիւ ճառագայթ են եղել քրիստոնէութեան հնոցը զօրացնելու համար։ Ամենայն մի ձգտում դէպի վսեմն ու կատարեալը յարգելի պիտի լինի քրիստոնեայի համար, «ուր հոգի Տեառն է, անդ ազատութիւն է», եթէ մի անգամ ըմբռնել ենք մեր կրօնի էութիւնը, եթէ պատկերացրել ենք մեր հոգու

առաջ նորա Հիմնադրի անարատ և լուսաւոր անձնաւորութիւնը, այլ և երկիւղ չունինք համեմատութեան դնելու մարդկութեան մեծ բարերարների և հանճարների անձնաւորութեան և վարդապետութեան հետ։ Ընդհակառակ այդ համեմատութիւնը միայն մի բան կարող է պարզել, թէ մենք իրաւունք ունինք օրհնութեամբ յիշել մեր Տիրոջ անունը, որ բոլոր հանճարների, բոլոր բարերարների և մարգարէների մէջ բացառիկ և գերազանց է հանդիսանում։

Պղատոնը հոգևորի յաղթութեան միջոցը նիւթի ոչընչացումն էր ընդունում, հոգին պէտք է ազատուի մարմնի կապանքներից և դորա միջոցը բանականութիւնն է, փիլիսոփայական միտքը։ Պէտք է նախ ազատուել այդ կապանքներից մեր ձգտումների վերջնական նպատակի՝ բարութեան գաղափարին հասնելու համար։ Անկատարից դէպի կատարեալը բարձրանալու համար՝ պէտք է ոչնչացնել զգայականը և նմանել աստուածութեան, որ ազատ է չարութեան և վատութեան յատկութիւններից։ Հոգին պէտք է ամփոփուի ինքն իւր մէջ, մտածող ճանաչողութեան խաղաղութեան մէջ, ազատ անցաւորից և անկատարից և միանայ ճշմարիտ և յաւիտենական էութեան հետ։ Իսկ դորա միջոցը, ինչպէս յիշուեցաւ, բանականութիւնն է և փիլիսոփայութիւնը։ Բայց Պղատոնի բարոյական կատարելութեան գաղափարը որքան և վսեմ, այնքան և անիրագործելի էր, այդ մի վերացական գաղափար էր, որ միայն նորա գլխում գոյութիւն ունէր։ Մարդկութեան անդամները եթէ նոյն իսկ Պղատոններից կազմուած լինէին, անկարելի կլինէր այդպիսի զուտ վերացական գաղափարների համեմատ իրական կեանք ստեղծել. փիլիսոփան ինքն էլ, երևի, չի մտածել, թանձրացնել կեանքի մէջ իւր բարոյական կատարելութեան գաղափարը։

Նորա աշակերտը և հին աշխարհի ամենամեծ փիլիսոփան՝ Արիստոտել, թէպէտ և բոլորովին տարբեր ճանապարհով, բայց դարձեալ մարդկութեան երջանկութիւնը բարոյական կատարելութեան մէջ է տեսնում։ Բայց այդ

կատարելութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բնական աճողութեան կանոնաւոր զարգացումը, բնականի ոգիացումը։ Նա չի ընդունում հոգու և մարմնի այն երկուութիւնը, որ յատուկ էր իր ուսուցչին։ Մարդը երջանիկ կարող է լինել իրեն յատուկ՝ բնական գործունէութեամբ, իսկ մարդու էական յատկութիւնը բանականութիւնն է։ Նա կամքի վարժութեամբ կամ աւելի ճիշդն ասած ինքնիշխանութեան վարժութեամբ պիտի՝ կարողանայ հետևել բանականութեան թելադրութեան հակառակ ցանկութիւններին։ Որպէս միջոցներ առաջարկում է գեղարուեստն ու ճանաչողութիւնը կամ գիտութիւնը. առաջինը մաքրում է հոգին յոյզերից, իսկ երկրորդը առաջնորդում դէպի բարձրագոյն և մաքուր բանականութիւնը։ Այսպիսի տեսական բանականութեան թելադրութեամբ եղած գործունէութիւնն է, որ մեզ դէպի երջանկութիւն և կատարելութիւն է տանում, այսինքն դէպի բարոյական, գործնական կեանքը։ Բայց աւելի բարձրագոյն երջանկութիւնը հայեցողական է. ճանաչողութեամբ կամ գիտակցութեամբ մասնակից է դառնում մարդը մաքուր բանականութեան, որ Աստուծոյ էութիւնն է և այս է իսկական և յաւիտենական երջանկութիւնն ու կատարելութիւնը։

Ինչ որ ասացինք Պղատոնի համար, նոյնը կրկնել կարող ենք և Արիստոտէլի համար. ճանաչողութիւնը կամ վերացական գիտութիւնն անշուշտ հոգևոր բարիք է, բայց ոչ միայն շատ քչերին մատչելի, այլ և կտրուած գործնական կեանքից։ Արիստոտէլի կատարելութեան նպատակը նոյն իսկ աւելի տեսական բնաւորութիւն ունէր, հանճարեղ փիլիսոփայի միքի սաւառնումն էր այդ բանականութեան վերացական եթերներում, որ երբ գործնական վարդապետութիւն դարձաւ ստոյիկեանների փիլիսոփայութեան մէջ, ցոյց տուեց իր պակասաւոր կողմերը։

Դ.

Այս երկու հանճարներին հետևող փիլիսոփայական դպրոցներից յիշելի են ստոյիկեաններն ու եպիկուրեանները։

Երկուսն էլ որոշ չափով իրենց հետքերն են թողել մարդկային հոգու զարգացման պատմութեան մէջ, երկուսն էլ մասամբ դեռ ևս նշանակութիւն ունին կրթուած հասարակութեան որոշ խաւերում։

Առաջինն իսկապէս գործնական կեանքի փիլիսոփայութիւն էր, որով պէտք է ընթանար իրենց հասկացողութեան համեմատ բարոյական կեանքը։ Նա այնպիսի տեսական բնաւորութիւն չունէր, ինչպէս Պղատոնի և Արիստոտէլի փիլիսոփայութիւնն էր։ Գիտութիւնը նոցա համար միայն միջոց էր առաքինի գործողութեան համար։ Միակ բարիքը առաքինութիւնն էր և չարիքը մոլութիւնը. ըստ այսմ էլ բաժանւում էին մարդիկ և շրջապատող իրերը՝ գոնէ այս վարդապետութեան սկզբնական ժամանակներում։ Հաճոյքն ու ստացուածքը արգելք էին համարւում առաքինութեան, ինչպէս և յոյզերը, երկիւղն ու ցանկութիւնը, կիրքն ու զգացմունքը, եթէ սոքա իշխեն բանականութեան վրայ։ Նոքա թէև բարոյագիտութեան համակարգութիւն չունէին, բայց իրենց բարոյական կատարելութեան գաղափարը պատկերացնում էին իմաստունի գերակայի մէջ։ Իսկ այդ իդէալը կամ գերական կապուած էր իրենց տիեզերաբանական հայեացքների հետ։ Ստոյիկեանները հին աշխարհի հանրաստուածականներն էին. աստուածութիւնը բնութեան մէջ էին որոնում և ոչ նրանից դուրս։ Տիեզերքը Աստուծոյ մարմինն է և Աստուած տիեզերքի հոգին։ Այստեղից էր ծագում և նրանց ամբողջ բարոյագիտութիւնը. մարդու ձգտումների և կատարելութեան ճանապարհն էր ապրել բնութեան ընդհանուր օրէնքների համեմատ, ներդաշնակութիւն կազմել բնութեան հետ, և այս ձգտումը մարմնացած էին համարում իմաստունի գերակայի մէջ։ Իմաստունն ազատ է արտաքին աշխարհից և երջանկութիւնն ինքն իր մէջ է գտնում՝ ինքնաբաւականութեան հպարտ գիտակցութեամբ։ Նա աշխարհի հետ գործ չունի և այնտեղից ստացած տպաւորութիւններն ու յոյզերը չեն խանգարում նորա ներքին խաղաղութիւնը. Նա օրէնքից և սովորութիւններից բարձր է, կարող է ինքնասպան լինել, ստա-

խօս, գործել վատթարն ու գարշելին առաքինութեան զգացումով։ Մի խօսքով իմաստունին պատկերացնում էին իբրև մի աստուած, «որ հպարտանալ կարող էր իւր կեանքով, ինչպէս Զևսը»։

Բայց այդպիսի մէկը ոչ միայն չկար երկրիս վրայ, ոչ միայն վերացական ենթակայական ստեղծագործութեան արդիւնք էր, այլ եթէ իրօք գոյութիւն ունենար, մեր համակրանքը վայելել չէր կարող. Նորա հպարտութիւնն ու ինքնաբաւականութիւնը կստիպէր մեզ հեռու փախչել նրանից։ Ստոյիկեանների ստեղծած բարձրագոյն կատարելութեան տիպը երևակայական էր. և իրենք հէնց ստոյիկեանները, որքան և յարգելի իրենց շատ կողմերով, հակասութեան մէջ ընկան իրենց գաղափարների վերաբերութեամբ։ Յայտնի է, թէ նոցա լաւագոյն ներկայացուցիչներից մէկը, Սենեկան՝ ինչպէս ընչասէր էր և համակերպւում էր իւր սանի՝ Ներոն կայսեր՝ զզուելի և անբարոյական քմահաճոյքներին։ Իսկ նրանց հպարտութիւնը, ինքնաստուածացումը, եթէ կարելի է այսպէս ասել, և արհամարհանքը դէպի ոչ փիլիսոփան, ոչ առաքինին, դէպի ամբոխը, այնպիսի խաւար ստուերներ են, որ բարոյական կատարելութեան հետ հաշտեցնել չի կարելի։ Իրենց արտաքինով իսկ՝ փիլիսոփայական վերարկուով, մազերի մէջ խորասուզուած դէմքով, պէտք է փողոցում տարբերուէին այդ աստուածները, խեղճ, տգէտ, ուրեմն և ոչ առաքինի ամբոխից։ Կատարեալ մարդը ստոյիկեանն էր, իսկ միւսները յիմարներ և մեղաւորներ։

Եպիկուրեան փիլիսոփայութեան նպատակը նոյնպէս գործնական էր՝ մարդկանց դէպի երջանկութիւն առաջնորդել։ Բարձրագոյն բարիքը, որին պէտք է ձգտէ մարդս երջանկութիւնն է, իսկ այդ երջանկութեան հասնելու լաւագոյն միջոցը՝ հաճոյքը, զուարճութիւնը։ Սակայն այդ հաճոյքը րոպէականը չէ, այլ տևականը, որին պիտի ձգտէ մարդս իւր բանականութեան ընտրութեամբ։ Հաճոյքներից ընտրելի են աւելի հոգևորները, որոնք տևական և խա-

ղող բաւականութիւն են պատճառում, այն ինչ մարմնականներր կրքոտ են, փոթորկալից և բոպէական։ Հաճոյքը երջանկութեան էական տարր ընդունելով հանդերձ, չափաւորութիւն և սակաւապետութիւն է քարոզում Եպիկուրը. շռայլութիւնն ու զեղխութիւնը բարձրագոյն բարիք չեն։ Պէտք է վայելել կեանքը, ամենայն բարիք, որ հաճոյք ու զուարճութիւն է պատճառում, բայց առանց վնասի, գրգիռների և հոգու խաղաղութիւնը կորցնելու։ Այսպիսով հաճոյքը, զուարճութիւնն ու առաքինութիւնը միութիւն էին կազմում այս վարդապետութեան մէջ և նոքա բարձրագոյն, հոգևոր զուարճութիւնը որոնում էին կեանքի էսթետիկ նրբութեան, հոգեկից և նրբամիտ բարեկամական շրջանների մէջ։ Բարեկամութիւնը, կարեկցութիւնն ու մարդասիրական գաղափարը այս վարդապետութեան համակրելի կողմն էր։

Սակայն հաճոյքը կատարելութեան էական տարր ընդունելով, բարոյականութիւնն ինքնըստինքեան տեղի էր տալիս անհատական երջանկութեան առաջ։ Քաղաքակիրթ մարդու նրբաճաշակ և գեղասիրական վայելքը բարոյական կեանքի նպատակ էր ընդունուած։ Վայելքի միջոցները որքան և նրբացած լինէին քաղաքակրթութեան յառաջադիմութեամբ և բարիքներով, ըստ էութեան ոչ այլ ինչ էր այդ ձգտումն ու կեանքը, եթէ ոչ բարոյական պարտքի զգացումից զուրկ եսականութիւն։ Եսի, ինքնաբաւականութեան պաշտամունքն էր այդ նուրբ ձևերի տակ։ Եպիկուրեան վարդապետութիւնը մենք նկարագրեցինք իւր մաքուր գաղափարականութեան մէջ, բայց հէնց այդ վիճակում ոչ միայն եսական է այն, այլ և անիրագործելի, եթէ ընդունենք իսկ, որ մարդիկ ընդունակ են հաճոյքների մէջ, որից դուրս չեն և մարմնականները, չափաւորութիւն պահել։ Տուէք այն հասարակութիւնը, որ ճաշակի, վայելչութեան, սիրալիրութեան հաւասար նրբազգածութիւնն ունենար և նոցա փոխադարձ յարաբերութիւնից միայն հաճոյք բղխէր։ Գործնական կեանքի մէջ այդ վարդապետութիւնը ցոյց տուեց իւր սնանկութիւնը.

եպիկուրեան ասելով՝ հասկացւում է զգայական զուարճութեան հետամուտ, ուտող, խմող, աշխարհը վայելող մի անձնաւորութիւն, որ անշուշտ առաքինութեան տիպար լինելուց շատ հեռու է։ Եւ այդ շատ հասկանալի է, միանգամ, որ զուարճութիւնն ու հաճոյքը երջանկութեան և կատարելութեան տարր էր ընդունուած, անկման և սայթաքման բոլոր պայմանները պատրաստ էին։

Մենք փոքր ինչ աւելի կանգ առանք այս խնդրի վերայ, որովհետև զուրկ չէ այժմէութիւնից. եւրոպական հասարակութիւնների մէջ, նրանց հետևողութեամբ և մեր մէջ, հազուադիւտ չեն այնպիսի անձնաւորութիւններ, որոնց ամբողջ ձգտումն է վայելուչ հագնուել, նիստ ու կաց ունենալ, վայելել կեանքի և քաղաքակրթութեան հոգևոր և մարմնաւոր բարիքները. ըստ երևոյթին մինչև իսկ ոչ ոքի վնաս չեն տալիս, ազնիւ են, բայց և այնպէս եպիկուրեան նրբութիւններից աւելի չեն բարձրանում։ Կենդանարար Հոգին չէ նրանց ղեկավարող զօրութիւնը, այլ նրբացած եսամոլութիւնը, որ միշտ էլ չարեաց արմատ կմնայ, բայց ոչ երբէք բարձրագոյն առաքինութեան։

Դ.

Կատարելութեան ճանապարհ է քարոզում և մեր Տէրը. «Եղերուք կատարեալք, որպէս և երկնաւոր հայրն ձեր կատարեալ է»։ Այս խօսքերից արդէն նկատւում է, թէ Տիրոջ քարոզած կատարելութեան ճանապարհը տարբեր է մինչև այժմ նկարագրածներից։ Բնական չէ այս ճանապարհը, որովհետև կատարելութեան նախատիպը գերբնական է։ Այնտեղ բանականութիւնն էր իւր թելադրութիւններով գլխաւոր գործօնը, այստեղ, ինչպէս կտեսնենք հաւատը, մարդկային հոգու սրբազան զգացմունքներից մէկը։

Բայց ինչ է նշանակում բնական և ինչ գերբնական։ Պէտք է երկու խօսքով գոնէ լուսաբանենք այս հասկացողութիւնները մեր մտքերի ընթացքը պարզելու համար։

Տիեզերքի մէջ բնականի և գերբնականի բաժանում չկայ իսկապէս. մեր մարդկային միտքն ու լեզուն է այդ բաժանումը դրել։ Այն, ինչ որ բնական ենք համարում, նոյնչափ գերբնական է, ինչպէս և գերբնականը բնական։ Երկուսն էլ հաւասարապէս երևոյթներ են բնութեան մէջ, մէկը միայն ենթարկւում է մանրամասն քննութեան և այդ քննութիւններից որոշ օրէնքներ ենք հանում, իսկ միւսը նման քննութեան և օրէնքի չի ենթարկւում։ Արտաքին բնութեան երևոյթները ենթարկւում են մեքենայական օրէնքների, իսկ հոգևոր, կրօնական—բարոյական կեանքի երևոյթները այդպիսի մեքենայականութեան չեն ենթարկւում։ Գերբնականի գաղափարը մենք այս մտքով ենք հասկանում և ոչ բնական, մեքենայական օրէնքների մէջ արտաքին ուժի միջամտութիւն. այս տեսակէտով երկուսն էլ բնութեան երևոյթներ են և նոցա գոյութիւնը հաւասարապէս ուրանալ չենք կարող։ Եւ զարմանալին այն է, որ ինչ վսեմ է, սուրբ, աստուածային, այն ևս գերբնական է։ Գերբնական է և այն ճանապարհն ու նպատակը, որ մեզ բարձրագոյն, բարոյական կատարելութեան է տանում, իսկ այդ կատարելութեան նախատիպը Աստուած է։

Բնութիւնը իւր բազմատեսակ երևոյթներով, աղբիւրների կարկաչը, գետերի անընդհատ հոսանքը, արօտների և մարգագետինների թաւշապատ կանաչը, ծաղիկների քնքշութիւնն ու զուարթ գեղեցկութիւնը, անտառների մթութիւնն ու նոցա դարաւոր ծառերի տերևների սօսափիւնը, անդնդախոր ձորերն ու երկնամերձ լեռները, անհունութիւնը եզերող հորիզոնը, աստղազարդ երկինքն ու նորա մեղմիկ, չքնաղ կապուտակութիւնը... մի խօսքով անսահման տիեզերքը մեր մէջ վեհութեան, սրբազան խորհրդաւորութեան մի զգացում է յառաջ բերում։ Զգում ենք, որ այդ խորհրդաւորութեան և տիեզերքի մի օղակն ենք կազմում, զգում ենք, որ մեր ներսն էլ մի ուրիշ տիեզերք կայ, որ մեր հոգին շարժումներ և ելևէջներ ունի, որ մենք ապրում ենք... բայց զգում ենք նաև, որ անկարող ենք ապրել նիւթապէս և հոգեպէս առանց մեր շրջապատի, որ

մեր բաղձի ընթացքը մեզնից չի կախուած, այլ կախումն ունինք տիեզերքի մէջ արտայայտուող մի խորհրդաւոր զօրութիւնից։ Եւ ահա այս կախման, այս խորհրդաւորութեան զգացումն է, որ տանում է մարդուն դէպի բարձրագոյն զօրութեան՝ Աստուծոյ գաղափարին, որին պատկերացնում ենք մեր հոգու նմանութեամբ բանական, կենդանի, հոգեւոր մի էակ, բայց մեր լաւագոյն յատկութիւնների ամենակատարեալ կարողութիւններով։

Աստուծոյ գոյութիւնն ի հարկէ բնական օրէնքներով և չօշափելի փաստերով ապացուցանել չենք կարող, և այն Աստուածը, որի գոյութիւնը սառը մտքի՝ բանականութեան տեսութիւններով պիտի հաստատենք, կենդանի աստուած չէ։ Մեզ պէտք է սրտի և հոգու ղեկավար և տնօրէն հանդիսացող Աստուած, որ ապրէր մեր սրտում և կեանք ու նպատակ տար մեր բարոյական գոյութեան։ Այդպիսի Աստուծոյ գոյութիւնը մեր ներքին աշխարհում պիտի որոնենք, իսկ նորանից դուրս պատմութեան, հոգեւոր և բարոյական կեանքի առաջնորդների և մարգարէների մէջ, որոնք աւելի զօրեղ և պայծառ կերպով զգացել են նորա զօրութիւնը և հաղորդել իրենց շրջապատին։ Եւ այս զգացմունքն է իսկապէս նոցա մեծութեան, բարոյական կատարելութեան միակ գաղտնիքը։ Մեր Տիրոջ գերազանցութեան և աննման բարձրութեան խորհուրդն էլ այն է, որ ոչ ոք կրօնի հիմնադիրներից, մարդկութեան մեծ բարերարներից Աստուծոյ մերձաւորութիւնն այնպէս խիստ չէ զգացել և իւր կեանքի ընթացքն այնպէս նորանից կախուած, ինչպէս Նա։ Որդիական մաքուր, անձնուէր սիրոյ և Հօր կամքի առաջ հպատակութեան զգացմունքն է, որ Նորան դէպի խաչ է առաջնորդել և սիրոյ ու կարեկցութեան կապերով միացրել մարդկանց հետ։ Այս ներքին փորձառութեան արդիւնքն է ամփոփուած «Եղերուք կատարեալք, որպէս երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է» խօսքերի մէջ։

Ե.

Քրիստոնէութիւնն, ուրեմն, կատարելութեան բոլորովին մի տարբեր ճանապարհ է քարոզում. այստեղ գլխաւոր գործօնը մարդկային միտքն ու կամքը չէ, այլ առ Աստուած հաւատը, վստահութիւնը, որ սրբում է մեր միտքն ու հոգին եսական տարրերից և դէպի անձնուիրութիւն մղում: Այդ հաւատն է քրիստոնէական ամենաբարձր բարոյականութեան և սիրոյ աղբիւրը: Մտքի և բանականութեան վերայ հիմնուած բարոյականութիւնն ու կատարելատիպը եսական է, և մենք տեսանք, որ հեթանոսական փիլիսոփայութեան բարոյականութիւնը որքան և նուրբ, եսական էր: Մարդկային միտքն ու կամքը որոշ չափով միայն կարող են մեզ օգնել, նոքա յուսալի չեն դժուարութեան ժամանակ: Սառը դատողութեամբ ձեռք բերած սկզբունքները հեշտութեամբ չքանում են եսական աւելի զօրեղ և հաճելի ցանկութիւնների հանդէպ. որովհետև այդպիսի բարոյականութեան մէջ դերակշռող տարրը միշտ օգտի տեսակէտն է: Բայց հաւատից բղխած բարոյականութիւնը ներքին մղման. և ոգևորութեան արդիւնք է և ուրեմն ազատ եսական տարրերից. հաւատ, ոչ դէպի հրաշալիքը, ոչ դէպի բնութեան օրէնքներից դուրս երևոյթները, սնոտիապաշտութիւնը, այլ դէպի բարին, ազնիւը, մաքուրը, վսեմը և նոցա վերջնական յաղթութիւնը: Այդպիսի հաւատը նուիրական մի զգացում է, հոգու մի վիճակ, որ թէև բնագիտական օրէնքների և քիմիական վերլուծութիւնների չի ենթարկւում, բայց բնական է վերոյիշեալ բացատրութեան համեմատ: Այդ զգացումը յատուկ է մարդկային հոգուն նուազ կամ առաւել չափերով, ուստի և. այստեղից բղխած բարոյականութիւնը իւր աստիճանաւորութիւններով մատչելի յետին մշակից սկսած մինչև գիտութեան և գեղարուեստի բարձր ներկայացուցիչներին:

Մի ուրիշ հանգամանք ևս պէտք է չեշտենք քրիստոնէական կատարելութեան գերազանցութիւնը պարզե-

լու համար։ Մինչդեռ փիլիսոփայութեան մէջ կատարելութեան գաղափարն ու նախատիպը տեսական էր, այստեղ թանձրացած է և ընդհանուրին ըմբռնելի դարձած Յիսուս Քրիստոսի անձնաւորութեամբ։ Աստուծոյ կատարելութեան նմանել ինքնըստինքեան վերացական մի միտք է. մեզանից իւրաքանչիւրը պատկերացնում է այն իւր կրթութեան, հոգեկան կարողութիւնների և յատկութիւնների համեմատ, բայց Քրիստոսի կեանքն ու օրինակը պարզում է մեզ, թէ ինչ է նշանակում և ինչպէս պէտք է երկնաւոր կատարելութեան ձգտել։ Նորա շաւղով ընթանալ, նշանակում է բարոյական կատարելութեան ուղիղ պողոտան ընտրել, դէպի անսահման կատարելութեան վերջնական նպատակը։ Ոմանք քրիստոնէութիւնը համեմատելով միւս կրօնների և փիլիսոփայութիւնների հետ մի առանձին նորութիւն չեն գտել նորա մէջ։ Սխալ է ի հարկէ այդ հայեացքը. որովհետև կրօնի, սիրոյ և բարոյականութեան ըմբռնողութիւնը քրիստոնէութեան մէջ բոլորովին տարբեր է, քան բառերով նման հնչող կրօնների և փիլիսոփայութիւնների մէջ, բայց իսկական նորութիւնը և քրիստոնէութեան բերած անգնահատելի գանձը Քրիստոսի անձնաւորութիւնն է։ Այս նորութիւնը ոչ մի տեղ գտնել չենք կարող, ինչքան էլ տակն ու վրայ անենք պատմութիւնը։ Ի զուր չէ քրիստոնէութիւնը նորա անձնաւորութեան մէջ աստուածային կատարելութիւնը մարմնացած տեսել։ Մեղքը, մեր կեանքի փոթորկալից ծովի ամենից վտանգաւոր ալիքը, ոչնչացած է նորա սրբութեան և մաքրութեան առաջ։ Բայց չենք կարող ասել, թէ նա ազատ էր տագնապներից. փորձութեան պատմութիւնը, աւելի գեղեցիկ Գեթսեմանի պարտիզի տեսարանը, ակներև ապացոյց է, որ նա ներքին, հզօր մաքառումների ենթակայ է եղել. և յաղթող է հանդիսացել առ Հայրն ունեցած հաւատով, և հնազանդութեամբ։ Այդ անապական աղբիւրից է բղխում և նորա սէրը դէպի ընկերը, դէպի իւր շրջապատողները։ Բոլոր թշուառները, աղքատները, անարգուածներն ու մեղաւորները չեն վրի-

պում Նորա ուշադրութիւնից։ Նա որոնում է նոյն իսկ կորուսեալին գտնելու համար, այն ինչ Ստոյիկեան իմաստունի համար արհամարհելի կլինէր այդ, իսկ նրբաճաշակ Եպիկուրեանի վայելչութեան զգացմունքին հակառակ։ Բայց մարդկային հոգին թանկ է Քրիստոսի համար հաւասարապէս, լինի այն իշխանի, ռամկի, թէ ստրկի մէջ. որովհետև բոլոր մարդիկ նոյն Հօր որդիքն են և իւր եղբայրները։ Սիրոյ, գթութեան օրէնքի վերայ հիմնուած Նոր Թագաւորութեան մէջ հաւասար քաղաքացիներ են ամենքը։ Եւ Նորա կարեկից ձայնը իւր մօտ է կանչում բոլոր տառապեալներին, վաստակածներին, բեռան տակ ճնշուածներին, ոչ միայն մխիթարութիւն և սփոփանք տալու, այլ և դէպի երկնաւոր Հօր կատարելութիւնն առաջնորդելու։

«Եղերուք կատարեալք, որպէս և երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է»։

Գ. վ. Յովսէփեան

ՀՈՂԻ ՎԱՇԽԱՌՈՒԹԻՒՆԸ

«Վա՜յ այնոցիկ, որ յարեն տուն ի տուն և ագարակ առ ագարակ մերձեցուցանեն, զի զընկերին հանիցեն։ Մի՞թէ միայն բնակելոց իցէք յերկրի»։ Եսայի Ե. 8.

Հողը ժողովրդին է պատկանում և նրա համար է, որ մարդիկ շնչեն նրա վրայ, ապրեն աշխատեն ու զուարճանան։ Այն հողը, որ որևիցէ կերպով չի նպաստում մարդու կեանքին, կորցնում է իւր նշանակութիւնը։ Չենք ուզում ասել թէ հողը մասնաւոր սեպհականութիւն լինել չէ կարող, բայց պէտք է պահանջել, որ հողատիրութիւնը ընկերօջ ապրուստի ու զարգացման արդելք

չհանդիսանայ։ Այս է Եսայիի նման պատկառելի մարգարէի կարծիքը։

Ի հարկէ մենք Եսայի մարգարէից շատ առաջ ենք գնացել. մենք տանում ենք, որ ահագին հողեր մասնաւոր մարդկանց ձեռքում լինի և շատ տնատեղիներ սրա նրա իշխանութեան տակ։ Մենք չենք վրդովւում այլ ևս, երբ տեսնում ենք մեծ անմշակ տարածութիւններ, որոնց վրայ հարիւրաւոր ու հազարաւոր ընտանիքներ բնակուել կարող էին, բայց տէրը դեռ չի կամենում վաճառել, որպէս զի գինը մի քիչ աւելի բարձրացնէ։ Մեր հովիւները չեն քարոզում այլ ևս Իսրայէլի մարգարէի հնացած կարծիքի մասին. Հին կտակարանի այդօրինակ մտքերը մարդկային պատուիրան են համարում և չեն ուզում ոչինչ լսել հին մարգարէական ոգու մասին։ Այն հաւատը, որ Աստուածաշնչի այդպիսի խօսքերը բառացի էր ընդունում, չկայ այլ ևս. ամենաուղղափառ հաւատացողներն անգամ մարգարէի կռիւը հողատէրերի դէմ համարում են միայն այն ժամանակուայ դրութեան հետևանք։ Ի՞նչ կարիք կայ, որ մարդ գործնական դժուարութիւնների մէջ ձգի իրեն Ս. Գրքի խօսքերի համար։ Դրա համար չէ Ս. Գիրքը, այլ սեղանի վրայ դնելու ու առաջը մոմ վառելու. չկայ այլ ևս այն հարցը թէ ինչպէս կարգաւորենք մեր կեանքը, որ Աստծուն հաճելի լինի։

Եսային ի հարկէ իւր ժամանակի պայմանների մասին է խօսում և իւր ժամանակակիցների հետ, այնպէս որ կարելի էր մտածել, որ նրա «Վճիռը» մեր ժամանակի համար անտեղի կլինի։ Բայց իւրաքանչիւր ուժեղ զգացմունքի տէր մարդու խղճի ձայնը հէնց այս դէպքում պիտի ասէ՝ Եսային իրաւունք ունի։ Նա իրաւունք ունի, որովհետև այսօր էլ մեր մէջ մարդիկ են ապրում, «որոնց համար տեղ չկայ» կարծես երկրի վրայ։ Տեղի այս կըրճատումը մի բռնութիւն է մարդկանց կեանքի վրայ. տեսէք, ինչքան դեղին են նեղ ծակերում ապրած երեխաները. տեսէք, որքան աստանդական ու տեղազուրկ է խեղճ ժողովուրդն այնտեղ, ուր արտը արտին են կպցնում,

մինչև մեծ կալուածքներ կազմելը։ Դու՛րս արի, Եսայի՛, քո գերեզմանից և օգնի՛ր մեզ, որ ապրում ենք այժմ անարդարութեան դէմ կռիւ մղելով։

Մեր հովիւները թող քաղաքականութեամբ չզբաղուեն, բայց իրական կեանքը լուսաւորեն աստուածային լուսով։ Այնպէս է թւում շատ անգամ, թէ սպանութիւնը, շնութիւնն ու գողութիւնը միակ մեղքերն են, որոնց դէմ արժէ մաքառել. Հապա ագահութի՞ւնը. Հապա Աստուծոյ պարգևների եսական չահագործումը. այստեղ ոչ մի մարգարէ ոչինչ ասել չի՞ կարող. Թէ՞ դուք ասում էք, բայց լսող չկայ։ Եթէ այդպէս է, խնդրում եմ, միանգամ էլ ասացէք, ասացէք բարձրաձայն, այնպէս ազատ թիւրիմացութիւններից, ինչպէս Եսային։

Հին ու Նոր կտակարանների մէջ մի ներքին զօրեղ հակումն կայ դէպի հասարակ ժողովուրդը։ Սուրբ Գիրքը կուսակցական է. Նա այնպէս կոկիկ ու ողորկ չէ, այլ ունի ներքին նկատելի կոշտութիւններ։ Մի՞թէ սա մի կարևոր հանգամանք չէ բոլոր քրիստոնեայ լինել ցանկացողների համար։ Շատ մեծ վտանգ կայ, որ Սիրոյ աւետարանը մարդիկ անտարբերութեան աւետարան դարձնեն։ Հին մարդկային ծուլութիւնն ու երկչոտութիւնն է այստեղ կրկին, որ թագչում է սիրոյ վարագուրի յետևը, որպէս զի ստիպուած չլինի բնաւորութիւն ցոյց տալու։ Անշու՛շտ մեղաւորին էլ սիրում է Աստուած, հողի վաչխառութեամբ զբաղուողին էլ, բայց նրա յանցանքի դէմ իր առաջին մեծ մարգարէի բերանով մի «Վա՜յ» է նետում, որ այսօր էլ կպչում է և զգացւում։ Վա՜յ նրանց, որոնք տունը տանն են կպցնում ու արտը արտին, ընկերին զրկելու համար։

Փոխադրեց Ֆ. Նաումանից՝ Ե. վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Ս. Սինոդը՝ Լուսաւորութեան Նախարարի հետ խորհրդակցելուց յետոյ՝ մի շրջաբերականով դիմում է բոլոր առաջնորդներին յայտնելով հետեւեալը.

1) *Հոգեւոր կոչումն ունեցող անձինք չեն կարող մտնել համալսարանի բժշկական և բնագիտական բաժինները. որովհետեւ անարիւն զոհի պաշտօնեաներին անյարմար է անդամահատութեան գործողութիւններ և բնագիտական աշխատանքներ, որ արիւն է թափւում:*

2) *Ներկայումս համալսարաններում և այլ աշխարհական դպրոցներում սովորող սրբազնագործ պաշտօնեայք ենթարկւում են հոգեւորականների համար սահմանուած հսկողութեան:*

3) *Հրամանագրել, որ համալսարաններում ընդունուած քահանաները ներկայանան իրենց մեծաւորներին և ընդունեն իրենց վերաբերեալ կարգադրութիւնները. այլ և պահանջել որ բժշկական կամ բնագիտական բաժանմունքների քահանաները փոխեն իրենց առարկաները կամ վերադառնան իրենց տեղերը:*

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կարդինալները երբեք երբեք են մեռնում. *Այս մի հին ռոմանական հաւատալիք է. որ կազմուել է երևի դարերի ընթացքում: Այսօր էլ կարծես այս հաւատքը հաստատելու համար երկուսը՝ Ադամի և Տրիպիւնի կարդինալները աւելացել են «առհարս իւրեանց», իսկ Կազետտին մահամերձ դրութեան մէջ է: Հարկաւ ռոմանական հաւատալիքը ծիրանաւորի վերջին յոյսն էլ ջնջել է: Արդէն պապը՝ ըստ սովորութեան ուղարկել է իւր առաքելական վերջին օրհնութիւնը. Առաջին երկսի դրամական կարողութիւնը 1½ միլ. ֆրանկի է հասնում և կտակած է պապին. իսկ վերջինիս կտակը, որ հաւատացած են թէ պատրաստ է, դեռ. յայտնի չէ:*

Յակամայից մարդ համեմատում է այս բարձրաստիճան եկեղեցականների նիւթական կարողութիւնը Հայոց՝ վերջերս

հանդուցեալ՝ երկու եպիսկոպոսների՝ Նահապետեան և Սեդրաքեան սրբազանների՝ կարողութեան հետ։

Այնտեղ միլիոնի հասնող կարողութիւն, իսկ մեզանում հազիւ մի քանի հազարի, (Սեդրաքեանի)։ Եւ դեռ մեզանում կան կոյր պատմաբաններ, որ Հայոց եկեղեցու վրայ Կաթոլիկ եկեղեցու պրիզմայով են նայում և ըստ այնմ քննադատում և հայհոյում։

Մի այլ կողմ ևս որ ուշադրութեան արժանի է. այդ այն է, որ Կաթոլիկ եկեղեցականները իրենց միլիոնները ոչ թէ այս կամ այն ազգականին կամ նպատակի են գործ ածում, այլ եկեղեցու բարօրութեան և զարգացման։ Որքան էլ հարուստ և զօրեղ է Կաթոլիկ եկեղեցին, որքան և նախանձախնդիր է ամէն մի պաշտօնեայ նրա զօրութեան և փառքին, սակայն այն ընդհանուր թշնամական տրամադրութիւնը այժմեան քաղաքական կեանքում մի կողմից և ուրիշ եկեղեցիների՝ մրցութիւնը միւս՝ միշտ հոգսի առարկայ են դարձնում կարդինալները և յատկապէս պապը և ահա այստեղից էլ այն դրամական մեծ նպաստները, որ հարկաւոր է լայնածաւալ եկեղեցու կարիքների համար։ Անցեալից գիտենք, որ հանգուցեալ Լեոն պապը օրական 100,000-ներ էր ստանում և նոյնչափ էլ գործադրում։

Դաւանութեան խնդիրը Ֆրանսիական Սենատում։

Բրիանի ճառի ամփոփումը. Նոր օրէնքը արդէն երկիրը ընդունել է. ինչպէս որ փաստերը բաւականաչափ ապացուցեցին, ընդունել են այն թէ ականաւոր՝ համոզմամբ կաթոլիկ աշխարհականներ և թէ ֆրանսիական հոգևորականութեան մեծամասնութիւնը։ Հակառակորդները գործում են միայն պապի ճնշմամբ։ Այնպէս որ օրէնքը սենատում բոլորովին կերպարանափոխ դրութեամբ է ներկայանում. և եթէ կատարեալ էլ չերևայ, սակայն նախարարութիւնը խնդրում է էլի ենթարկել քուէարկութեան, այն անհրաժեշտ պատճառով, որ եկեղեցին անիշխանութիւնից դուրս գայ։

Եւ կստեղծուի այն ժամանակ մի դրութիւն, երբ եկեղեցին կդադարի ապօրինի լինելուց, նոյն իսկ եթէ ցանկայ այնպէս լինել։ Իսկ եթէ պապը կցանկայ կաթոլիկութիւնը մղել ծայրայեղութեանց, թող հրամայէ քահանաներին թողնել եկեղեցիները և մասնաւոր կերպով սուրբ խորհուրդները կատարել։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ 1906 թուին

Ռուսահայոց բաժնի եկեղեցու համար 1906 թուականը բաղդաւոր նորութեամբ սկսուեցաւ. ոչ միայն նախընթաց տարուայ օգոստոսին կայսերական հրովարտակը վերադարձնում էր Հ. եկեղեցուց առնուած ուսումնարաններն ու կալուածները, այլ և Կովկասի բարեացակամ Տ. փոխարքան՝ Վարանցով-Դաշկով՝ հրատարակել էր իւր ժամանակաւոր կանոնները Հ. եկեղեցիների գոյքերի կառավարութեան մասին: Եկեղեցիների գոյքերի կառավարութեան գործը յանձնուում էր ծխական հոգաբարձութիւններին, որոնք պէտք է ընտրուէին համայնքի կողմից և երեցփոխի հետ կառավարէին եկեղեցու կալուածներն ու եկամուտները, այլ և հոգ տանէին հիմնել դպրոցներ, հիւանդանոցներ, ապաստարաններ և ուրիշ բարեգործական հաստատութիւններ: Ժամանակաւոր կանոնները թոյլ էին տալիս մինչև իսկ ազատ տուրք նշանակել ծխականների վերայ միանուագ կամ մշտական, եթէ եկեղեցու սովորական եկամուտները բաւական չլինէին վերոյիշեալ բարենպատակ հաստատութիւնների պահպանութեան համար: Պէտք է մանէր կանոնաւոր հաշուետուութիւն ծխական ժողովներում և ապա առաջնորդի առաջ: Ուրախութեան զգացումով միայն կարող էր լցուել Ազգային Եկեղեցու վերակենդանութեան և պայծառութեան բարեկամների սրտերը. հնարաւորութիւն էր շնորհուած վերջապէս ծխական համայնքը կազմակերպել քրիստոնէութեան նախկին դարերի հետևողութեամբ և եկեղեցին կարող էր առանց դժուարութեան ձգտել իւր կրթական, բարեգործական և քաղաքակրթական առաքելութեան: Անհնարին չէր թուում նոյն իսկ բարեփոխել տալ պոլոժենիան և Հ. եկեղեցին վերածել իւր նախկին կանոնական, ինքնիշխան կառավարութեան:

Բայց տարաբաղդաբար ժամանակն ուրիշ էր. մենք հարկաւոր խոհեմութիւնն ու եկեղեցասիրութիւնը չունեցանք օգտուելու այդ յարմարութիւնից, և ոչ միայն անպտուղ անցաւ այս մի տարին ստեղծագործող բարեկարգութեան և արդիւնաւորութեան տեսակէտից, այլ մտքերի այնպիսի շփոթութիւններ յառաջ եկան, որ երկար տարիներ պէտք է աշխատել կարգ և

կանոնաւորութիւն ստեղծելու համար եկեղեցական ներքին կառավարութեան մէջ: Միակ աչքի ընկնող երևոյթը փակուած դպրոցների բացումն էր, բայց այն էլ ոչ անկարօտ բարեկարգութեան: Այն շարժումը, որ բռնել էր ամբողջ Ռուսաստանը, համել էր և հայ հասարակութեան: Այդ բնական էր. հայ ժողովուրդն ևս իւր պահանջներն ու կարիքներն ունէր պետական վերակազմութեան հարցում, ուրեմն և պէտք է իւր ձայնը բարձրացնէր, ցոյց տար այն վէրքերը, որ յառաջ էին եկել սխալ հասկացուած կառավարութեան խստութիւնների տակ: Բայց քաղաքական տհասութիւնը մեր ազգի յատկութիւններից մէկն է. մենք ոչ միայն չկարողացանք քաղաքական որոշ ծրագիր ստեղծել մեր ձգտումների և ցանկութիւնների համար ընդհանուր շարժումների տեսակէտով, այլ ընդհակառակ մեր բոլոր ուժերն ուղղեցինք եկեղեցու դէմ, որ դարերի բերմունքով արիւնաքամ լինելուց յետոյ, ընկել է նոր պայմանների մէջ և դեռ չի կարողացել իւր հաստատուն պարզացման և յառաջադիմութեան ուղին գտնել: Մաքերի շփոթն ու քաոսը, որ յատուկ է յեղափոխական շրջաններին, փոխադրուեցաւ եկեղեցական սահմանների մէջ և կատարուեցան այնպիսի խռովութիւններ, որ մեր կատարեալ տհասութեան կենդանի վկայական կարող է լինել:

Առաջին խլրտումն սկսուեցաւ դպրոցական հաստատութիւններից. Պատանի սերունդը իւր տաք և դեռ ևս չկազմակերպուած բնաւորութեամբ, բնական է, որ յեղափոխական շարժման ազդեցութեան տակ հարկաւոր չափաւորութիւնն ու սառնութիւնը չպահէր և անցնէր պարտքի և իրաւանց սահմանից: Պետական դպրոցների հետևողութեամբ, ուր քաղաքական նպատակներով դասադուլներ էին սարքում, արուեստական կերպով շարժումներ սկսուեցան և մեր դպրոցներում: Վերին աստիճանի բնորոշ էր հասարակութեան և մամուլի որոշ մասի բռնած դիրքը. աշակերտական բոլոր յանցանքները պաշտպանութիւն էին վայելում, և միամիտ ու անփորձ պատանիները կարծում էին, թէ մեծ հերոսութիւն են անում, երբեմն մինչև յիմարութեան հասցրած անկարգութիւններով: Անշուշտ կարող էին սխալներ գործել և ուսուցիչներն ու վարչութիւնները, բայց աշակերտների պաշտպանութիւնն այնքան ակներև էր, որ նոյն իսկ հնարաւորութիւն չէին տալիս ստոյգ և հասարակութեան մոլորեցնող լուրերը հերքել: Միշտ մեղաւոր էին վարչութիւններն ու վարժապետները, արդար և իրաւացի աշակերտութիւնը: Ոչ ոք չէր ուզում մտածել, թէ ուր է տանում աշակերտների յաճախ անիրագործելի պահանջներն ու սանձարձա-

կութիւնները։ Գործին մօտիկ կանգնած և տեղեակ մարդկանց համար պարզ էր, թէ ինչպէս այլասերւում է մատաղ սերունդը։ Պատանեկական ոգին հասակում սովորում էին նոքա միջոցների մէջ խտրութիւն չդնել, ստութեան և կեղծիքի ճանապարհն ընտրել։ Կուսակցական միտումները խոշոր դեր էին կատարում այս շարժման մէջ։ Աւելորդ ենք համարում փաստերը թուել, քանի որ կատարուած խռովութիւնների գոնէ մի չնչին մասը արձանագրել է լրագրութիւնը և դեռ թարմ է յիշողութեան մէջ։ Տարերային հոսանքը տանում էր ամենքին. նոյն իսկ գիտակցող և սրտացաւ մարդիկ չէին համարձակւում իրենց բողոքն արձակել, և եթէ բողոքում էին, մնում էր առանց ուշադրութեան։ Եւ դորա հետեւանքն էր այն խառնակ վիճակը, որի մէջ գտնւում էին մեր թեմական դպրոցներն ու ճեմարանը. Շուշուայ, Ն. Նախիջևանի խայտառակ պատմութիւններն ու վերին դասարանների ժամանակաւոր փակումը յայտնի են ամենքին. Ներսիսեան և Երևանի թեմական դպրանոցների, ճեմարանի խլրտումներն ու անհանգիստ կեանքը, Յովնանեան դպրոցի կուսակցական հողի վերայ եղած պայքարն ու կատարուած անարդարութիւնները նոյնպէս։ Կարգապահութեան և բարոյական դաստիարակութեան վերջին նշոյլներն անգամ անհետանալու վրայ են մեր դպրոցներից. տարակոյսներով ենք լցուած և այս տարուայ համար։

Այս տարտամ վիճակից հանելու համար էր, որ Ն. Սրբութիւնն արձակեց իւր Մարտի կոնդակը։ Պէտք է բոլոր թեմերից հաւաքուէին դպրոցների թուի համեմատ մօտ 60 հոգի ուսուցիչներ, մանկավարժներ և հոգաբարձուներ, դպրոցական գործին և ցաւերին տեղեակ մարդիկ և ծրագիր ու կառավարութեան միատեսակ կանոններ մշակէին դպրոցական կեանքն ու յառաջադիմութիւնը կարգաւորելու համար։ Թեմական դպրոցներն ու ճեմարանը նախօրօք ծրագիրներ պիտի պատրաստէին իրենց ներկայացուցիչների հետ ուղարկելու. նախանցեալ տարի Տփխիսում հաստատուած Յանձնաժողովն էլ պիտի ներկայացնէր իւր մշակած ծրագիրը, որ քննութեան բուն նիւթը պիտի լինէր ստորին դասարանների կամ ծխական դպրոցների համար։ Ծրագրուած էր ուրեմն մի լուրջ գործ, բայց նմանողութեան յատկութիւնը որոշ խաւերի մէջ գերադաս հանդիսացաւ զգաստութեան և բանականութեան թելադրութիւններից։ Յեղափոխական տարրերի կողմից բոյկոտ էր հրատարակուած Դումայի դէմ, նոյնը պէտք էր անել և մանկավարժական բնաւորութիւն ունեցող մի համագումարի համար։ Մեզանում միշտ նկատելի է այս երևոյթը. բաւական է, որոշ խմբի մարդիկ մի բան արին և հրապարակեցին լրագրութեան մէջ, ամէն կողմից կսկսեն

արձագանք տալ առանց քննութեան ենթարկելու խնդիրը, առաջ տանելու առաջարկութեան օգտակարութիւնն ու խելացիութիւնը: Տասնեակ օրինակներով կարելի է հաստատել այս իրողութիւնը: Տփխիսում որոշ մարդիկ սկսեցին ժողովներ գումարել, բողոքներ արտայայտել և ահա նոյն բողոքները իսկական արձագանքի նման կրկնուեցան և ուրիշ տեղերից: Ծիծաղելին այն է, որ բողոքները լինում էին որպէս թէ ուսուցիչների կողմից, բայց իսկապէս թերթերի աշխատակիցներ էին և առաւելապէս որոշ կուսակցութեան սպասաւորներ: Նկատելի էր, որ հակաեկեղեցական տրամադրութիւն էր ստեղծւում, եկեղեցու պաշտօնէութեան դէմ պայքար: Չէ՞ որ Ռուսաստանում բիւրօկրատիայի դէմ էին մաքառում, պէտք էր նման բան մեր մէջ ևս ստեղծել: Պէտք էր խլել դպրոցները հոգևորականութեան ձեռքից, նոքա խեղդել են հայ ժողովրդին իրանց ճիրաններում, պէտք էր ազատել հայ ժողովրդին ստրկութիւնից: Պատմական հեռու և մօտիկ անցեալ, օրէնք, աւանդութիւն, հոգևոր իշխանութիւն, ամեն ինչ մոռացուած էր: Մտքերի քաոսը տաքգլուխների գլխում օդային ամրոցներ էր կառուցանում խորտակած կարգերի փոխարէն: Հայոց եկեղեցին և եկեղեցականութիւնը վնասակար էր հրատարակւում հայ ժողովրդի համար: Օ՜, թշուառ տգիտութիւն և միակողմանի հասկացողութիւն, ինչե՜ր չէք կարող ստեղծել: Այն եկեղեցին, որ իւր սպասաւորներով 1600 տարուայ ընթացքում ոչ մի ուրիշ շահ չի ունեցել, բայց եթէ իւր ժողովրդի, հօտի շահերը միայն, այն եկեղեցին և սպասաւորութիւնը, որ հայ ժողովրդի քաղաքակրթութեան, հոգևոր կեանքի սրբարանն է եղել, որ ինքը զրկուել է շքեղութիւնից ու զարդից, որ իւր սպասաւորներին սեղմել է նիւթական խիստ չափաւորութեան սահմանների մէջ, որպէս զի իւր եկամուտները իւր որդոց խեղճութիւնը մեղմացնելու և դաստիարակութեան գործի համար գործադրէ, վնասակար էր հրատարակւում: Ո՞վ կարող է ասել, որ մենք արատ չենք ունեցել մեր երկար պատմական կեանքում և չունինք այժմ, բայց նոյն իսկ լուսաւոր արեգակն էլ սև բծեր ունի. Հայոց եկեղեցին և եկեղեցականութիւնը հայ ժողովրդի համար ճնշող բեռ և վնասակար քարոզել, մի մոլորութիւն է, որ օտար հովերի ազդեցութեան տակ կարող էր ծագել, հայրենի պատմութեան և քաղաքակրթութեան անծանօթ գլուխներում:

Մինչ այս մինչ այն հրատարակուած էին մայիսի 10-ի, յունիսի 7-ի և 30-ի կոնդակները: Տարաբաղդաբար մտքերի շփոթութիւնը պաշտօնական կերպարանք էր ստացել: Ս. Հայրա-

պետի ծերութիւնն ու տկարութիւնը հարթել էր որոշ կուսակցութեան և անձանց ասպարէզը, մանաւանդ Դիւանապետը շատ երիտասարդ, անփորձ և ազդեցութեան ենթարկուած անձն էր։ Միջոցներ էին ձեռք առնուած, որպէս զի Ն. Սրբութեան ուշադրութիւնը երբեք իսկական դրութեան վերայ չհրաւիրուի. մենք չենք կարող կանգ առնել այս տխուր պատմութեան մանրամասնութիւնների վերայ. յիշենք միայն, որ այդ միջոցների վերջաբանը 65 ամեայ ծերունի արքեպիսկոպոսի անլուր անպատուութիւնն էր Թքակոծութեան եղանակով։ Էջմիածնի միաբանների մի մասը բացակայ էր, հազիւ մնացածներից 14 հոգի համարձակուել էին Ն. Սրբութեան մի թուղթ ներկայացնել և հրաւիրել նորա ուշադրութիւնը։ Բայց ինքնամոռացութեան հասած զօրեղ հոսանքը իւրն էր անում. ոչ ոք չէր ուզում իրեն հաշիւ տալ, որ մի հարուածով ոտքի տակ էր դրւում Եկեղեցու դարաւոր պատմութիւնն ու իրաւունքը. եպիսկոպոսը նոյնչափ ձայն ունէր եկեղեցական գործերի մէջ, որչափ մի մատաղահաս օրիորդ, գիւղացի կամ դեղջկուհի։ Հայրապետական մի կոնդակով որոշուած էր այնպիսի կարևոր նշանակութիւն ունեցող խնդիրներ, որ ընդհանուր ազգային-եկեղեցական ժողովին էր վերապահուած դարերի ընթացքում։ «Ռուսահայոց եկեղեցական գործերի կարգադրիչ և տնօրէն» էր հանդիսանում այսպէս կոչուած Կեդրոնական ժողովը, «որ կարող էր քննութեան ենթարկել և որոշումներ տալ Ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ», իսկ այդ ժողովը կազմուած էր ոչ թէ եկեղեցականների և ժողովրդի ներկայացուցչութիւնից, ինչպէս մեր եկեղեցու պատմութեան ոգին էր թելադրում, այլ սոսկ ծայրայեղ կուսակցութեան։ Կային և մի քանի վարդապետներ ժողովականների մէջ, բայց չնչին բացառութեամբ նման հովերով տարուած կամ որոշ «մանդատներով» եկած։

Ն. Սրբութիւնն սպասում էր թէ Կեդրոնական ժողովը միջոցներ պիտի ցոյց տայ կարգաւորելու մեր դպրոցական և տնտեսական գործերը չափաւորութեան սահմանների մէջ, բայց նորա անդամներն իրենց բոլոր ոյժը լարել էին միայն անուաբեկ անելու եկեղեցու հեղինակութիւնն ու ոչնչացնելու նորա սպասաւորութեան նշանակութիւնը։ Նոքա չխնայեցին նոյն իսկ ծերունի Հայրապետի պատիւը։ Մարդիկ եկել էին յեղափոխելու ամէն ինչ, և այդ ձգտումը այնպիսի մի ուղղութիւն էր ստանում, որ Հայոց եկեղեցու կենսունակութիւնը արմատից կտրել էր սպառնում։ Դպրոց, վարչութիւն, կալուած ամեն ինչ պէտք է խլել եկեղեցու պաշտօնէութեան ձեռքից. չէ՞ որ Ֆրան-

ոխայում էլ պետութիւնը նոյնն է անում. Նրանց պէտք է թողնել միայն ծէսեր կատարելու իրաւունքը. եկեղեցու կալուածները պէտք է առնել և բաժանել կարօտ ժողովրդին՝ հային և թուրքին անխտիր: Եկեղեցու պաշտօնէութեան գործի ընդունակ, ուսում և գիտութիւն ունեցող տարրը կհեռանայ ինքնըստինքեան, կմնան նրանք, որոնք ծէս և ժամապաշտութիւն կատարելուց աւելի ուրիշ բանի ընդունակ չեն: Ցանկալին էլ հէնց այս է. կրթուած մասը ընդդիմադիր ոյժ է: Այս մտքերն էին յեղյեղւում պատգամաւորների ճառերի մէջ, և այս էր նրանց բերած բարեփոխութիւնը: Եկեղեցին այլ ևս քաղաքակրթական դեր չունէր կատարելու: Համբակ և անփորձ երիտասարդ պատգամաւորներից շատերն աշխատում էին դերազանցել մէկ մէկու իրենց երեխայամիտ, ծայրայեղ և իրագործման հնարաւորութիւնից զուրկ ծրագիրներով և առաջարկներով. ի զուր ոմանք աշխատում էին բարեփոխութեան հարցն աւելի իրական հողի վերայ դնել, չեշտելով օրէնքը, եկեղեցու աւանդութիւնը և վերջապէս ժողովի գումարման պայմաններն ու որակը: Փոքրամասնութիւնն ստիպուած էր հեռանալ. ժողովուրդը նկատելով պատգամաւորների մեծամասնութեան բռնած ծայրայեղ և վնասակար ընթացքը, սկսեց բողոքների տարափ թափել Էջմիածին: Ժողովականներն իրենք էլ, գոնէ համեմատաբար խոհեմներն ու փորձառուներն սկսել էին զգալ, որ իրենք շատ հեռու են գնացել, և պակասում է իրենց մէջ առողջ և ստեղծագործող ոգին, և հիասթափութիւնը զօրանում էր հետզհետէ: Կառավարութեան միջամտութիւնն ու փակումը արտաքին կողմից Կեդրոնական ժողովի պատուի փրկութիւնն էր: Կեդրոնական ժողովը դրական համարեա ոչինչ չստեղծեց, բայց բացասական մեծ նշանակութիւն ունեցաւ շփոթուած մտքերն աւելի շփոթելու:

Մեր ներքին կեանքի մէջ մի ուրիշ կարևոր երևոյթ միաբանական ժողովի գումարումն էր: Պոլոժենիայի հաստատութիւնից յետոյ Էջմիածնի միաբանութիւնը զրկուած է եղել վանական և եկեղեցական գործերի մէջ որ և է մասնակցութիւն ունենալուց: Հասարակ վանքերի վանահայրերն իրենց վանական գործերը կարգադրելու իրաւունք ունէին, իսկ Էջմիածնի միաբանութիւնը ոչ մի իրաւունք և ձայն չունէր նոյն իսկ բուն վանական, տնտեսական խնդիրների մէջ: Այս անբնական վիճակը շատ զգալի էր բաւական ժամանակից ի վեր, մի քանի անգամ փորձեր էին եղած և կոնդակներ արձակուած վանական ժողովները նորոգելու, բայց ապարդիւն: Այս անգամ շատ

պահպանողական հանգամանքներ եղան միաբանական ժողովի նորոգման ուխտը, ուստի և միաբաններից շատերը հաւատացած էին, թէ տեւական կլինի այն և արդիւնաւոր:

Վերջին ժամանակներս էջմիածնի եկամուտներն սկսել են նուազել. կալուածների վերադարձից յետոյ ժողովրդի արտաքոյ կարգի նուիրաբերութիւնները բնականաբար դադարել էին, իսկ մաքերի չվճարութեան, որի զարգացման նպաստում էին նոյն իսկ վեղար կրող և եկեղեցու շնորհն անարժան կերպով վայելող անհատներ, և վերջապէս հայ-թիւրքական ընդհարումից յառաջ եկած տնտեսական քայքայման և աղքատութեան պատճառով, դադարեցին նաև վիճակային արդեանց գանձումը: Ամիսներով ճեմարանի ուսուցիչներն ու ծառաները ռոճիկ չեն ստանում, միաբանները՝ հանդերձագին: Մ. Աթոռը ակնյայտնի կերպով սնանկութեան է դիմում, եթէ պայմաններն այսպէս երկար շարունակուին: Այս ծանր երեւոյթը ոչ Ս. Հայրապետի, ոչ Սինոդի և ոչ միաբանութեան ուշադրութիւնից վրիպել կարող էր, և ահա № 1022 կոնդակով սեպտ. 4-ին վեհափառ Կաթողիկոսը հրամայում էր Սինոդի նախագահ Գէորգ արքեպիսկոպոսին միաբանական ժողով գումարել և խորհել Մ. Աթոռի տնտեսական կացութեան մասին: Միաբանութիւնը իր կողմից մի յանձնաժողով ընտրեց, որի կազմած նախագիծն ու եզրակացութիւնները սեպտ. 22-ի և 27-ի ժողովներում քննութեան ենթարկուեց և ընդունուեց: Այդ փաստաթուղթն արդէն տպուած է «Արարատ»-ի անցեալ թուականի օգոստոս—նոյեմբեր տետրակի մէջ: Միաբանական ժողովի կողմից հաւանութիւն գտած և Ս. Հայրապետի կողմից հաստատուած էական սկզբունքներն էին. վանական տնտեսական գործերի կառավարութիւնն անցնում էր միաբանական ժողովին, որ պէտք է պարբերական լինէր, վանական հաստատութիւնների պաշտօնեաները, պէտք է ընտրուէին միաբանութեան կողմից և առաջարկուէին Ն. Սրբութեան ի հաստատութիւն և վերջապէս Դիւանապետից զատ, որին նշանակում է Ս. Կաթողիկոսը, պիտի ընտրուէր երեք հոգուց բաղկացած դիւանական խորհուրդ: Այս բոլոր ընտրութիւնները կատարուած էին և հաստատուած: Միաբանութիւնը հաւատացած էր, որ գործերի կանոնաւորութեան համար կարող կլինէր այդ միջոցներով աջակցութիւն ցոյց տալ և հետզհետէ ընդլայնել խմբական գործակցութեան: Բայց տարաբաղդաբար այս օգտակար նորութիւնը խափանուեցաւ յայտնի պատմութեան պատճառով, որ, հասկանալի է, այստեղ երկար լուսաբանել չենք կարող:

Ընդհանուր նշանակութիւն ունեցող հարցերից մէկն է և

քահանաների կրկնամուսնութեան խնդիրը։ Ս. Հայրապետի Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Մաղաքիա արքեպիսկոպոսին ուղղած № 1155 կոնդակից (Արարատ Օգոստ.—Նոյեմբ.) երևում է, որ այրիացեալ քահանաներից և ժողովրդականներից շատերը դիմել են Ն. Սրբութեան քահանաների կրկին ամուսնութիւնը թոյլատրելու համար։ Մի խնդիր, որ միայն ընդհանրական Հայրապետի անօրինութեամբ լուծում ստանալ չէր կարող, ուստի և Ն. Սրբութիւնը դիմել է Կիլիկիոյ Ս. կաթուղիկոսին և Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ ամենապատիւ պատրիարքներին, թեմակալ առաջնորդներին, որպէս զի ժողով գումարելով իրենց կարծիքը յայտնեն։ Այս հարցը կապուած լինելով եկեղեցական աւանդութիւնների և կանոնների հետ, իսկապէս միայն ընդհանուր եկեղեցական-ազգային ժողովը կարող էր լուծել, բայց ժամանակի դժուարութիւններն ի նկատի ունենալով, ընդհանրական Հայրապետը այս միջոցն է գտել եկեղեցու լրութեան կարծիքն իմանալու։ Ուղիղ ճանապարհ, որ անշուշտ պիտի գործադրուէր նաև մայիսի և յունիսի աւելի կարևոր նշանակութիւն ունեցող կարգադրութիւնների համար, եթէ արգելառիթ պայմաններ չլինէին և իրերն իրենց բնական ընթացքով գնային։ Այժմ արդէն ստացուած են Սսոյ կաթուղիկոսի, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքների պատասխանները. Երուսաղէմի պատրիարքը խորհրդակցել է իւր եպիսկոպոսների և ծայրագոյն վարդապետների հետ, իսկ Կ. Պոլսոյ պատրիարքը կրօնական ժողովի հետ, և բոլորն էլ բացասական պատասխան են տուել։ Ռուսաստանի թեմակալ առաջնորդներից դեռ ևս պատասխան չէ ստացուած և խնդիրը մնացել է անլուծելի։ Սակայն մի բան, որ վերին աստիճանի անպատշաճ էր, այդ հ. Ներսէս վարդ. Մելիք-Թանգեանի ժամանակից առաջ յայտնած դատողութիւնն էր։ Ամեն ոք իրաւունք ունի իւր կարծիքը յայտնել ընդհանուր նշանակութիւն ունեցող մի այսպիսի խնդրի համար, ուրեմն և Ներսէս վարդապետը, սակայն ընդհանրական Հայրապետի դիւանապետին անվայել էր, պաշտօնական թղթերը դեռ ևս հրապարակի վերայ չդրուած, իւր Հայրապետի աթոռակիցների գրութիւնները այնպէս անարգանօք քննութեան ենթարկել։ Շտապելն առհասարակ լրջմտութեան նշան չէ, յատկապէս այնպիսի պատասխանատու և ծանր պաշտօն կատարող անձի համար, որպիսին դիւանապետն է։ Մենք կդառնանք այս կարևոր խնդրին։

Նախանցեալ տարին 1906 թուի համար արդէն ժառանգութիւն էր թողել հայ թուրքական ընդհարումներն ու երկու դրացի ազգերի թշնամութիւնը։ Տարաբաղդաբար շարունակուեցաւ բաւական ժամանակ և անցեալ տարուայ մէջ. ու-

միայն հարիւրաւոր զոհեր ընկան երկու կողմից, այլ և ժողովուրդը յետին ծայր աղքատութեան դուռը հասաւ: Երկու տարի շարունակ կանոնաւոր երկրագործութեան ու աշխատանքի դադարելու պատճառով՝ սպառուած է գիւղացու ամբողջ խնայողութիւնը և սովը անխուսափելի է դարձել ընդհարման գաւառներում, եթէ քրիստոնէական և եղբայրական սիրոյ զգացումը օգնութեան չհասնէ: Ս. Հայրապետի կոնդակով հաստատուած Նպաստամատոյց յանձնաժողովը Տ. Գարեգին արքեպիսկոպոսի նախագահութեամբ բաւական խոշոր՝ մօտ 200,000 ռուբլու օգնութիւն է ուղարկել աղէտի ենթարկուած գաւառներին, հաց կամ դրամական նպաստ, սերմացու, գնելով եզներ, գութան, բայց աղէտի թշուառութեան մեծութեան առաջ շատ չնչին էր այդ օգնութիւնը: Այդ պատճառով Ն. Սրբութեան առանձին կոնդակով Յուսիկ վարդ. Զոհրաբեան, Յանձնաժողովի երկու անդամների հետ ուղարկուեցաւ Ռուսաստան հանգանակութիւն անելու: Պատգամաւորութիւնն արդէն եղել է Մոսկուայում և Պետերբուրգում և այժմ գտնւում է Ն. Նախիջևանում, ուր մասնախմբեր են կազմւում նպաստներ ժողովելու: Յուսանք, թէ պատգամաւորութեան առաքելութիւնը արդիւնաւոր կլինի և զոհաբերութեան վարժուած հայ ժողովուրդը իւր լուման կուղարկէ սովալլուկ հայ եղբայրների կեանքը փրկելու համար:

Մեր եկեղեցական կեանքի էական գծերն ամբողջացնելու համար մի քանի խօսք ևս Տաճկահայոց մասին: Անցեալ տարուայ ընթացքում նոքա ևս ազատ չեն եղել վշտերից. չհաշուելով սովորական, ընդհանուր դժուար կացութիւնը, որին ենթարկուած են մեր եղբայրները հարևան պետութեան մէջ, նոքա ընդունել են և արտաքոյ կարգի հարուածներ: Տաճկաց կառավարութիւնը ծրագրել էր առնել Կիլիկիոյ կաթուղիկոսական աթոռին պատկանող մի մեծ կալուած՝ Թլանի Ագարակը, որի հասոյթը այդ Աթոռի գլխաւոր աղբիւրն է կազմում: Այս նիւթական կորստի հետ ծրագրուած էր և բարոյական հարուած. յափշտակուած կալուածի վերայ պիտի բնակուէին աւազակաբարոյ Չերքէզներ, որոնց ներկայութիւնը հայ տարրի համար նորանոր աղէտների աղբիւր պիտի լինէր: Ս. Կաթուղիկոսն ստիպուած էր հրաժարուել, հրաժարուեցաւ նաև Կ. Պոլսոյ Պատրիարքը. Թուրք կառավարութիւնը մի անգամ ևս աւելորդ սրտնեղութիւն պատճառելուց յետոյ, իւր մտադրութիւնից յետ կացաւ:

Մի երկրորդ խոշոր իրողութիւն Տաճկահայոց ներքին կեանքի մէջ ազգային ժողովի վերակազմութիւնն էր: 1894 թ. յետոյ

ազգային ժողով չէր գումարուած. 1896 թուին միայն Տաճեան փաշայի ջանքերով հնարաւոր էր եղել մի մասնաւոր ժողով գումարել և ընտրել ներկայ պատրիարք Տ. Մաղաքիա արքեպիսկոպոսին: Այնուհետև կառավարութիւնը ոչ միայն թոյլ չէր տալիս ժողով գումարել, այլ և պահանջում էր Սահմանադրութիւնը վերացնել, որ ոչ այլ ինչ էր նշանակում, բայց եթէ ոչնչացնել այն: Սրբազան Օրմանեանի խոհեմութեանն ենք պարտական ոչ միայն Սահմանադրութեան մինչև այժմ անփոփոխ պահպանութիւնը, այլ և անցեալ տարի Ազգային ժողովի գումարումն ու վարչութիւնների վերակազմութիւնը: Տաճկահայոց դրութեան մասին մի թեթև գաղափար կարելի է կազմել այն իրողութեամբ, որ Ազգային ժողովը գումարուել է Պատրիարքարանում պատրիարքի տօնախմբութիւնը շնորհաւորելու անունով, այլապէս անհնար կլինէր կառավարութեան թոյլտուութիւնն ստանալ:

Ընթերցողներին յայտնի է, որ Գէորգ Դ. մեծագործ կաթուղիկոսի ժամանակ Սսոյ և Մ. Աթոռի յարաբերութիւնը լարուած էր: Մակար կաթուղիկոսը վերացրեց պաշտօնական գժտութիւնը, իսկ ներկայ կաթուղիկոսների մէջ սիրալիր, եղբայրական յարաբերութիւն է սկսուած: Կիլիկիոյ արժանընտիր Տ. Սահակ կաթուղիկոսը իր աթոռը բարձրանալու օրը յիշեց Էջմիածնի նախամեծար և ընդհանրական կաթուղիկոսի անունը պատարագի մէջ, և վերջ տուեց տարաձայնութեանց: Քահանաների կրկնաձեռնութեան առթիւ գրած թղթի մէջ նա դիմում է Ս. Էջմիածնի գերագահ Աթոռի Ս. Հայրապետին պատշաճաւոր յարգանքով: Այս եղբայրական և երկու կաթուղիկոսութիւնների բարեկամական յարաբերութեան շօշափելի վկան է և այն իրողութիւնը, որ Սսոյ կաթուղիկոսի հաճութեամբ երկու արժանաւոր վարդապետներ առաջնորդ են ընտրուած Կիլիկիոյ թեմերի համար, Տ. Մուշեղ Ադանայի և Տ. Խորէն Մարաշի համար: Առաջինն արդէն եպիսկոպոս է ձեռնադրուած Կիլիկիոյ Ս. կաթուղիկոսի ձեռքով, երկրորդն էլ երևի նոյն օրհնութեան կարժանանայ: Կիլիկիոյ եպիսկոպոսները պաշտօն կարող են կատարել միայն Սսոյ թեմերում. Էջմիածնի թեմերն անցնելու ժամանակ հպատակութեան խոստում պիտի տան ընդհանրական Հայրապետին և Էջմիածնի միաբան ընդունուին:

Տաճկահայոց եկեղեցական կեանքը բարեբաղդաբար ազատ է եղել ներքին ալեկոծութիւններից և ուրախ ենք, որ նոյն իսկ բարեկարգութեան նշաններ է ցոյց տուել, ի հարկէ հնարաւորութեան սահմանների մէջ: Ս. Փրկչի հիւանդանոցը, Տաճկահայոց եկեղեցական-ազգային հաստատութիւնների թագն ու

պտակը, ստացել է Նոր եկեղեցի և մի ամբողջ յարկաբաժին իւր կահ կարասիքով Յակոբեանների առատ նուիրաբերութեան շնորհիւ: Նպաստից յանձնաժողովը օգնութեան է հասել հեռաւոր գաւառներում հիմնուած որբանոցներին և դպրոցներին և կեդրոնական վարչութիւնն աշխատել է դպրոցների յառաջադիմութեան վերայ առանձին ուշադրութիւն դարձնել: Արմաշու Դպրեվանքը ծաղկում է պատրիարքի բարձր հսկողութեան տակ և անցեալ տարի ևս եկեղեցուն վեց երիտասարդ նորընծայ կուսակրօն է տուել: Այդ հաստատութիւնն առ հասարակ սկսել է կարևոր դեր խաղալ մեր հոգևոր կեանքի մէջ, 1890—1906 տարիների ընթացքում տուել է 28 կուսակրօն եկեղեցական, որոնցից շատերը առաջնորդական և քարոզչական պաշտօններ են կատարում և մօտ 200 ուսուցիչ: Եկեղեցական երգեցողութիւնն ևս սկսել է բարեկարգուել. անցեալ տարուայ վերջերին սկսել են երգել պատրիարքական մայր և միւս եկեղեցիների մէջ հանգուցեալ Եկմալեանի պատարագը:

Դ. վ. Յովսէփեան

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յունուարի մէկին Մայր տաճարում հայրապետական մաղթանք կատարուեցաւ Նոր տարուայ առթիւ։ Պատարագից յետոյ միաբանութիւնը ներկայացաւ Ս. Հայրապետին շնորհաւորելու Նոր տարին։

Յունուարի 6-ին միաբանութիւնը, ճեմարանի ուսուցչական խումբը, Սինոդի պրոկուրորը իւր ստորադրեալ ծառայողներով, գաւառապետը և միւս աստիճանաւորները ներկայացան Ն. Սրբութեան շնորհաւորելու Քրիստոսի ծննդեան մեծ տօնը, իսկ 15-ին Ն. Սրբութեան անուանակոչութիւնը։

Մայր Աթոռի տնտեսական անձուկ վիճակի պատճառով ժամանակաւորապէս փակուած են տպարանն ու հացատունը։ Արձակուած ծառաները ստացել են նախօ-

րօք երեք ամսուայ ռոճիկ, իսկ աղքատները դրամական նպաստ ստանան չափաւոր քանակութեամբ։ Այս կարգադրութեամբ յոյս կայ տարեկան բաւական խոշոր գումար տնտեսել և այն ձրիակերութեան առաջն առնել, որ կատարւում էր սխալ հասկացուած բարեգործութեան անուան տակ։ Վանքի Ագարակում ևս պէտք է վերջանայ անասնապահութիւնը, և միայն հարկաւոր չափով լծկան անասուններ պահուին թանգագին բոյսեր ցանելու համար։

† ՆԱՀԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Հոկտեմբերի 1-ին Ն. Նախիջևանում իւր մահկանացուն կնքեց մեր միաբանութեան բազմաշխատ և նշանաւոր անդամներից մէկը՝ Նահապետ եպիսկոպոս Նահապետեան՝ 58 տարեկան հասակում։ Նորա մահուան լուրն անսպասելի էր, որովհետև մարմնով առողջ էր և օրինակելի իւր կեանքի կանոնաւորութեամբ։ Բայց Աստուծոյ կամքն էր, որ նա կնքէ իւր երկրաւորը մի այնպիսի ժամանակ, երբ Մայր Աթոռը, մեր եկեղեցին, այդպիսի եկեղեցականների ամենամեծ կարիքն ունէր, երբ մեր եկեղեցական ներքին կեանքի շփոթութեան ժամանակ միակ մարդն էր, որ իւր ներկայութեամբ պատկառանք էր ներշնչում և կարգ ու կանոն թելադրում իւր շրջապատողներին։ Նահապետ եպիսկոպոսի մահուամբ գերեզման է իջնում մեր եկեղեցու վերակենդանութեան և պայծառութեան գաղափարի լաւագոյն ներկայացուցիչներից մէկը։

Նա ծնուած էր 1848 թ. Նոյեմբերի 28-ին Ախալցխայում՝ ազնուական ընտանիքի մէջ։ Նորա հայրն էր Գասպար Նահապետեան, որ պետական ծառայութեան մէջ բարձր աստիճանների հասնելուց յետոյ՝ կեանքի վերջին տարիները Թիֆլիսում եկեղեցու ծառայութեան նուիրեց որպէս երեցփոխ։ Սկզբնական կրթութիւնը հայրենի

յարկի տակ ստանալով միջնակարգ ուսումն աւարտեց փայլուն կերպով Թիֆլիզի առաջին գիմնազիայում, իսկ բարձրագոյնը Պետերբուրգի համալսարանում։ Պետերբուրգում նա ոչ միայն ուսումնասիրեց բնական գիտութիւններ, այլ և որպէս հանգուցեալ Եղեանի շուրջը խմբուած շրջանի անդամներից մէկը՝ ձեռք բերեց որոշ հայեացք եկեղեցու և ազգային գաղափարի համար։ Նա Պետերբուրգից վերադարձաւ 1871 թ. և նուիրուեցաւ դաստիարակչական գործունէութեան, որ նորա կեանքի էական գիծը կազմեց այլ և այլ եղանակաւորութիւններով։ Նա մէկն էր Գայեանեան օրիորդաց դպրոցի հիմնադիրներից, ուր տարիներով ձրի ուսուցչութեան պաշտօն է վարել և ոչ միայն բարոյական աջակցութիւն ցոյց տուել այդ դպրոցի ծաղկման, որ մեր մէջ առաջին և միակ օրիորդաց միջնակարգ դպրոցը դարձաւ, այլ և աշխատել է ապահովել նիւթապէս։ Նորա և միւս հիմնադիրների շնորհիւն է, որ այժմ այդ դպրոցը վերաբացուելով՝ 25 հազար րուբլու մի պատբաստ դրամագլուխ ունի։ Ապա նա վարել է երկու անգամ Ներսիսեան դպրանոցի տեսչութեան պաշտօնը։ Բայց նորա դաստիարակչական, հասարակական և եկեղեցական արդիւնաւոր գործունէութեան շրջանը կապուած է Մ. Աթոռի և նորա ճեմարանի հետ։ Գէորգ Դ. մեծագործ կաթուղիկոսը Ներսիսեան դպրանոցի տեսչութիւնից նորան էջմիածին է կանչում 1881 թ., իբր հիմնած ճեմարանի ղեկը նորան յանձնելու, և այդ ժամանակն է, որ հետզհետէ բացւում են լսարանները և ճեմարանը բարձրագոյն դպրոցի կերպարանք է ստանում։ Նորա խմբի անդամներն էին մեր դպրոցական պատմութեան մէջ նշանաւոր հանդիսացած Ս. Մանդինեան, Կ. Կոստանեան, Փ. Վարդանեան, հանգուցեալ Ս. Պալասանեան և ուրիշները։ Ճեմարանի բաղդը բոլորովին ուրիշ ընթացք կ'ստանար, եթէ տարաբաղդաբար 1882 թ. չ'մեռնէր Հիմնադիրը. Նոյն տարին պէտք է դուրս գային առաջին ընթացաւարտները, և այն ծրագիրը, որ Արշակ Նահապետեանն ունէր իւր մտքում, ճեմարանի յառաջադէմ ընթացաւարտներից արտասահ-

ման ուղարկել ուսուցիչներ պատրաստելու նպատակով և այդպիսով ապահովել ճեմարանի յառաջադիմութեան կանոնաւոր ընթացքը, ոչ միայն անկատար մնաց, այլ և ինքն էլ ստիպուած էր հեռանալ և Ներսիսեան դպրանոցի տեսչութիւնն ստանձնել, լարուած որոգայթների պատճառով։

Նորա հեռանալուց յետոյ ճեմարանը երեք տարի շարունակ անկերպարան վիճակի մէջ էր. ոչ միայն կարգապահութիւնն էր իսպառ վերացել, այլ և ընկած էր դաստիարակութիւնը և ուսումնական յառաջադիմութիւնը։ Այսպիսի պայմանների մէջ կրկին անգամ նա հրաւիրուեցաւ 1886 թուին Մակար կաթուղիկոսի օրով. Նախապետեանցի ճեմարան մտնելով, յիշում եմ, որպէս ականատես, կարծես դիւթական գաւազանով, վերականգնեց կարգն ու կանոնը. այսպէս էր նորա անձնաւորութեան հմայքը։ Սակայն նա մի ծրագիր ունէր իւր սրտում և այդ ծրագիրն էր իսկապէս նորա գործունէութեան պսակը. ի մօտոյ ծանօթ լինելով Էջմիածնի և նորա միաբանութեան վիճակին, գիտէր, թէ որն է մեր եկեղեցու վիրաւոր կողմը. պէտք էր ժամանակի պահանջի համեմատ նոր միաբանութիւն կազմել, գիտութեան միջոցներով զինուած։ Եւրոպայից և Ռուսաստանից հայութեան մէջ մտած մտաւոր շարժումը համապատասխան փոփոխութեան պահանջ պիտի դնէր և եկեղեցականութեան առաջ։ Ժառանգաւորաց դպրոցի փակմամբ հետզհետէ սպառւում էր հին եկեղեցականութիւնը. պէտք էր մտածել նոր սերնդի պատրաստութեան համար։ Այդ մի էական պահանջ էր, որի առաջ անտարբեր մնալ չէր կարելի։ Պատահական մարդկանցով հնարաւոր չէր իւր կոչման բարձրութեան վրայ կանգնած միաբանութիւն կազմել, իսկ ուսումնական մարդիկ խորշում էին քահանայութիւնից և վանականութիւնից. կեանքի արդիւնքն էր ժողովրդական այն առածը՝ «մարդ չդարձաւ, տէրտէր կ՚դառնայ»։ Նման հայեացք էր իշխում և վարդապետութեան վերաբերութեամբ, որ շարունակւում է տարաբաղդաբար և այսօր։

Պէտք էր մի դպրոց ստեղծել, որ ոչ միայն մեր դպրոցների համար ուսուցիչներ, այլ և հայ ժողովրդին և եկեղեցուն հովիւներ և վարդապետներ տար։ Եւ ահա հանգուցեալը իւր այս նուիրական գաղափարը կամենում է մարմնացնել ճեմարանի մէջ, և այդ ուղղութեամբ էլ աշխատում է ղեկավարել իւրեն յանձնած հաստատութիւնը։ Այդ գաղափարով էր, որ Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան ճեմարանի աստուածաբանական գիտութեանց դասատու հրաւիրուեց. թէպէտ և նա միամեայ դասաւանդութիւնից յետոյ՝ ստիպուած էր հեռանալ կառավարութեան որոշմամբ, բայց նորա ներկայութիւնը էական նշանակութիւն ունեցաւ մտքերի պատրաստութեան համար։ Հանգուցեալ Նահապետեանը խօսքի մարդ չէր, այլ գործի. ինչպէս նոր գաղափարների լաւագոյն ներկայացուցիչները, նա ևս անձնական օրինակով կամեցաւ կենդանի քարոզիչ լինել իւր ձգտումների։ Նա, որ իւր ազնուական ծագումով, իւր կապերով և ընդունակութիւններով աշխարհի մէջ և՛ դիրք ունէր և՛ լաւագոյն ասպարէզ, թողեց աշխարհը, որպէս զի իւր ազգին և եկեղեցուն աւելի անձնուէր կերպով ծառայել կարողանայ։ Յունիսի 17-ին 1889 թ. ծունկ չոքեց Աստուծոյ սեղանի առաջ ուխտելու, որ իւր կեանքն ու կարողութիւնը եկեղեցու սպասաւորութեանն է նուիրում։ Այդ կենդանի և տպաւորիչ օրինակին հետևեցին նորա աշակերտներից երեքը։ Աստուած իմ, ինչպիսի՜ սրբազան ոգևորութիւն էր տիրում այն ժամանակ նուիրեալների սրտում և աշակերտութեան մէջ։ Մենք յօժարութեամբ և սիրով ընդունում էինք մեզ վրայ դրուած լուծը այն գիտակցութեամբ և համոզմամբ, թէ մի նուիրական կոչումն ենք յանձն առնում, և եթէ Աստուած օրհնել կամենար մեր ուխտը, պէտք է արդիւնաւոր լինէր այն մեր հինաւուրց ազգային եկեղեցու վերակենդանութեան և պայծառութեան համար։ Այդ ոգևորութեան արդիւնքն էր, որ տարին չ՚լրացած դարձեալ չորս մատաղ սրտեր ուխտեցին եկեղեցու սպասաւորութեան նուիրուել և սարկաւագութեան աստիճան ընդունեցին։

Բայց այս ծրագրի մի մասն էր միայն. Նա կամենում էր նորաւարտ սարկաւագներից արժանաւորներին ուղարկել տալ արտասահման աստուածաբանական և միւս գիտութիւնների մէջ հմտանալու համար. որպէս զի վերադարձից յետոյ ճեմարանի դասատու լինեին և նոր սկսած գործը շարունակեն. Նա կարողացաւ Մակար կաթուղիկոսին համոզել այդ գործի համար. ուղարկուեցան առաջին երկու սարկաւագները, որոնցից մէկն աստուածաբանութիւն և միւսը երաժշտութիւն ուսումնասիրելու և մինչ պատրաստւում էր 1890 թ. երրորդին ուղարկել, ոչ միայն մեռաւ կաթուղիկոսը, այլ և ճեմարանի գլխին մի այնպիսի փոթորիկ բարձրացաւ, որ նա ստիպուած էր հեռանալ։ Նորա տուած զարկը իւր հետևանքն ունեցաւ. կ՚շարունակուէր գործը և աւելի ընդարձակ ծաւալ կ՚ստանար անշուշտ, եթէ ներքին և արտաքին պայմանները փոքր ինչ աւելի նպաստաւոր լինէին։ Հասկանալի է, որ տեղը չէ այդ աննպաստ պայմանների մասին հանգամանօրէն գրել, բայց անհրաժեշտ ենք համարում յիշել, թէ մեր եկեղեցու փրկութեան էական պայմաններից մէկը ունենալ եկեղեցականութեան պատրաստութիւնն է, որ երբեք աչքից չպէտք է թողնենք, եթէ նորա կենդանութեան և պայծառութեան համար բաբախող սիրտ ունինք։

Ճեմարանի տեսչութեան հետ նա վարում էր միևնոյն ժամանակ Ուսումնարանական յանձնաժողովի նախագահի պաշտօնը, անդամակցութեամբ պ. պ. Մանդինեանի և Կոստանեանի։ Նոցա օրով միատեսակութիւն ստեղծուեցաւ ուսումնական ծրագրի և կառավարութեան մէջ, ուսուցիչների վարձատրութեան խնդիրը որոշ չափով կարգաւորեցաւ։ Լրագրութեան և մասնաւոր կեանքի մէջ այլ և այլ բամբասանքներ և խծբծանքներ էին լինում նոցա հասցէին, բայց ի հարկէ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, թէ այն ժամանակուայ կառավարութիւնն ինչ հայեացքներ ունէր դէպի մեր դպրոցական գործը և ինչպիսի պայմանների ծնունդ էր այդ ծրագիրը։

1891 թ. Կարսի փոխանորդ նշանակուեցաւ, իսկ

1894 թ. օգոստոսի 25-ին ներկայ Ս. Կաթուղիկոսի կողմից Թիֆլիս գնաց բանակցելու Կառավարչապետի հետ՝ գաղթականների վիճակը թեթեւացնելու վերաբերութեամբ։ Իր նախընթաց արդիւնաւոր եւ հաւատարիմ գործունէութեան եւ գաղթականներին իր յաջորդութեան օրով ցոյց տուած սրտացաւ խնամքի համար 1893 թ. արժանացաւ ծաղկեայ փիլոնի, իսկ 1894 թ. վարդապետական ականակուռ խաչի։ Նոյն թուին Նոյեմբերի 20-ին ուղարկուեցաւ Շուշի աղմկուած թեմական դպրանոցը խաղաղացնելու եւ ժամանակաւոր յանձնաժողով կարգելու դպրոցի կառավարութեան համար։ Հազիւ այստեղից վերադարձած՝ դեկտեմբերի 27-ին, որպէս թարգման ուղեկցեց Ն. Սրբութեան դէպի Պետերբուրգ եւ 1895 թ. մայիսի 31-ին ներկայացաւ Ս. Կաթուղիկոսի հետ Ն. Կայսերական Մեծութեան։ Հարկ չենք համարում պարզել, թէ ինչպիսի կարեւոր դեր էր կատարում հանդուցեալը այս ամբողջ ուղեկցութեան՝ յատկապէս Պետերբուրգում եղած ժամանակ. Նա կատարում էր նաեւ Ն. Սրբութեան Դիւանատան կառավարչի եւ դաւազանակրի պաշտօնը։ Իր դիւանապետութեան ընթացքում, իսկ նրանից առաջ էլ Գէորգ եւ Մակար կաթուղիկոսների ժամանակ, հայրապետանոցի եւ կառավարութեան մէջ եղած գրագրութիւնները, հայրապետական իրաւանց, ուսումնարանների եւ կալուածների պաշտպանութեան համար գրուած լաւագոյն թղթերը նորա ձեռքով են անցած։ Դիւանապետութեան հետ 1896 թ. յունուարի 25-ից նա կատարում էր նաեւ տպարանական յանձնաժողովի նախագահի պաշտօնը։

Գալիցինի կառավարչապետութեան ժամանակ՝ 1897 թ. Նոյեմբերի 21-ին Բարձրագոյն հրամանով աքսորուեցաւ Ռոստով քաղաքը Դոնի վրայ Տ. Վահան վարդապետ Տ. Գրիգորեանի հետ։ Սկզբում նա ապրում էր իր տառապանքների ընկեր Տ. Վահան վարդապետի հետ Ն. Նախիջեւանի ս. Խաչ վանքում, իսկ յետոյ վանահայրութեան պաշտօնով տեղափոխուեցաւ Խրիմի համանուն վանքը։

Նորա աքսորը մօտ $7\frac{1}{2}$ տարի տեւեց և միայն ներկայ բարեացակամ Փոխարքայի օրով իրաւունք ստացաւ Էջմիածին վերադառնալ 1903 թ. մայիսին։

Ի տրիտուր նորա բազմաշխատ գործունէութեան նոյն թուականին, Էջմիածնի տօնին՝ արժանացաւ եպիսկոպոսական բարձր պաշտօնին, և ապա նշանակուեցաւ որպէս ներկայացուցիչ Ս. Կաթուղիկոսի՝ կառավարութիւնից ստանալու եկեղեցական կալուածներն ու դրամագլուխները։ 1906 թ. սկզբներին հաստատուեցաւ Սինոդի անդամ. Նորա գործունէութիւնը Սինոդում շատ կարճատև եղաւ, ընդամենը միայն մի քանի ամիս, բայց նորա ներկայութիւնն արդէն զգալի էր դառնում այդ հաստատութեան մէջ աւելի կենդանի և կանոնաւոր գործունէութեամբ։ Նորա վերջին գործն էր վանական հաստատութիւններին ոչ միայն ելեքտրական լոյս մատակարարել տալ և նոյն ուժով ջրաղաց շինել, այլ որ ամենից կարևորն է գետնի տակից ջուր հանել տալով վանական անջրդի և անպէտք հողերը ոռոգել և արդիւնաւորել։

Մոռացանք յիշել, որ երկու անգամ նա եղել է կաթուղիկոսութեան պատգամաւոր, առաջին անգամ 1884 թ. մայիսի 9-ին Հնդկաստանի և Պարսկաստանի հայերի կողմից, իսկ երկրորդ անգամ 1892 թ. մայիսի 3–5-ին Սեբաստիայի առաջնորդի կողմից։

Նորա գործունէութեան այս համառօտ ուրուագիծը բաւական է ցոյց տալու, թէ ինչպի՛սի արդիւնաւոր կեանք է ունեցել հանգուցեալը։ Ի՛նչ գործի և պաշտօնի մէջ էլ եղել է նա, ամեն տեղ իւր բնաւորութեան դրոշմն է թողել, օրինակելի կարգապահութիւն, պարտաճանաչութիւն, ճշդութիւն և մաքրութիւն։ Սակայն աշխարհիս անբաղդ մարդկանցից մինն էր նա. նոյն իսկ այս առաքինութիւնները կրճատեցնում էին հակառակորդների և թշնամիների ատամները։ Իսկ թշնամիներ շատ ունէր նա. մեծ մասով նորան անծանօթ, երեսը չտեսած մարդիկ, թէև յայտնի էր նա իւր քաղցրաբարոյ և հեզ բնաւորութեամբ։ Ոչ ոք այնքան տարապարտ բամբասանքի և հալածանքի չի ենթարկուել, ինչպէս նա. հալածանքի մէջ էլ կնքեց իւր մահկանացուն։

Դ. վ. Յովսէփեան

† ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊ. ՍԵԴՐԱԿԵԱՆ

(1844—1906)

Մէկը միւսի յետեւից գերեզման են իջնում Հայաստանեայց ա. եկեղեցու արժանաւորագոյն սպասաւորները։ Դեռ հազիւ էր լրացել Նահապետ եպիսկոպոսի մահուան քառասունքը, երբ Էջմիածնի միաբանութիւնը կորցրեց նաեւ Արիստակէս Արքեպիսկոպոս Սեդրակեանին՝ 62 տարեկան հասակում, մի այնպիսի ժամանակ, երբ նրանից դեռ շատ բան էր սպասւում եւ շատերի աչքը նրա վրայ էր։

1844 թուին ծնուած, պատանի Արիստակէսը իւր կրթութիւնն ստանում է Ս. Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում եւ 1861 թուին ձեռնադրւում է աւագ սարկաւագ, մանուկ հասակում որոշելով մերժել աշխարհը եւ անձնական բարիքները, հայրենի եկեղեցուն ծառայելու համար։ 1863 թուին ուղարկւում է նա սպասաւորելու Մոսկուայի Հայոց եկեղեցում, որով նրան հնարաւորութիւն է տրւում միեւնոյն ժամանակ աւելի կատարելագործելու իւր ստացած ուսումը։ Երկար չի մնում Արիստակէս սարկաւագը Մոսկուայում. 1865 թ.-ին նա կրկին Էջմիածնումն է եւ արդէն կուսակրօն քահանայի ձեռնադրութիւնն ստացած. մի տարի յետոյ ստանում է նաեւ վարդապետութեան մասնաւոր աստիճան եւ 1867 թուականի Հոկտեմբերի 20-ին, դեռ եւս երիտասարդ հասակում, նշանակւում է Ղարաբաղի թեմական առաջնորդի պաշտօնակատար։ Սակայն այդ ծանր եւ պատասխանատու պաշտօնը վարում է նա հազիւ երկու շաբաթ. նոյն թուի Նոյեմբերի 4-ին Սինօդը նշանակում է նրան Տաթեւի յաջորդ եւ այդ պաշտօնը վարում է նա մինչեւ 1869 թուի ապրիլի 6-ը, երբ Արիստակէս վարդապետը նշանակւում է Հին-Նախիջեւանի Ս. Կարապետի վանահայր։

Երբ բացւում է Ս. Էջմիածնի ճեմարանը, Արիստակէս վարդապետը իբրեւ ժամանակի գիտուն եւ ուսումնասէր

միաբաններից մէկը, ուրիշների հետ հիմնադիր երջանկայիշատակ Տ. Գէորգ կաթուղիկոսի կոնդակով ուղարկւում է ճեմարան և նշանակւում Հայոց պատմութեան ուսուցիչ, 1874 թ-ի Սեպտեմբերի 5-ին:

Սակայն Արիստակէս վարդապետ Սեդրակեանը երկար ժամանակ ուսուցիչ չէ մնում. 1876 թ.-ի Յուլիսի 23-ին նշանակւում է Ղարաբաղի թեմի կառավարիչ և ստանալով իւր եռանդուն ծառայութեան համար իբրև պարգև ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք, մեկնում է իւր նոր պաշտօնատեղին, ուր և ստանում է 1877 թուին նաև վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք: 1881 թ.-ի Մարտի 3-ին արձակւում է նա իւր պաշտօնից և նոյն թուին Սինօդի հրամանով նշանակւում է Ս. Գայիանէի վանահայր: Հետևեալ տարին, 1882 թուի Մայիսի 9-ին, Արիստակէս վարդապետն արժանանում է եպիսկոպոսական բարձր աստիճանին և արդէն 1883 թ.-ի Յունուարի 7-ին հաստատւում է Վրաստանի և Իմերեթիայի թեմի Հայոց առաջնորդ: Բաւական երկար, մինչև 1889 թուի Նոյեմբերի 10-ը, Արիստակէս եպիսկոպոսը մնում է այդ պաշտօնում և կարողանում է այնքան դիրք ու հեղինակութիւն ձեռք բերել, որ շատ անգամ հայ թերթերում յիշուել է նրա անունը իբրև Տփխիսի թեմի ամենալաւ առաջնորդի անունը, մանաւանդ նրա անմիջական յաջորդների օրով: Իբրև անպայման կարգապահ և ճշտապահ մի անձնաւորութիւն նա պատկառանք է ներշնչել իւր շրջապատին ու կարգ ու կանոնի սովորեցրել նրանց, որոնք մեծ հակումն ունէին դէպի անկարգութիւնն ու անճշտութիւնը: Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանն է հիմնել նաև քահանաների ապահովութեան գանձարանը Տփխիսում: Իւր համակրութիւնն ու սէրն արտայայտելու համար դէպի իւր առաջնորդը, Տփխիսի ժողովուրդը հրաժեշտի ժամանակ ներկայացրեց նրան մի բաւական խոշոր գումար, մօտ 6000 րուբլի, գործադրութիւնը թողնելով նրա բարեհայեցողութեան:

1891 թուի Սեպտեմբերի 19-ին Արիստակէս եպիսկո-

պոս Սեդրակեանը հաստատւում է Սինօդի անդամ և սկսում է, Հայրապետական Աթոռի թափուր եղած ժամանակ՝ Տեղակալ Երեմիա եպիսկոպոսի օրով շատ մեծ դեր կատարել Ս. Էջմիածնի կառավարութեան գործում: Սինօդի անդամ, միևնոյն ժամանակ նաև Ճեմարանի տեսուչ՝ նա մասնակցութիւն ունէր բոլոր գործերի մէջ և ուղղութիւն էր տալիս ամբողջ կառավարութեանը: 1893 թուի Ապրիլի 21-ին Սինօդի օրագրութեամբ նշանակւում է Ս. Շողակաթի վանահայր, բայց հազիւ վանահայրութիւնն ստանձնած, գալիս է ներկայ Վեհափառ Կաթուղիկոսի հաստատութեան լուրը, և Յունիսի 21-ին Սինօդը որոշում է, ուրիշների հետ ուղարկել նաև Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին իբրև պատուիրակ՝ Երուսաղէմից Նորահաստատ Հայրապետին Ս. Էջմիածին ուղեկցելու համար:

Էջմիածին վերադառնալուց յետոյ շատ ժամանակ չանցած, $18^{93}/_{94}$ ուսումնական տարուայ սկզբին նա ստիպուած եղաւ հրաժարուել Ճեմարանի տեսչութիւնից և այնուհետև քաշուած կեանք էր վարում իւր վանքում, մինչև որ 1895 թ.-ին Յունիսի 8-ին հաստատուեց Աստրախանի թեմի առաջնորդ և մեկնեց իւր նոր պաշտօնատեղին, որտեղից այլ ևս վիճակուած չէր նրան Ս. Էջմիածին վերադառնալ: 10 տարուց աւելի կառավարեց նա Աստրախանի թեմը և նրա մահն ու թաղումն ապացուցեց, որ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը կարողացել էր այստեղ էլ սէր ու պատկառանք ներշնչել շրջապատին դէպի իւր անձնաւորութիւնը: Նրա եռանդուն ջանքերին է պարտական Աստրախանի թեմը իւր թեմական դպրանոցը:

Վերջին ամիսները նրան տեսնողները պատմում էին, որ նա շատ դառնացած է եղել ու վշտացած Հայոց եկեղեցու անփառունակ վիճակն ու եկեղեցական կարգ ու կանոնի կատարեալ կազմալուծումը տեսնելով. և ուրիշ կերպ դժուար էր սպասել Հայոց եկեղեցուն հաւատարիմ, Ս. Էջմիածնի հին ժառանգաւորաց դպրոցի ոգւով կրթութիւն ստացած մի անկեղծ հոգևորականից, ինչպիսին էր հանգուցեալ Արիստակէս Արքեպիսկոպոս Սեդրակեանը:

Արիստակէս Արքեպիսկոպոս Սեդրակեանը բացի աչքի ընկնող հասարակական գործունէութիւնից, աշխատել է իւրովսանն ծառայութիւն մատուցանել նաև հայկական գրականութեանն ու պատմութեանը։ Տեղը չէ այստեղ գնահատութեան ենթարկել հանգուցեալ Սրբազանի գրական և պատմական երկերի արժէքը. ինչ որ կարողացել է, այն է արել նա. և իւր ստացած ուսման համեմատութեամբ բաւական արժէքաւոր են նրա երկերը։

Ինչպէս Արիստակէս արքեպիսկոպոսի ամբողջ գործունէութիւնը, այնպէս էլ նրա գրական աշխատանքները երկու մասի են բաժանւում. հասարակական և ուսումնական։ Իբրև ջերմ պաշտպան ուսեալ հոգևորականութիւն ունենալու խնդրին, նա բաւական բան ունի գրած այդ մասին։ Աչքի է ընկնում այս մասում նաև նրա «ամուսնական խնդիրներ»ի շուրջը գրած գիրքը։ Իսկ իբրև ուսումնական մարդ նա հաւաքել է ժողովրդական բանաստեղծութեան սիրուն նշխարներ և հրատարակել «Փնար Մշեցոց և Վանեցոց» վերնագրով, թարգմանել է Դրեպերի աշխատութիւնը, գրել է իւր ազգական Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը և վերջապէս մի ընդարձակ հատոր՝ «Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը»։

Ցաւում ենք, որ հնարաւորութիւն չունենք տալու հանգուցեալ Սրբազանի ընդարձակ բնութագիրը, որովհետև անձամբ ծանօթ չենք եղել նրա հետ. ցանկալի էր, որ այս մահացուցակը գրէր հանգուցեալին մօտիկ ծանօթ և բարեկամ համարուած մէկը, բայց վերջին րոպէին մեզ վիճակուեցաւ այդ պարտքը կատարել։ Այսքանը միայն կասենք նրա մասին, որ նա մի լուրջ, սակաւախօս, պարտաճանաչ և պատկառանք ներշնչող անձնաւորութիւն էր։ Շատ հետաքրքրական է, որ հանգուցեալ սրբազանը նոյնպիսի տպաւորութիւն է արել երիտասարդ ժամանակ, նուրբ դիտողութեան տէր Վահան վարդապետ Բաստամեանի վրայ։ Վերջինիս յիշատակարանի մէջ ժամանակի երիտասարդ միաբաններից գովասանութեան արժանի են համարուած միայն երկու հոգի՝ Սուքիաս վարդապետ Պարզեանցը և Արիստակէս վարդապետ Սեդրակեանցը։

Երուանդ վարդապետ.

ՄՈՒԶԱՖԷՐ-ԷԴԴԻՆ ՇԱՀԻ ՄԱՀԸ

Վաղուց էին շրջում լուրեր Իրանի պետի անյուսալի հիւանդութեան մասին. և պարսիկներից յետոյ ոչ ոք այնքան հետաքրքրութեամբ չի հետևել Շահի առողջութեան լուրին, քան Հայոց ազգը: Եւ այս շատ հասկանալի է. Վեհապետի գահ բարձրանալու օրից նա առանձին խնամք է ցոյց տուել Հայոց ազգի այն մնացորդին, որ Նորա բարձր հովանաւորութեան տակն է եղել: Քաջալերել է Հայոց դպրոցները, խրախուսել ամէն մի յառաջադիմական քայլ. թատրոն, բարեգործական ընկերութիւն, եկեղեցի Նորա հովանաւորութիւնն են վայելել:

Յիշենք արդեօք այն սրտագին բարեկամութիւնը, որ ցոյց էր տալիս դէպի Էջմիածնի Գահակալը և այն բարեկամական հաւաստիքը, որ առիթը ներկայացրած ժամանակ չէր զլացել: Անձամբ այցելեց Էջմիածինը, 1897-ի աշնանը երբ վերադառնում էր Եւրոպայից: Իսկ Նորա մարդասիրութեան և բարեացակամութեան ամենամեծ ապացոյցը՝ այս վերջին երկու տարուայ դրացիասպան կռիւների ժամանակ կատարեալ անաչառ և աչալուրջ վերաբերմունքն էր:

Այնքան լարուած ու դրսի ու ներսի դրդումներին նա անյողդողդ մնաց և միայն Մեշետի խիստ պատժով մի անգամ ընդ միշտ վերջ տուեց սպանութեանց ու կոտորածներին, որին այնքան սովոր էին Պարսկաստանի ցեղերից շատերը:

Եւ ինչ զարմանք, եթէ Կովկասի բոլոր հայաշատ կենտրոններում հայերը հոգեհանգիստներով և ցաւակցական հեռագիրներով ցոյց են տալիս այն յարգանքը, որ տածում էին դէպի Շահն-շահը և վկայում են հանգուցեալի ճշմարիտ մարդասէր հոգին:

Որքա՜ն քիչ բան է հարկաւոր ժողովրդի անկեղծ սէրը գրաւելու համար և որքա՜ն քչերն են այս պատուին արժանանում:

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Պատրիարքարանի Ելմտական Յանձնաժողովը, որ պաշտօն ունի Պատրիարքարանի 4000 ոսկիի բացը գոցել և պիւտճէն հաւասարակշռել, առաջարկած էր բարեսէր ազգայիններու դիմում ընել այդ բացը գոցել կարենալու համար, ճիշտ ինչպէս անկէ առաջ ըրած էր Յունաց Պատրիարքարանը։ Խառն Ժողովը իր վերջին նիստերէն մէկուն մէջ յարմար դատեր իր մէջէն հինգ աշխարհական անձերու յանձնել բարեսէրներու ըլլալիք դիմումը։ Այդ անձերը առևտրական հրապարակին վրայ ծանօթ, վստահելի ու յարգելի անձնաւորութիւններ ըլլալով, կը յուսացուի որ իրենց ազդեցիկ դիրքով պիտի կարենան յաջողութիւն մը ձեռք բերել և Պատրիարքարանը ազատել ծանր բեռէ մը, որ կը ճնշէր տարիներէ ի վեր։

Հանգուցեալ Գաբրիէլին Նպր. Սրուանձտեանց, ինչպէս յայտնի է, 1000 ոսկիի կտակ մը ըրած էր, Վանայ մէջ հիւանդանոց մը կառուցուելու համար։ Այդ գումարը 1893ին Կեդր. Վարչութեան կողմէ յանձնուած է Բերայի Պարտուց Բարձման և Կալուածոց Յանձնաժողովին հսկողութեան 5 բաղադրեալ տոկոսով։ Այժմ այդ 1000 ոսկի մայր դրամագլխին վրայ 13 տարուան մէջ (1893—905) 861 ոսկի տոկոս մը աւելցած է, 1861 ոսկի պատրաստ գումար մը կայ տրամադրելի այդ նպատակին համար։

Խառն Ժողովը իր վերջին նստին մէջ նկատի առնելով Հիւանդանոցի մը շինութեան մասին Վանայ Առաջնորդարանէն եկած նամակները, որոշեց գրել Առաջնորդական Փոխանորդ Տ. Մեսրոպ քհ. Ճանիկեանի, որպէս զի Տեղւոյն Գաւառ. Ժողովին հետ նիստ մը գումարելով, տեղական պայմաններուն համաձայն նպատակայարմար ծրագիր մը պատրաստեն, տեղւոյն աղքատ հիւանդներուն գործը հաստատուն հիման մը վրայ դրուելու համար։ Այս առթիւ տեղեկութիւն պիտի ուզուի նաև թէ քանի՞ բժիշկ կայ քաղաքին մէջ և յարակից կարգ մը տեղեկութիւններ։

—Դեկտ. 3-ին Ս. Պատրիարքը օծել է Ս Փրկչի ազգային հիւանդանոցի նորաշէն մատուռը, որի ծախսը հոգացել են

Կարապետ և Ագաթան Թահթապրուննեանները իրենց վաղամեռ եղբօր յիշատակին, և Նախագահել Յակոբեանների առատ նուիրաբերութեամբ շինուած և կահաւորուած բաժնի հանդիսաւոր բացման: Նորոգուած է նաև Խորասանճեանի յիշատակին նուիրուած դեղարանը, իսկ Գարամանեան Յակոբ էֆ-ի այրին և ուդիքը նուիրել են մի հականեխիչ մեքենայ: Յակոբեան յարկաբաժնի բացման հանդիսի ժամանակ Մարտէն էֆ. Յակոբեան խոստացել է հոգալ Ջլախտաւորներին երաժշտութեամբ բժշկելու համար լինելիք ծախսերը, իսկ ուրիշները 300 ոսկու չափ նուիրաբերութիւն են արել, որով կովեր պիտի գնուին հիւանդներին մաքուր կաթ մատակարարելու համար:

Դեկտ. 25-ին Ստեփաննոս Նախասարկաւագի և վկային տօնին, Ս. Պատրիարք Օրմանեանն անձամբ սարկաւագութեան աստիճան է տուել Դպրեվանքի 6 նուիրեալների, որոնք իրենց տեսուչ Տ. Մեսրոպ վարդապետ Նարոյեանի հետ Արմաշից Պոլիս էին եկել: Նորընծաները նոյն ամսի 29 ին իրենց տեսչի հետ կրկին վերադարձել են Արմաշ:

Եւրոպա գտնուող հարուստ հայ մը, որ Պոլիս 12,000 ոսկիի արժողութեամբ կալուած մը գնելով զայն յետ իր մահուանը Ազգային Հիւանդանոցին պիտի նուիրէ, ինքը անզաւակ ըլլալով, գրած է, թէ ինք 12,000 ոսկիէն ոչ աւելի, ոչ նուազ գումար մը տալ կը յօժարի և թէ պէտք է որ գնելի կալուածը հարիւրին վեց եկամուտ տայ: Ուրիշի մը հետ ընկերակցութեամբ աւելի մեծարժէք կալուած մը գնելու ալ չէ յօժարած:

Կ. Պոլսոյ եկեղեցիներու և բարեգործական հաստատութեանց վաքֆ կալուածներուն թիւրք կառավարութեան կողմէն գրաւման սպառնալիքը Պոլսոյ բոլոր մտքերը կը խռովէ: Պատրիարքարան գումարուող քննիչ յանձնաժողով մը այժմ զբաղած է զանազան թաղերէ եկած կալուածական ցուցակները քննելով և խորհրդակցութիւններ կատարելով:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը, ինչպէս գրած էինք, մէկ քանի եկեղեց. և կրթ. խնդիրներու առթիւ նամակներ գրած էր Ազգ. Պատրիարքարան: Այս նամակներէն մէկուն մէջ Ն. Ս. Օծու-

թիւն նկարագրելով Սսոյ վանքին վիճակը՝ սենեակներուն փլփլած ըլլալը, վանքին շուրջը գտնուող մեծ պարսպապատին կիսովին փլած ըլլալը և այլ կարևոր նորոգութիւններ, որոնք անհրաժեշտ են, մանաւանդ ձմրան սա եղանակին մէջ, հաշիւ մը ներկայացուցած է, որուն ամբողջ գումարը կը յանգի մօտ 20-22,000 *ոսկիի: Խառն ժողովը իր վերջին նիստին մէջ թէև կարդաց այս նամակը և ինքն ալ ընդունեց պէտքը այդ նորոգութիւններուն, սակայն առ ի չգոյէ նիւթական միջոցներու, առ այժմ որոշեց Նպաստից Յանձնաժողովոյն կողմէ հաւաքուած և Կիլիկիոյ վանքին համար բարեսէր ազգայիններէ նուիրուած դրամէն, որ պահ տրուած է Քաղ. Ժողովոյ անդամ և ծանօթ դրամատէր Արշակ էֆ. Գարակէօզեանի քով,* 900 *ոսկի ղրկել Ն. Ս. Օծութեան՝ Պատրիարքական գրով մը:*

ԵԳԻՊՏԱՀԱՅՔ

Հայկական Բ. Ը. Միութիւնը. *Հայկ. բարեգործական ընդհ. Միութեան դէկտ* 6*ի նիստին առթիւ մեր ստացած տեղեկութեանց նայելով, կը յուսացուի որ Միութիւնը, գործադրուած ջանքերու շնորհիւ, շատ չանցած Եւրոպական և Ամերիկեան հայաբնակ կեդրոններու մէջ Մասնաճիւղեր պիտի ունենայ:*

Ուրախ ենք որ Կիպրոսի փոքրաթիւ հայ գաղութը ամենէն առաջ կը շարժի. տեղւոյն Հայուհեաց ընկերութիւնը խոստացած է Միութեան՝ տարին 600 *ղուրուշ նպաստ տալ, որով պիտի կրնայ ընդհանուր ժողովին մէջ ձայն ունենալ:*

—Նախապէս հրատարակած էինք, թէ Փարիզէն Միութեան 400 *եգիպտական ոսկի նուէր մը տրուած էր իբր Մուտքի վճարում: Կ'իմանանք թէ, նուիրատուն՝ այրի Տիկին Լ. Քալփամաճեանն է (քոյր Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի):*

Եգիպտաբնակ ուրիշ հայ անձնաւորութիւն մըն ալ խոստացած է 300 *եգիպ. ոսկի մուտքի տոմս նուիրել:*

Գահիրէի *ազգայիններէն Պետրոս էֆ. Կարապետեան, որ ինչպէս գրեցինք* 600 *ոսկի նուիրել խոստացած էր Վանայ Երամեան վարժարանին, որոշած է այդ գումարը մաս առ մաս ղրկել, այսինքն ամէն տարի հարիւրական ոսկի:*

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՐՔ

Des heiligen Irenäus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung in armenischer Version entdeckt, Herausgegben u. ins deutsche übersetzt v. Lic. Dr. Karapet Ter-Mèkèrttschian u. Lic. Dr. Erwand Ter-Minassiantz mit einem Nachhwort u. Anmerkungen v. Adolf Harnack, Leipzig, 1907.

Ս. ԻՐԵՆԻՈՍԻ (Երանոս) Ցոյց առաքելական Քարոզութեանն՝ գտնուած հայերէն թարգմանութեամբ. Հրատարակեցին և թարգմանեցին գերմաներէն Լից. դր. Կարապետ (վարդապետ) Տ. Մկրտչեան և Լից. դր. Երուանդ (վարդապետ) Տ. Մինասեան, Ադոլֆ Հառնակի վերջաբանով և ծանօթութիւններով: Լայպցիգ, 1907 թ. գինն է 6 մարկ կամ 2 ր. 80 կ.

Մի կարևոր գիրք նշանակեցինք այս գրախօսութեան վերնագիրը, որովհետև իրօք կարևոր նորութիւն է ոչ միայն Հայոց եկեղեցու թարգմանական մատենագրութեան, այլ ընդհանուր քրիստոնէութեան համար: Գրութեան հեղինակն է երկրորդ դարու երկրորդ կիսում ապրող Լուգդունի կամ ներկայ Լիոնի նշանաւոր երէց և ապա նոյն համայնքի եպիսկոպոս Իրենիոս: Նա ծննդեամբ Փոքր Ասիայից էր և առաքեալների հետևող Պօղիկարպոս Զմիւռնացու աշակերտը: Ներսէս Գ-ի օրով Կոստանդ կայսեր ուղարկած Հայոց թղթի մէջ առաքեալներին հետևող եպիսկոպոսների և մատենագիրների շարքում յիշուած է և «Իրենիոս Գալլիացի աշակերտ Պաւղիկարպոսի յեկեղեցւոյն Լաւոդիկեցւոց»: Եկեղեցու պատմութեան համար նորութիւն է, որ Իրենիոսը իբր եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ստացած լինի Լաւոդիկիայում, Յայտնութեան մէջ յիշուած Ասիայի եօթ եկեղեցիներից մէկը. գուցէ դորանով նորա իսկական հայրենիքն է ակնարկուած: Յամենայն դէպս այսքանն անկասկած է, որ նա Փոքր Ասեայից էր և իւր կրթութիւնն ստացել է Բ. դարու առաջին կիսում ծաղկած՝ եկեղեցու նշանաւոր նահատակ և առաքեալների հետևող Պօղիկարպոս Զմիւռնացու մօտ: Իրենիոս ինքը առ Ֆլորինոս գրած թղթի մէջ նկարագրում է իւր մանկութեան այն շրջանը, երբ լսում էր Պօղիկարպոսին հէնց

Նոյն իսկ Ֆլորինոսի հետ: * Գիտնականներից ոմանք նրան յոյն են համարում, ոմանք սեմական. առաջին կարծիքի ներկայացուցիչների գլխաւոր փաստը նրա անունն է և գրութիւնների լեզուն. սակայն դրականապէս պնդել չէ կարելի, թէև հաւանական է, որովհետև մինչև երկրորդ դարու վերջերը քրիստոնէութեան լեզուն բացառապէս յունարէնն է: Նոյն իսկ Գ. դարու սկզբներում ապրող ափրիկեցի Տերտուղիանը իւր մի քանի շարադրութիւնները յունարէն է գրել: Եկեղեցու պատմութեան մէջ Իրենիոս հանդէս է գալիս առաջին անգամ որպէս ներկայացուցիչ Լիոնի խոստովանողների կամ վկաների (այդպէս էին կոչւում այն քրիստոնեաները, որոնք հաւատի համար տանջուել կամ բանդարկուել էին), որոնց թուղթը նա տանում է Հռովմի Եղեւթերոս եպիսկոպոսին [177—190]: Այդ ժամանակ նա դեռ ևս երէց էր, ինչպէս երևում է Եւսեբիոս Կեսարացու պատմութեան մէջ պահուած ընծայութեան թղթից (Ե. 4): Հռովմից վերադառնալուց յետոյ՝ նա ընտրւում է Լիոնի եպիսկոպոս և վարում է այդ պաշտօնը մինչև դարու վերջերը: Իբրև եպիսկոպոս շատ կենդանի մասնակցութիւն է ցոյց տուել եկեղեցին յուզող հարցերի մէջ, յատկապէս զատկի վէճի առթիւ, որ ծագել էր Հռովմի և Փոքր Ասիայի եկեղեցիների մէջ:

Բայց նա առաջնակարգ հռչակ է ստացել իւր մատենագրական գործունէութեան համար: Տարաբաղդաբար նրա գրուածները մեծ մասով կորել են, մնացել են միայն հատակոտորներ այլ և այլ լեզուներով, ի թիւս որոց և հայերէն, որ հրատարակել են Պիտրա և Հարվէյ: Ամբողջութեամբ մեր ձեռքն է հասել, բայց լատիներէն թարգմանութեամբ միայն,** նրա գլխաւոր երկը Ընդդէմ Հերձուածոց, որի մասին յաճախ յիշում է Եւսեբիոս Կեսարացին: Ընդդէմ Հերձուածոց գրքի բուն վերնագիրն է Ἔλεγχος καὶ ἀνατροπὴ τῆς ψευδωνύμου γνώσεως—Յանդիմանութիւն և եղծումն ստանուն գիտութեանն, բաղկացած հինգ գրքերից: Անհետ կորած շարադրութիւնների մէջ կարևորն էր համարւում Εἰς ἐπίδειξιν τοῦ ἀποστολικοῦ κηρύγματος—Ցոյցք առաքելական քարոզութեան՝ թարգմանուած մեր հայրերի կողմից: Ահա այս երկու երկերից առաջնի չորրորդ և հինգերորդ գրքերի, իսկ երկրորդի ամբողջական թարգմանութեան գիւտն է հայոց լեզուով, որ մենք կարևոր անուանեցինք: Գիւտի պա-

* Եւսեբիոս Կեսարացի Ե. 20.

** Th. Zahn, Irenäus յօդուածի մէջ RE[3] յիշում է, որ յունարէն բնագիրը գոյութիւն ունէր ԺԶ. եւ ԺԷ. դարերում, բայց այժմ կորած է:

տիւր պատկանում է Կարապետ վարդապետ Տ. Մկրտչեանին, որ 1904 *թ. Երևանում փոխանորդ եղած ժամանակ, Կաթուղիկէ եկեղեցու ձեռագիրները քննելիս նկատել է այս գրութիւնները: Այժմ այդ գրութիւններից վերջինը, գերմաներէն թարգմանութեան հետ հրատարակում են Կարապետ և Երուանդ վարդապետները: Բերլինի համալսարանի նշանաւոր ուսուցչապետ Ա. Հարնակ ևս, որ իւր* Texte u. Untersuchungen *հրատարակութիւնների շարքի մէջ է զետեղել այս գրութիւնը հրատարակիչների համաձայնութիւնն ստանալուց յետոյ, մի վերջաբան է աւելացրել և ծանօթութիւններ: Քրիստոնէական ամբողջ մատենագրութեան մէջ այս գրքի գոյութեան մասին միակ տեղեկութիւնը տալիս է Եւսեբիոս Ե.* 26 *«Եւ այլ միւս ևս ճառ ընծայեալ Մարկիանի ուրումն եղբօր ի ցուցակութիւն քարոզութեան առաքելոցն»: Սորանից աւելի ուրիշ տեղեկութիւն չկայ. հասկանալի է, թէ ինչպիսի՜ թանկագին պարգև են ընծայում մեր երկու միաբանակիցները այս հրատարակութեամբ հայոց մատենագրութեան և քրիստոնէական ընդհանուր գիտութեան: Այստեղ չենք կարող զսպել և չարտայայտել մեր խորին վիշտն ու ցաւը, որ այսպիսի մի կարևոր գիւտ, կատարուած Մայր Աթոռի միաբանների ձեռքով, չի հրատարակւում Ս. Էջմիածնում, որ նորա բարոյական հեղինակութեան և հռչակին վայել էր, և կաւելացնենք, որ դորա պատճառը հրատարակիչները չեն:*

Արդ, ի՞նչ նշանակութիւն ունի այս գիրքը մեզ համար: Իրենէոս այն հայրերից մէկն է, որ շատ պարզ գաղափար է տալիս իւր ժամանակի քրիստոսաբանական հայեացքների և ընդհանրապէս աստուածաբանութեան մասին: Իսկ նորա կարծիքներն առանձին նշանակութիւն ունին, որպէս մի անձի, որ սնուել է և կրթուել Քրիստոսի անմիջական աշակերտների հետ կապ ունեցող անձանց շրջանում. քրիստոնէութեան երրորդ սերնդի լաւագոյն ներկայացուցիչն է նա: Ներկայ աշխատութեամբ ոչ միայն պարզւում է այն գաղտնիքը, թէ ի՛նչ է գրել նա վերնագրով միայն մեզ յայտնի երկի մէջ, այլ և շատ մեկին գաղափար ենք ստանում Իրենէոսի կրօնական և աստուածաբանական հայեացքների մասին. որովհետև այս գիրքը մի տեսակ հրահանգութիւն է Մարկիանէ անունով մէկին, որ հաւանօրէն դեռ նորավարժ էր: Յայտնի է, որ դաւանաբանական ձևերն ու հաւատալիքները եկեղեցու պատմութեան մէջ մի անգամից չեն յառաջ եկել, այլ հետզհետէ: Աւետարանների և առաքելական թղթերի մէջ չկան այն հանգանակները, որ հա-

տատել են Նիկիոյ, Կ. Պոլսոյ կամ Եփեսոսի ժողովները: Այլ նոքա ձև և կերպարանք են ստացել կամ թանձրացել են, եթէ կարելի է այսպէս ասել, հետզհետէ, նախկին դարերի ընթացքում. մենք չենք կարող ըմբռնել նոցա էութիւնն ու ծագման պատմութիւնը, մինչև չծանօթանանք նախընթաց հայեացքների և եղելութիւնների հետ: Այս տեսակէտով Իրենէոսը եկեղեցու դաւանաբանութեան և կրօնականութեան պատմութեան նշանաւոր օղակներից մէկն է: Ներկայ գրքով ոչ միայն համեմատութեան նիւթ ենք ստանում ստուգելու երկրորդ դարու միւս հեղինակների, ինչպէս Մելիտոնի, Հերմասի և նոյն իսկ Իրենէոսի Հերձուածոց գրքից ստացած տեղեկութիւններն ու կրօնական հայեացքները, այլ և նորութիւններ, որ միայն այստեղից ենք իմանում: Այս միակ գիրքն է, որից իմանում ենք, թէ ինչպէս էին հրահանգում երկրորդ դարու եպիսկոպոսները քրիստոնէական հաւատի մէջ իրենց հաւատացեալներին:

Յիշենք միայն մի երկու կէտ մեր նախընթաց տողերի մէջ արտայայտած նկատողութիւնները լուսաբանելու համար: Եկեղեցական պատմութիւնից մեզ յայտնի էր մկրտութեան մի համառօտ հանգանակ, որ ծագել է Հռովմի համայնքի մէջ Բ. դարու երկրորդ կէսերին: Այդ հանգանակի էական մասերի տարրերը, նոյն իսկ երբեմն բառացի, գտնում ենք այս գրքի մէջ: Իրենէոս երրորդ և եօթներորդ հատուածների մէջ բացատրում է հաւատոյ և մկրտութեան նշանակութիւնը յանուն Երրորդութեան: Յայտնի է, որ Ն. Կտակարանի մէջ մկրտութեան հանգանակի երկու ձևակերպութիւն ունինք. Պօղոս առաքեալը Հռովմ. թղթի մէջ Զ. 3. մկրտութիւնը միայն Յիսուսի անունով է յիշում, իսկ Մատթ. ԻԸ. 19 Երրորդութեան անունով, որ սակայն աստուածաբաններից ոմանց կողմից ներմուծութիւն է համարուած: Ահա մի երկրորդ վկայութիւն ևս, որ երկրորդ դարում ընդհանրացած է յանուն Երրորդութեան հանգանակը: Աւելին կասենք 47. հատուածի մէջ Հօր և Որդու յարաբերութեան և էութեան բացատրութիւնը, կամ Ս. Հոգու ազդեցութիւնը մարգարէների և առաքեալների վերայ յիշեցնում է Նիկիոյ հանգանակը:

Իրենէոսի հայեացքների վերաբերութեամբ նորութիւն է, որ նա երկնքի եօթ պարունակ է ընդունում Վաղենտինոսի հետ, որի դէմ մաքառում է իւր գլխաւոր երկի մէջ: Եօթն պարունակների համեմատ էլ բաժանուած են երկնային զօրութիւնները՝ հրեշտակներն ու հրեշտակապետները, որոնք Որդու եւ Հոգու հետ փառաւորում են Հօրը (9, 10, 11 հ. հ): Ընդ

գծուած միտքը նոյնպէս կարեւոր է դաւանաբանութեան պատմութեան համար. ինչպէս յայտնի է երեք անձնաւորութեան ենթակայութեան և հաւասարութեան գաղափարները երկար ժամանակ զբաղեցրել են եկեղեցու հայրերին Որոգինէսից սկսած մինչև Նորա վարդապետութեան վերջնական դատապարտութիւնը:

Քրիստոսաբանական կարեւոր խնդիրներ են արծարծուած 30, 31, 32 պրակների մէջ. առաջնում նախագոյութեան խնդիրը, իսկ վերջինների մէջ մարդեղութեան հնագոյն ձեւակերպութիւններից մէկը: Խաչի խորհուրդն ու նշանակութիւնը բացատրուած է 34, 41, 45, 56 պրակների մէջ: Վերջին պրակների մէջ արտայայտուած է Իրենէոսի պարզ և մաքուր կրօնականութիւնը, հրէական և քրիստոնէական կրօնների տարբերութիւնները, սիրոյ բարձր նշանակութիւնը:

Իրենէոսից թէև ունէինք վկայութիւններ Ստեփաննոս Իմաստասէրի «Վասն անապականութեան մարմնոյն Եյն» և Սահակ կաթողիկոսի անունով մնացած գրութիւնների մէջ*, բայց դժուար էր ասել, թէ այդ վկայութիւնները նրա երկերի ամբողջական թարգմանութիւններից են առնուած: Այժմ ստուգւում է թարգմանութեան գոյութիւնը և պարզւում, որ վերոյիշեալ վկայութիւնները նոյնանում են հայերէն թարգմանութեան հետ: Հրատարակիչներն այդ վկայութիւններն ի նկատի ունենալով, յառաջաբանի մէջ որոշում են թարգմանութեան ամենից ուշ ժամանակը: Ստեփաննոս Իմաստասէր նոյն համարելով Ը. դարու առաջին կիսում ծաղկած նշանաւոր Սիւնեցու հետ, իսկ Սահակ վարդապետ՝ Հայոց կաթողիկոս և մեծ թարգմանիչը՝ Սահակ Ձորափորեցու, որ ապրում էր Է. դարու վերջերին: Սակայն կարծում ենք, որ թէ մէկ և թէ միւս ենթադրութիւնը սխալ է: Ստեփաննոս Իմաստասէրը նոյն չէ Սիւնեցու հետ, և հաւանօրէն անվաւերական է այդ գրուածքը, որի հեղինակն ապրում էր մօտաւորապէս Ը. դարու կէսերից մինչև Թ. դարու վերջերը: Իսկ Գիրք Թղթոցի գրութեան հեղինակ Սահակ Ձորափորեցին լինել չէ կարող, որովհետև օգտւում է Սիւնեցու թարգմանութիւններից և Գերմանոսին գրած թղթից: Առաջին խնդիրը պարզացուցել ենք մեր

---

* Առաջինը հրատարակել է Գալուստ Տ. Մկրտչեան, Ստեփաննոս Իմաստասէր, Վաղարշապատ, 1902. իսկ երկրորդը տպագրուած է Գիրք Թղթոցի մէջ, եր. 415.

«Դաւիթ փիլիսոփայ (Հարքացի)» ուսումնասիրութեան մէջ, որ տպագրւում է «Արարատ»-ի մէջ ներկայ համարից, իսկ երկրորդի վերաբերութեամբ խոստանում ենք պարզել առանձին յօդուածով յետագայ համարներից մէկի մէջ, մատենախօսական շրջանից շատ չհեռանալու համար: Միայն այժմեանից յայտնենք, որ բացի վերոյիշեալ հեղինակներից Իրենիոսի նոյն վկայութիւններն ունի և մի երրորդ հեղինակ՝ Տ. Յեսու Խոռխոռունեաց եպիսկոպոս կամ Տ. Յուսէփ, որից օգտուել է Ստեփանոս Իմաստասէր: Այս նկատողութիւնն անելով հանդերձ՝ անհաւանական չենք համարում, որ թարգմանութիւնը կատարուած լինի հելլենասէրների շրջանում, այսինքն Ե. դարում. Հայ թարգմանութեան լեզուն այդ շրջանի կնիքն է կրում: Յունարէնի՞ց է թարգմանուած, թէ ասորերէնից, երկուսի համար էլ նշաններ են գտնում հրատարակիչները, բայց այդ խնդիրն առ այժմ թողնում են անորոշ:

Մի ուրիշ կարևոր խնդիր ևս հրատարակիչները շօշափել են յառաջաբանի մէջ: Արդեօ՞ք նոյն թարգմանչի գործն է Ընդդէմ Հերձուածոց վերջին երկու գրքերի և Ցոյցք առաքելական քարոզութեան թարգմանութիւնը և միայն այդքա՞նն է հայերէն թարգմանուած Իրենիոսից: Առաջին հարցին պատասխանում են դրական մտքով, աչքի առաջ ունենալով թարգմանութեան լեզուի նմանութիւնը երկու գրքերի մէջ և նրանց ընդհանուր վերնագիրը—Ցոյցք առաքելական քարոզութեան,— որ իսկապէս ներկայ հրատարակութեան վերնագիրն է: Իսկ երկրորդ հարցին խոստանում են վերադառնալ Իրենիոսի ամբողջ հրատարակութեան ժամանակ, երբ Իրենիոսի հատակոտորները հաւաքուած և Ստեփանոս Ռոշքայի (1670—1739) տուած տեղեկութիւններն ու բառարանն ուսումնասիրուած կլինին: Վերջին հեղինակի՝ Բարոնիոսից առած՝ տեղեկութեան համեմատ «Հայք ունին զայսոսիկ (Ընդդէմ Հերձուածոցի հինգ գրքերը) յոյժ ճոխաբար ի հայ լեզու յեղեալ», իսկ Հ. Տաշեան, որ իւր Վիեննայի Մխիթարեանց Ձեռագ. ցուցակի մէջ, եր. 680, մէջ է բերում այս տեղեկութիւնը, աւելացնում է, թէ նոյն Ստեփանոս գործ է ածել վերոյիշեալ գրքի լիակատար օրինակը իւր բառգրքի մէջ:

Ուրախութեամբ սպասելով այս խոստման կատարման, աւելորդ չենք համարում ընթերցողների հետաքրքրութեան համար մատնացոյց անել մի քանի յայտնի հատակոտորների վերայ, որ մասամբ հրատարակել են Պիտրա և Հարնէկ Իրենիոսի այլ և այլ գրուածքներից, իսկ մասամբ ևս միայն ձեռագիր-

ներից են յայտնի։ ա) Ֆլորինոս երէցին ուղղուած Περι μοναρχίας *—Վասն միապետութեան գրութեան հայերէն թարգմանութիւնն առնուած մի վկայութիւնից։ բ) Մի հատուած մոնտանական Բլաստոսի դէմ գրուած* περι σχίσματος*—Վասն հերձուածոց վերնագրով***։ *գ) Վիեն կամ Վիեննա քաղաքի (հարաւային Գալլիայում) Դեմետրիոս սարկաւագին ուղղուած* περί πίστεως λογος *—Բան վասն հաւատոյ. այս գրութեան մաս է համարում Յանը Հարվէյի* (II, 460—430, 31) *տպած ասորերէն, արաբերէն և հայերէն պահուած հատուածը**։ *դ) Հայերէն թարգմանութեամբ հրատարակել են Հարվէյ* (II, 464 № 32) *և Մարտին եր.* 31 *Իրենիոսի մի քարոզի հատուած, Մատթ. Ի.* 20 *մասին։ Զարբանալեան**** *յիշում է մի ուրիշ հատակոտոր «(ի Մատթէոսի մեկնութենէն) ի խորհուրդ տօնի յարութեան»։ Շատ հետաքրքրրական է յատկապէս նոյն Զարբանալեանի յիշած՝ «Երիանոսի յաղագս գնացից Առաքելոցն և բանից հերձուածողաց» գրութեան ամբողջութիւնը գտնել, որ հաւանօրէն Եւսեբիոսի յիշած Ե.* 20 *«Ութեակը» գրութիւնն է ընդդէմ Վաղենտինոսի, կորած։ Բոլոր այս հատուածները հաւանական են դարձնում, որ Իրենիոսի գործերից աւելի են թարգմանուած, քան այժմ յայտնի եղաւ հ. Կարապետի գիւտով։*

Գերմաներէն թարգմանութեան մասին այսքանս կասենք, որ սահուն է և ճիշդ, ուրեմն ունի ամեն մի թարգմանութիւնից պահանջուած գլխաւոր յատկութիւնները։ Պրոֆ. Հառնակ իւր վերջաբանի մէջ յայտնում է, որ ստուգութեան համար յանձնել է հայագէտ դր. Ֆինկին համեմատելու հայերէնի հետ, և վերջինս հաստատել է թարգմանութեան հարազատութիւնն ու գեղեցկութիւնը։

Դ. վ. Ցովսէփեան

* *Եւսեբիոս Կեսարացի.* Ե. 20.

** RE[5] Irenäus *յօդուածը.*

*** *Մատենադարան հայկ. Թարգմանութեանց. Վենետիկ.* 1889. *եր.* 421.

Մխիթար վարդապետ. Հայերը Ռուսաստանում. Վաղարշապատ 1906. 136 էջ. գինն է 80 կոպէկ.

Մայր Աթոռի միաբան Մխիթար վարդապետը աշխատում է այս գրքոյկի միջոցով Հայոց եկեղեցու, նրա կալուածների ու եկամուտների մասին որքան կարելի է ճշգրիտ տեղեկութիւններ տալ հայ հասարակութեանը։ Որ շատ անգամ ճշգրիտ տեղեկութեան փոխարէն մենք միայն մօտաւոր հաշիւների ու հաւանական ենթադրութիւնների ենք հանդիպում գրքոյկի մէջ, դրա պատճառն այն է, որ Հայոց եկեղեցու բարձրագոյն Հոգևոր Վարչութիւնը ճշգրիտ տեղեկութիւններ չունի իրեն ենթադրեալ հաստատութիւնների և նրանց եկամուտների մասին։ Եւ Մխիթար վարդապետը, որ իւր գրքոյկով ճանապարհ հարթել է աշխատում Հայոց եկեղեցական մանրամասն ու ճիշտ վիճակագրութեան համար, արժանի է առանձին շնորհակալութեան։ Համակրելի է և ուշադրութեան արժանի նրա ձեռնարկութիւնը մանաւանդ այն պատճառով, որ հանդէս է գալիս այնպիսի ժամանակ, երբ ամեն ոք խօսում է Հայոց եկեղեցու հարստութեան, նրա կալուածների ու ապագայ դպրոցական ֆօնդի մասին, բայց ոչ ոք որոշ գաղափար չունի՝ թէ որոնք են Հայոց եկեղեցու կալուածքները և ինչքան եկամուտ են տալիս նոքա Հայոց եկեղեցուն և մասնաւորապէս Ս. Էջմիածնին։

Գրքոյկը բաղկացած է 8 *հատուածներից, որոնցից մի երկուսը արդէն մի անգամ տպուած են եղել «Արարատում» կամ «Արշալոյսի» մէջ։ Հատուածների բովանդակութիւնը հետևեալն է.*

Ա) Ռուսաստանի Լուսաւորչական Հայոց վանքական անշարժ կալուածները. (*էջ* 1—21)։

Այդ հատուածից երևում է, որ Էջմիածինն ունի ընդամենը 45,000 *դեսիատին հող, որից ստացւում է տարեկան մօտ* 51,000 *րուբլի. դրանից* 3000 *ր. չափ տրւում է հողային և երկրաչափական հարկ։*

Անշարժ կալուածներից (Վաղարշապատում, Ախալցխայում, Երևանում, Ալէքսանդրապօլում, Ախալքալակում, Գանձակում, Թիֆլիսում և Քիշնևում) էջմիածինն ստանում է տարեկան ընդամենը 50,301 *ռուբլի* 32 *կոպ. արդիւնք. ամենաշատ արդիւնք սուող կալուածքը Քիշնևինն է* (24,000 *ր.) և ապա Տփխիսի տներն ու կրպակները* (14,536 *ր.* 32 *կ.), Վաղարշապատի անշարժ կալուածները* (6314 *ր.) ևն։*

Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի 3 *վանքերը միասին (Խրիմի ս. Խաչ, ս. Փրկիչ Ղարասուբազարի մօտ և ս. Խաչ Նոր Նախիջևանի) ունին մօտ* 4418 *դես. հող, որ բերում է տարեկան* 13,085 *ր, արդիւնք։*

Աստրախանի թեմում վանքական հող չկայ։ Շամախու երկու վանքերը միասին ունին 79 *դ. հող,* 1830 *ր. տարեկան արդիւնքով։*

Ղարաբաղի թեմում կայ 14 *վանք, որոնք ունին* 58,698 *դ. հող, տարեկան մօտ* 6700 *ռուբլի չնչին արդիւնքով, որի կէսից աւելին* (3708 *ր.) տրւում է հողային և երկրաչափական հարկ։*

Երևանի թեմի 48 *վանքերը ունին միասին մօտ* 32,440 *դ. հող, որից ստացւում է հողային և երկրաչափական հարկերը հանած՝ մօտ* 16,484 *ռուբլի արդիւնք։*

Վրաստանի և Իմերեթիայի թեմում կայ 17 *վանք, որոնք ունին միասին մօտ* 12,250 *դ. հող, տարեկան* 3080 *ռուբլի արդիւնքով, հողային ու երկրաչափական հարկերը հանած։*

Ռուսահայոց բոլոր վանքերը միասին ունին մօտ 153,000 *դես. հող, որից ստացւում է տարեկան միայն* 85,000 *ռուբլի արդիւնք։ Ծխական եկեղեցիներն էլ եթէ հետը հաշուենք, Հայոց եկեղեցին Ռուսաստանում ունի ընդամենը մօտ* 175,000 *դ. հող* 110,000 *ռուբլի տարեկան արդիւնքով։*

Բ) Տեղեկագիր Ա. Բ. Գ. Դ. 1900 *թ.* (21—40)*, որից երևում է, որ ամբողջ Ռուսաստանում նոյն թուին եղել է* 1327 *եկեղեցի,* 79 *վանք,* 7 *եպիսկոպոս,* 34 *վարդապետ,*

1547 քահանայ, 360 եկեղեցական սպասաւոր և ընդամենը 1,131,474 ծխական։ Բոլոր եկեղեցիների դրամագլուխն հաւասար է 1,522,513 ռուբ. մուտքը 478,472 ռուբ. ելքը 393,636 ր. (կոպէկները թողնում ենք)։

Ամբողջ Ռուսաստանում կայ 4 թեմական դպրանոց և միայն 3 անկելանոց (էջ 36 շար.)։

Գ) Ծխական եկեղեցիների անշարժ կալուածքները, որոնց մասին կանոնաւոր տեղեկութիւններ պակասում են։

Դ) Հետաքրքրական է Ս. Էջմիածնի 1906 թուի նախահաշիւը. (էջ 40—45). ընդհանուր մուտք նախատեսուած է ընդամենը 156,003 ռուբլի, իսկ ելք 127,343 ռուբլի, ուրեմն պիտի աւելանար 28,660 ռուբլի, բայց ճշմարտութիւնն այն է, որ այդքան մուտք վանքը երբէք չի ունենում (սովորաբար լինում է 132,000 ր.), իսկ ծախս լինում է նախահաշուի որոշածից միշտ աւելի։ Մուտք վիճակային արդիւնքից 1906-ին նշանակուած է 35,000 ռուբլի, յայտնի չէ ինչ հիմունքներով, այն ինչ 1902-ին, երբ աւելի կանոնաւոր էին ստացւում վանքի բոլոր եկամուտները, վիճակային արդիւնք եկել է միայն 26,000 ռուբլի։ Նշանակուած 35,000 ռուբլի վիճակային արդիւնքից 15,000 էլ գոնէ եթէ եկած լինէր 1906-ի ընթացքում, կարելի էր գոհ լինել։ Յիշատակելու արժանի է, որ 1906-ի նախահաշուով 56,100 ռուբլի նշանակուած է ճեմարանի համար, բացի հացից, որ ստացուել է Մայր Աթոռի շտեմարանից։

Էջ 45—48 համեմատութեան համար դրուած է 1902-ի ելքի հաշիւը։

Ե) 48 էջի վրայ 1897—1901 հնգամեայ շրջանի Մայր Աթոռի միջին մուտքն է հաշուած՝ մօտ 131,638 ռուբլի։

Զ) Էջ 49—52. խօսւում է վիճակային արդիւնքների մասին 1902-ի ընթացքում. այդտեղից երևում է, որ ա. Երևանի թեմը վիճակային և օտարային արդիւնք միասին ուղարկել է Էջմիածնին 24,677 ր. 83 կ. բ. Վրաստանի թեմը միայն 5 ռուբլի. գ. Ղարաբաղի թեմը ոչինչ. դ. Շամախու թեմը ուղարկել է 3339 ր. (որից 2000 ր.

հանգուցեալ առաջնորդի ուճիկը).մ. Աստրախանի թեմը ոչինչ չի ուղարկել. և գ. Ն. Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը ուղարկել է վիճ. և օտարային արդիւնք միայն 152 ր. Բոլոր 6 թեմական հաստատութիւնները ծախսում են տարեկան 60,326 ր. 64 կ.։

Է) էջ 52—53 Մայր Աթոռի դրամագլխի և աւանդադրամների մասին է, որոնց ընդհանուր գումարն է եղել 1902-ի յունուարի 1-ին 465,723 ր. 28 կ. և 4000 ֆրանկ. որից Էջմիածնին պատկանում է միայն 377,428 ր. 81 կ. և 4000 ֆրանկ։

Ը) էջ 53—126 Հայերը Ռուսաստանում ըստ 1897-ի առաջին ընդհանուր աշխարհագրի. բազմաթիւ հետաքրքրական աղիւսակներով, քաղած Տրոյնիցկու խմբագրութեամբ 1905-ին լոյս տեսած երկհատոր աշխատութիւնից այդ աշխարհագրի մասին։

էջ 126—132 մի քանի հաշիւներից յետոյ Մխիթար վարդապետը դնում է իր եզրակացութիւնը, որի համաձայն 1907 թուի սկզբին Ռուսաստանի վեց թեմերում Լուսաւորչական Հայերի թիւը լինելու է 1,392,129 հոգի (Երևանի թեմ 668,813, Թիֆլիսի թեմ 372,800, Ղարաբաղի թեմ 175,632, Շամախու թեմ 62,649, Աստրախանի թեմ 60,842, և Բեսարաբիայի թեմ 51,393)։ Իսկ բոլոր այլ դաւանութեան Հայերն էլ հաշուելով, Հայերի ընդհանուր թիւը Ռուսաստանում պիտի լինի 1,438,000։

Գիրքը վերջանում է Հայերի թուի ընդհանուր հաշուով, որ ըստ Մխիթար վարդապետի պիտի լինի մօտաւորապէս 3 միլիոն, թէև անհնար չէ համարում նա, որ 3 միլիոնից էլ աւելի լինի։

Ով առհասարակ հետաքրքրւում է Հայոց եկեղեցւով և Հայոց վիճակագրութեամբ, նրան խորհուրդ ենք տալիս ձեռք բերել Մխիթար վարդապետի գրքոյկը։

Երուանդ վարդապետ.

ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Գ Ր Ն Ց)

Միաբան Ս. էջմիածնի Յուսիկ եպիսկոպոս. Վաղարշապատ 1906. 156 էջ։

Այս գրքոյկը նախ մաս մաս տպուել է «Արարատ»-ի մէջ։ Իւր ժամանակին անհասկանալի էր մեզ համար, թէ ինչու է գրուել և ինչու է տպւում յօդուածների այդ երկար շարքը. և այժմ, երբ արտատպած գրքոյկն է մեր առաջ, նոյն զգացումն ունինք։

Ո՞ւմ համար է գրուած այն և ինչ նպատակով, մենք չենք կարող ասել. և դժուարանում ենք հաւատալ, թէ Յուսիկ եպիսկոպոսը կարող կլինի պատասխանել այդ հարցին։ Լուրջ ուսումնասիրութիւն չէ, որ ասենք պատմական մութ խնդիրներ պարզելու համար է. հեղինակն էլ վանականութեան կողմնակից չի երևում, որ մտածենք թէ իւր գաղափարը քարոզելու ու պաշտպանելու համար է։ Ընդարձակ պարբերութիւններ այն տպաւորութիւնն են անում, կարծես թէ «Յայսմաւուրք» ես կարդում. մի մասը թարգմանութիւն է Զ. Բօբէրտսոնի չափազանց հնացած եկեղեցական պատմութեան ռուսերէն թարգմանութիւնից, իսկ մնացածը իրեն Յուսիկ եպիսկոպոսի սեպհականութիւնն է։

Գրքոյկն սկսւում է Եղիայով, որ առաջին անապատականն է եղել։ Բ–ը Յովհաննէս Մկրտիչն է, որի մասին հեղինակը հետևեալն է ասում. «Յովհաննէս Մկրտիչը յղացաւ և ծնուեց, որպէս Նազովրեցի՝ ուխտաւոր, հրեշտակի աւետիքով» .... «Հին ուխտի մէջ նրանք, որոնց յղութիւնը հրեշտակի աւետիքով էր լինում, ... Նազովրեցի էին կոչւում»։ Ապա երկար ու բարակ խօսւում է Ռաքաբիմեանց, Պօղոս Թեբայեցու և Անտոնի ու Պախոմէոսի մասին։ Յուսիկ եպիսկոպոսին ի հարկէ չէր կարող ծանօթ լինել նորագոյն գիտութեան եզրակացութիւնը Պաւղոսի վարքի մասին,

թէ այն մի ռոման է միայն, որի պատմական կորիզի մասին խօսելն անգամ աւելորդ է։

Շարունակութեան մէջ խօսւում է Եւստաթէոս Սեբաստացու մասին, որը յայտնի չէ թէ ինչու հայ է անուանած մի քանի անգամ։ Գանգրայի ժողովը եղել է ըստ նորագոյն քննութեանց ոչ 358-ին և ոչ էլ 361—362-ին, այլ 340-ին, կամ գուցէ աւելի ճիշտ՝ 343-ին։

Յուսիկ եպիսկոպոսը յունարէն չգիտէ, այդ յանցանք չէ ամենևին. բայց խիստ զարմանալի է, որ նա Ռօբերտսոնի մէջ կարդացած լինելով խոտաճարակների յունարէն βοσκοί անուան ռուսերէն տառադարձութիւնը (ВОСКИ), անմիջապէս եզրակացրել է, որ այս ВОСКИ-ները և Հայոց Ոսկեանք նոյնն են. և այդ գիւտը նրան այնքան դուր է եկել, որ չի կշտանում շարունակ, անթիւ անգամ, կրկնելուց։

Էջ 52—53. Բարսեղ Կեսարացին մեռել է 379 թուի Յունուարի 1-ին, իսկ Գրիգոր Աստուածաբանը Կոստանդնուպոլիս է գնացել 379-ի գարնանը. ուրեմն Բարսեղը չէր կարող Գրիգորին Պոլիս ուղարկել։ Այնուհետև Յուսիկ եպիսկոպոսը երկար զբաղւում է հոգևորականների ամուրիութեան խնդրով. դրանով էլ վերջացնում է գրքոյկի առաջին մասը։

58 էջի վրայ թոյլ է տուել իրեն Յուսիկ եպիսկոպոսը մի այնպիսի կոպիտ սխալ, որ ներելի չի կարող լինել ամենևին մի մարդու համար, որ յաւակնութիւն ունի Հայոց եկեղեցու պատմագէտ համարուելու։ Մենք կարդում ենք, և աչքերիս չենք հաւատում. «Ներսէս Բ. կաթուղիկոսի գահերէցութեամբ 527 թուին Դուինի Բ. ժողով» ... Յուսիկ եպիսկոպոսը գրել է այս 1905 կամ 1906 թուին, և վկայութեան է կանչում իւր եկեղեցական պատմութիւնը (նոյն էջ), այն ինչ 7—8 տարի առաջ արդէն պարզուած է, որ Ներսէս Բ.-ը չէր կարող 527-ին կաթուղիկոս եղած լինել, շատ անգամներ գրուած է նրա թուականը Հանդէս Ամսօրեայում և վերջապէս Մայր Աթոռի Արարատում։ Չի կարդացել որքաղանը գոնէ 1899 թուի Արա-

բատի դեկտեմբեր համարում լոյս տեսած կաթուղիկոսաց ցանկը և հայրապետների տարեթուերը, որոնք լուրջ ուսումնասիրութեան հետքն՝ են կրում իրենց վրայ։ Վերցնէր գոնէ Կ. Պոլսի ազգային Ս. Փրկչեան հիւանդանոցի ընդարձակ օրացոյցի որ տարուայ հատորը կկամենար, 1900-ից սկսած, և կտեսնէր, որ Ներսէս Բ.-ը 548 - 557-ն է հայրապետութիւն արել։ Միայն Էջմիածնում 1902-ին տպուած ժամագիրքն է, որ Յուսիկ եպիսկոպոսի նման չարունակում է հին սխալը, հետևելով այն սկզբունքին, թէ միանգամ ընդունուած ու դարերով սրբագործուած սխալը չի կարելի ուղղել։

Յուսիկ սրբազանի գրքոյկի Բ. մասը (70 երեսից սկսած) զբաղւում է գլխաւորապէս Ոսկեանց և Սուքիասեանց խնդրով։ Դժուար է մի առ մի թուել այն բոլոր անհեթեթութիւնները, որ կան այստեղ. դրա համար հարկաւոր կլինէր ամբողջ տասնեակ էջեր արտագրել։ Ամեն բան խառնուած է իրար՝ խոտաճարակ — ВОСКИ — *ոսկի — որում տեղեացն ոսկիք կոչեն — Լուսաւորչի Սեբաստիայից բերած կրօնաւորները — Անտոն և Կրօնիդէս. և այդ խառնաշփոթից յետոյ՝ «հաւանական է, որ (Լուսաւորչի օրով) Միջագետքից եկած խոտաճարակ կրօնաւորները հետները բերին իրանց, արդէն յայտնի, ոսկի կոչումն»* !?։

Էջ 77. «Խրիւսի — ոսկի դեսպանութիւնից խոտաճարակ դարձած ու Ս. Թադէոս առաքեալի ձեռքով մկրտուած՝ քննելի է. խոտաճարակ Ոսկեանք Դ. դարում Ս. Լուսաւորչի օրով Հայաստան եկած միջագետքից՝ պատմական իրողութիւն է, համաձայն պատմական անցքերին թէ ընդհանուր քրիստոնէական եկեղեցու պատմութեամբ եւ թէ մեր ազգային» ?!! [1]։ *Այսպիսի նախադասութիւն գրել կարող է միայն նա, ով չատ ողորմելի հասկացողութիւն ունի պատմութեան և պատմական քննութեան մասին։ Բայց շարունակութեան մէջ այսպիսի* «պատմական իրողութիւններ» *այնպիսի չափեր են ընդունում, որ մարդ ակամայ հարցնում է իրան՝ երբ պիտի վերջանայ այս առասպելաբա-*

---

1) Բոլոր ընդգծումները մերն են:

նութիւնը։

Մի նմուշ էլ (էջ 89—91). Ոսկեանք իրանց անունը առել են Միջագետքի խոտաճարակ ոսկիներից։ «Նոյնը կասենք մենք Սուքիասեանց մասին. այդ անունը առել են նրանք Սեբաստիայից եկած յոյն Կապադովկացի հոգևորականներից։ Ահա թէ ինչպէս. «Եկեղեցական աւանդութեան մէջ յիշւում են մի քանի Հիւսիքոսներ կամ Իսիւքոսներ. այդ անունը նոյնն է, ինչ որ Սուքիաս. «Այսքան Սիւքիոսների և Հիւսիքոսների անունները, որ յայտնի են Դ. դարուց սկսած, կարող էին անցնել ուրիշների էլ. այդ անունով կարող էին կոչուել վկայաբանութիւն կազմողներից նախալուսաւորչեան նահատակների մի խումբ, կամ Լուսաւորչի օրով և յետոյ յայտնի կրօնաւորների մի դաս, որի առաջնորդը կարող էր նոյն անունով Կապադովկեայից եկած լինել»։ Եւ այսպիսի անվերջ կարելիութիւնները տասնեակ երեսներ շարունակ։

Շատ զուարճալի է նաև Յուսիկ սրբազանի Սուկաւէտի բացատրութիւնը հակառակ Բարդուղիմէոս եպիսկոպոսի, որինը համեմատաբար աւելի հաւանական է ու խելացի։ «Ջրաբաշխը ոչ մի առնչութիւն չունի ջրառատ, ջրաշատի հետ». վերջին խօսքն է Սուկաւէտի մասին, որը մի ժամանակ ջրաբաշխ էլ է կոչուել։

էջ 103. «Այս ճգնաւորներն ու կրօնաւորները Յոյն և Ասորի են կոչուած մեր պատմութիւններում և եկեղեցական աւանդութեան մէջ, բայց կարող էին և Հայ լինել, որովհետև դրանք Միջագետքից, փոքր Հայքից և Սեբաստիայից էին։ Մեր նախնիք դրանց Ասորի, Յոյն են անուանել, ըստ իս, նրանց աւելի խորհրդաւոր և պատկառելի դարձնելու համար»։ Այս «ըստ իս»-ը ցոյց է տալիս միայն, որ Յուսիկ սրբազանի համար օտարները խորհրդաւոր են և աւելի պատկառելի, քան իւր ազգակիցները. և ուրիշ ոչինչ։

էջ 104. Յուսիկ սրբազանը նոր տօն մտցնել է առաջարկում մեր տօնացոյցի մէջ—բարի ախորժակ։

էջ 114. Լուսաւորչի ժամանակ Սեբաստիայի Քրիստո-

նէութիւնը բոլոր մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն հեղինական էր. զուր է ճգնում Յուսիկ եպիսկոպոսը Թոփչեանին այդ կէտում ընդդիմախօսել։

Աւելորդ եմ համարում այլ եւս երկարացնելը. խորհուրդ եմ տալիս՝ հետաքրքրուողներին միայն զուարճութեան համար կարդալ Յուսիկ սրբազանի գրած Ղազար Փարպեցու հիանալի բնութագիրը (էջ 125—127)–«ըմբոստ, ամբարհաւաճ, կրակոտ, անհանգիստ, դիւրագրգիռ միշտ բողոքող, միայն իրան անմեղ ճանաչող։ Այդպիսիները գործի մարդ չեն. իրենց եռանդը, տաղանդը, եթէ ունեն, սպառում են միայն ուրիշներին դատափետելով, չհաւանելով, անցկացնելով ու սեւացնելով իրանց օրը ուրիշներին խծբծելով: Այժմ եւ պակաս չեն այդպիսիք եւ Ղազարը այդպիսիներից մէկն էր»: Խեղճ Ղազար Փարպեցի։ Երէց ու վարդապետ իրարից չջոկող 20. դարու հայ եպիսկոպոսը (էջ 138) մեղադրական է կարդում քեզ։

Վերջապէս Յուսիկ սրբազանը յանձնարարելով վարդապետների ու եպիսկոպոսների ամուսնութիւնը, վերջացնում է իւր գիրքը մի մարգարէութեամբ. «Ժամանակի հոսանքին նայելով, երևի, ոչ հեռաւոր ապագայում վանականութիւնն ու կրօնաւորութիւնը իրենց կարգ ու կանոններով պատմական անցքերի շարքը կանցնեն և կդադարեն գոյութիւն ունենալուց» (էջ 140)։ Եւ այս մարգարէութիւնն անում է այն հայ եպիսկոպոսը, որ սրանից դեռ 3 տարի միայն առաջ եկեղեցական գրերը «մեսրոպեան» էր համարում և նոցա մէջ մի տառ փոխելը ազգակործան մի յանդգնութիւն. այժմ առանց աղմուկի ինքը վերջացնում է մի շատ հնադարեան, «Եղիա մարգարէից սկսուող» եկեղեցական հաստատութիւն։ Երևի ժամանակի հոսանքն է պահանջում այդ։

Երուանդ վարդապետ

ԳԻՏԱԿԱՆ

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ 726-ի ԺՈՂՈՎԻ ԱՍՈՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ԵՒ ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՅԻՇԱԾ ԵՐԿՈՒ ԱՍՈՐԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ.

Մանազկերտի ժողովի մասին մինչև 1904 թուականը տեղեկութիւն ունէինք հետեւեալ աղբիւրներից.

1. *Սակս ժողովոց, որ եղեն ի Հայս (Գիրք թղթոց. Տփխիս* 1901. *էջ* 220—223) *էջ* 223 *շար.*
2. *Ստեփաննոս Տարօնեցի՝ Ասողիկ* II 2. *էջ* 102 *շար. Պետերբուրգ* 1885.
3. *Կիրակոս Գանձակեցի. էջ* 37 *շար. Մոսկուա* 1858.
4. *Վարդան Պատմիչ. էջ* 72 *շար. Վենետիկ* 1862.
5. *Խոսրովիկ Թարգմանիչ, Էջմիածին* 1899 (1903).
6. *Սամուէլ Անեցի, Էջմիածին* 1893. *էջ* 87 *և ծանօթ.* 36. *էջ* 287 *շար., ուր տպուած են ժողովի* 10 *նզովքները.*
7. *Բարհեբրէոս,* Chron. eccl. ed. Abbeloos et Lamy. I. *էջ* 299—303. *Համմ. Ասսեմանի* Bibliotheca Orientalis II. *էջ* 296.
8. *Միքայէլ Ասորի (Հայերէն. էջ* 351—353. *Երուսաղէմ,* 1870. *էջ* 338—340. *Երուսաղէմ,* 1871.

Այս աղբիւրների մեծ մասը յիշում է, որ Ասորի եպիսկոպոսներ էլ են եղել Մանազկերտի ժողովում և յատկապէս 6 *հոգի, բայց միայն առաջին տեղն յիշուածն է մի քանիսի անունները տալիս։*

Սակս ժողովոցը (Գիրք թղթոց, էջ 223 *շար.) հայ եպիսկոպոսներից մի քանի նշանաւորների անունը տալուց յետոյ, յիշում է հետեւեալ Ասորի եպիսկոպոսներին, որոնք եկել են Մանազկերտ միութեան խնդրի համար։*

ա. Կոստանդին եպիսկոպոս.

բ. Մետրապոլիտ Ուռհայ քաղաքի (անունը չկայ).

գ. Շմաւոն Խառանու եպիսկոպոս.

դ. Թէոդոս Գարգմանից եպիսկոպոս (Չամչեան՝ «Գարգամակաց»).

ե. Աթանաս Նփրկերտոյ եպիսկոպոս.

զ. Թէոդորոս Ամասիա եպիսկոպոս.

Չամչեանը (II. 397) ինձ անյայտ աղբիւրից առնելով, տալիս է նոյն անունները, աւելացնում է միայն ա-ի կողքին «փոխանորդ պատրիարքին», իսկ բ-ի անունը դնում է Բասիլ, որ անյայտ է Սակս ժողովոցի մէջ։

1904-ի Օգոստոսին սակայն լոյս տեսաւ Chabot-ի հրատարակութեամբ Միքայէլ Ասորու բնագրի այն մասը, ուր պատմուած է մանրամասն կերպով Մանազկերտի ժողովի մասին և բերուած ժողովի ամբողջական արձանագրութիւնը[1]։ Այդ արձանագրութեան մէջ յիշուած Ասորի եպիսկոպոսները հետևեալներն են.

ա. Կոստանդին Ուռհայի.

բ. Սիմոն Խառանու.

գ. Թէոդոր Գերմանիկիայի.

դ. Աթանաս Մայփերկատի.

ե. Սիմոն Դարայի.

Ուրեմն հայ աղբիւրների ա. ու բ. միևնոյն անձնաւորութիւնն է, «Գարգմանից կամ Գարգամակաց եպիսկոպոս»-ը Գերմանիկայի Թէոդոր կամ Թէոդոտ եպիսկոպոսն է, հայ աղբիւրների զ.-ը Ամասիայի Թէոդորոս եպիսկոպոսը չի յիշուած ամենևին, բայց յիշուած է մի նոր մարդ՝ «Սիմոն Դարայի եպիսկոպոս»։ Այդպիսով Միքայէլ Ասորու բնագիրն էլ չի ամբողջացնում վեց եպիսկոպոսների անունները։

Վեցերորդ անունը գտնելու համար մեծ ծառայութիւն է մատուցանում մեզ մինչև 846 թուականը հասնող

---

1) Chronique de Michel le Syrien. ed. Chabot, Paris. 1904, II 3. էջ 457—461 ասորերէն. Ֆրանս. թարգմ. II. 492—500. արտատպած և գերմաներէն թարգմանած մեր «Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen. Leipzig, 1904» գրքի մէջ, էջ 178—195.

մի ասորական ժամանակագրութիւն [1], որի մէջ յիշուած է, թէ 724 թուին պատրիարք է դառնում Աթանասը, 734-ին մեռնում է Խառանի եպիսկոպոս Սիմոնը (709-ից եպիսկոպոս), 735-ին մեռնում է Ուռհայի եպիսկոպոս Կոստանդինը, և 738-ին մեռնում են Գերմանիկայի Թէոդոսոս և Սամոսատի Թէոդորոս եպիսկոպոսները։[2]

Ուրեմն հայ աղբիւրների մէջ յիշուած դ. Թէոդորոս Ամասիա եպիսկոպոսը պատմական անձնաւորութիւն է և Սամոսատի (ոչ թէ Ամասիայի, որ յիրաւի կասկածելի կլինէր) եպիսկոպոս և մասնակցել է, համաձայն «Սակս ժողովոց»ի, Մանազկերտի ժողովին։ Այդպիսով Մանազկերտի վեց ասորի եպիսկոպոսները կլինեն հետևեալները.

1. Կոստանդին եպիսկոպոս Եդեսիայի.
2. Սիմէոն եպիսկոպոս Խառանու.
3. Թէոդոսոս (այսպէս ըստ 846-ի ժամանակագրութեան և Խոսրովիկայ) եպիսկոպոս Գերմանիկիայի.
4. Աթանաս եպիսկոպոս Մայփերկատի (Մայաֆարկին, Նփրկերտ, Մարտիւրոպոլիս).
5. Սիմէոն եպիսկոպոս Դարայի (Միքայէլ Ասորի բնագիր).
6. Թէոդորոս եպիսկոպոս Սամոսատի (Սակս ժողովոց և 846-ի ժամանակագրութիւն)։

Մեր գրքի մէջ[3] յիշել էինք, որ Միքայէլ Ասորին մէջ բերելով Մանազկերտի ժողովի ամբողջական արձանագրութիւնը, յայտնում է, որ ինքը քաղել է իր տեղեկութիւնները Յովհան Սինակեաց Լիտարբացու ժամանակագրութիւնից։ Ո՞վ էր Յովհան Լիտարբացին, այն ժամանակ չգիտէինք հաստատապէս և ենթադրութեամբ

1) Chronicon ad annum Domini 846 pertinens. (Corpus Scriptorum Christianorum Orientalium. Scriptores Syri, Series tertia, tomus IV. Chronica Minora, pars secunda). Edidit E.-W. Brooks, interpretatus est J.-B. Chabot. Paris- Lipsia 1904.

2) էջ 235 չար. ասորերէն, 178 չար. լատիներէն.

3) Die Armenische Kirche. էջ 196.

միայն յայտնել ենք, որ նա պիտի Մանազկերտի անցքերին ժամանակակից մէկը լինի։ Այժմ՝ վերև յիշուած 846-ի ժամանակագրութիւնը միանգամայն հաւաստի՝ է կացուցանում մեր ենթադրութիւնը, յայտնելով, որ Յովհան Սիւնակեաց Լիտարբացին էլ մեռել է 738 թուին։[1]

Ինչպէս յայտնի է Խոսրովիկը իւր գրուածքի Դ. գլխում, ուղղուած առ Աթանաս պատրիարքն Ասորոց, խօսում է «Դերայիդ-րոշտադ»ում տեղի ունեցած մի վիճաբանութեան մասին պատրիարքի ներկայութեամբ, ասորի Թէոդոտոս և Աթանաս եպիսկոպոսների հետ[2]։ Ի՞նչ անուն է «Դերա-յիդ-րոշտադ»ը դժուար է հաստատապէս ասել։ Խոսրովկայ հրատարակիչ Գարեգին վարդապետ Յովսէփեանը կարծում է, որ այդ տեղը Ասորիքում պէտք է որոնել[3]։ Մենք մեր, վերև արդէն մի քանի անգամ յիշած, գրքի մէջ ենթադրել ենք, որ շատ հեռու գնալ պէտք չէ և անշուշտ Միջագետքում գտնուած մի ասորական վանքի մասին է խօսքը, մանաւանդ որ վիճելի անուան առաջին մասը՝ «Դերայ», ամենայն հաւանականութեամբ ասորերէն «Դայրա» կամ «Դէյրա» խօսքն է, որ նշանակում է վանք[4]։ Ի՞նչ էր մնացած «... Դրոշտադ»ը մենք չէինք կարողացել գտնել։ Գրքիս լոյս տեսնելուց յետոյ, 1904 թուի Հոկտեմբերի 31-ին, սեմական գիտութեան նեստոր Թէոդոր Նէօլդեկէն գրում է ինձ նամակով իւր ենթադրութիւնը. «Ես ուղղագրում եմ «դայրա դ-դրուսթադ» կամ աւելի ճիշտ «...պատ» =«վանք բժշկապետի»։ Դուրուստապատ կամ դուրուստբադ Խոսրով Պարուէզի ժամանակակից շատ անգամ յիշուած Գաբրիէլի տիտղոսն է. որովհետև հայերը միշտ պարսկական հնագոյն ձևերն են գործածում, կարելի է այստեղ էլ

---

1) Chronicon ad anuum Domini 846 pertinens. էջ 235 շար. ասորերէն բնագիր, 178 շար. լատիներէն թարգմանութիւն։

2) Խոսրովիկ Թարգմանիչ, բնագիր էջ 100.

3) Նոյն տեղում, ուսումնասիրութիւն էջ 22.

4) Տես մեր Die armenische Kirche etc. էջ 82 ծանօթ. 1.

վերջաւորութիւնը «... պատ» ընդունելը[1]։

Նեօլդեկէի յիշած Գաբրիէլի, իբրև Պարսից 615 կամ 616-ի ժողովի միաբնակութեան նշանաւոր ներկայացուցչի մասին, տեղեկութիւն են տալիս մեզ բոլոր այդ ժողովի մասին եղած աղբիւրները[2]։ Պէտք է ենթադրել ուրեմն, և այդ ենթադրութիւնը շատ հաւանական է, որ «դերայիդրուշպատ»-ը (այսպէս) այդ Գաբրէլ «մեծ բժշկապետի», ինչպէս նրան անուանում են հայ աղբիւրները, անունով կոչուած մի մենոֆիզիտական վանք էր, անշուշտ հիւսիսային Միջագետքում, Հայաստանի սահմաններին մօտիկ։

Երկրորդ մինչև այժմ անյայտ մնացած անը Գերադիկորն է, որտեղի եպիսկոպոս Սարգսին ուղղում է Խոսրովիկը մի թուղթ, տպուած իբրև գլուխ Ե. Խոսրովկայ միւս երկասիրութիւնների հետ[3]։ Հ. Բ. Սարգսեանը, իրեն յատուկ թեթևութեամբ նոյնացնում է Գերադիկորը

---

1) «Ich conjiciere: daira dedrustbadh oder vielmehr «pat»=«Kloster des Gesundheitsmeisters»=Archiatros. Durustpat oder Durustbadh war der Titel des vielgenannten Gabriel unter Chosrow Parvêz. Da die Armenier durchweg die altertümlicheren pers. Formen wiedergeben, so darf man hier am Auslaut pat annehmen».

2) Սեբէոս գլ. ԼԳ. էջ 123. Ասողիկ II 2. էջ 97 չար. G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, Leipzig 1880. էջ 104—109 և 115—121. O. Braun, Das Buch der Synhados übersetzt. Stuttgart und Wien, 1900. էջ 307—331. Նոյնը Ասորերէն բնագիր և ֆրանսերէն թարգմանութիւն՝ Synodicon Orientale ou Recueil de synodes Nestoriens, par J.-B. Chabot, Paris 1902. էջ 562—598. Chronicon Anonymum, edidit et interpretatus est Ignatius Guidi (=Corpus Script. Christ. Orient. Script. Syri. Series III, tomus IV, Chronica Minora.) Paris 1903. բնագիր էջ 19. 23. Լատիներէն թարգմանութիւն էջ 18, 20 չար.։ Նոյն փոքրիկ ժամանակագրութիւնը 1893-ին Գերմաներէն թարգմանել է Նեօլդեկէն։ Համե. մեր «Die armenische Kirche etc» էջ 65. ծանօթ 3 և 4։ Ասորական բոլոր աղբիւրները յիշում են Գաբրիէլի «Durustpat=Բժշկապետ» տիտղոսը։ Արարատի հետևեալ համարներից մէկում մենք մանրամասն տեղեկութիւն կտանք Պարսից ժողովի մասին՝ ասորական աղբիւրներից։

3) Խոսրովիկ թարգմանիչ, բնագիր էջ 149—183.

Գերմանիկիայի հետ, առանց որ և է հիմունքի. իսկ Գարեգին վրդ. Յովսէփեանը Դերայիդրոշտայի նման այս տեղն էլ որոնում է, հասկանալի պատճառով, Ասորիքում[1], առանց որոշել կարողանալու, յատկապէս որ մասում։

Մեր կարծիքը «Գերադիկորի» մասին հետևեալն է. ամենից առաջ՝ այդ անունն աղաւաղած է. պէտք է կարդալ «Դերադիկոր»։ «Դայրա» կամ «դէյրա» վանք է նշանակում ասորերէն, ինչպէս վերևն յիշուած է. «դ»տառը ասորերէնում ենթակայութիւն ցոյց տուող շաղկապ է (subordinierende Konjunktion). մնում է «իկոր» կամ գուցէ «իկորա» բառը, որը պէտք է նոյնացնել անշուշտ Մայփերկատի սահմանում գտնուած և մեզ արդէն Միքայէլ Ասորու բնագրից յայտնի «Իգրայ»ի կամ «Իկրայ»ի վանքի հետ[2]։ Շատ հետաքրքրական է այն հանգամանքը, որ Խօսրովիկը իւր թղթի մէջ առ Սեւերեան Յակոբիկների պատրիարքն Աթանաս գլխաւորապէս կռիւ է մղում Սեւերոսի դէմ, այն ինչ «Դերադիկրայ»ի (այսպէս) Սարգիս եպիսկոպոսին գրած թղթի մէջ յարձակւում է աւելի Յուլիանիաների վրայ. իսկ մեզ յայտնի է, որ Իգրայի ասորի կրօնաւորները, որոնք միացած են Հայոց եկեղեցու հետ, Յուլիանիտ են համարւում[3]։

Եթէ ի նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ Իգրայի վանքի առաջնորդը միևնոյն ժամանակ լինում էր նաև Սասունի կամ Սանասնացւոց եպիսկոպոսը[4], պէտք է ասենք, որ Խօսրովկայ յիշած Դերադիկրայի վանահայր Սարգիս եպիսկոպոսը ամենայն հաւանականութեամբ նոյն անձնաւորութիւնն է, ինչ որ Սանասնացւոց Սարգիս եպիսկոպոսը, որ յիշուած է Հայ եպիսկոպոսների հետ միասին, թէև ամենից վերջը, իբրև Մանազկերտի ժողովական։[5]

17.I.07. **Երուանդ վարդապետ**

1) Նոյն տեղ. ուսումնասիրութիւն էջ 22.

2) Chronique de Michel le Syrien. Paris 1904. բնագիր էջ 457. 458. ֆրանս. թարգմ. II, 3. էջ 492—493. համմտ. մեր «Die armenische Kirche etc» էջ 179 շար.

3) Միքայէլ Ասորի կամ մեր գիրքը նոյն էջերը։

4) Նոյն տեղեր, նոյն էջերը։

5) Տես մեր գիրքը, էջ 182 և 189.

ԴԱՒԻԹ ՓԻԼԻՍՈՓԱՅ

(ՀԱՐՑԱՑԻ)

Է. ԴԱՐՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՐ

(Նահապետ եպիսկոպոսի յիշատակին)

Ա.

Մինչև վերջին տարիներս քիչ բան գիտէինք Հայոց եկեղեցու Զ—Ը դարերի պատմութեան մասին: Բաբգէն, Ներսէս Բ., Յովհաննէս Բ., Կոմիտաս կաթուղիկոսների և Յովհաննէս Երուսաղէմացու թղթերի և Խոսրովիկ Թարգմանչի երկերի հրատարակութեամբ** շատ մութ խնդիրներ լուսաբանուեցան և ուսումնասիրութիւնների նիւթ դարձան: Հայ յիշատակարանների վերայ աւելացան ասորի հին և նորագիւտ աղբիւրների տուած տեղեկութիւնները†: Սակայն պատմական և մատենագրական կարևոր նշանակութիւն ունեցող դեռ շատ խնդիրներ ունինք այս շրջանին վերաբերեալ, որ կարօտ են լուսաբանութեան: Մութն է յատկապէս Է. դարու երկրորդ կիսի պատմութիւնը միմեանց հակասող տեղեկութիւններով, մութն է մեր հելլենասէրների դպրոցի ծագման պատմութիւնը, որի մէջ կարևոր*

---

* Բաբգէնի, Ներսէսի, Կոմիտասի և Յովհաննէս Երուսաղեմացու թղթերը հրատարակուած է նախ Կարապետ վարդապետի ձեռքով Արարատում 1896 և 1898 թ. թ. և ապա Գիրք թղթոցի մէջ, Թիֆլիս, 1901: Ասորոց թուղթն ուղղուած Կոմիտաս կաթուղիկոսին տ. Սամուէլ Անեցի, Վաղարշապատ, 1893, եր. 290:

** Վաղարշապատ, 1903 թ.

† Die Armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen. Dr. Erwand Ter-Minassiantz. Leipzig, 1904.

տեղ է բռնում Դաւիթ փիլիսոփայի անձնաւորութիւնը՝ անյաղթ, Ներգինացի, Հարքացի կամ Հերեթանցի կոչուած։ Հասկանալի է, որ այսպիսի պայմանների մէջ մատենագրական իւրաքանչիւր մի փոքրիկ նշխար, յիշատակարան, որ այսպէս կամ այնպէս աղօտ լոյս է սփռում այդ շրջանում կատարուած պատմական իրողութիւնների կամ մատենագրական երեւոյթների վերայ, մեզ համար արժէք ունի։

Այս շրջանի պատմութեան է վերաբերում և մեր փոքրիկ գրութիւնը Դաւիթ փիլիսոփայի անունով*, որ բաղկացած է երեք հատուածներից և գրուած զանազան ժամանակներում։ Այս գրութիւնն առնուած է Բեռլինի արքայական մատենադարանի պ. Քարամեանի ցուցակի № 31 ձեռագրից**։ Ս. Էջմիածնի մատենադարանում տարաբաղդաբար ուրիշ օրինակ գտնել չկարողացանք համեմատութեամբ տեղ տեղ աղճատուած բնագիրը վերականգնելու համար։

Բ.

Գրութիւնների բովանդակութիւնը վերնագրի համաձայն դաւանաբանական—վիճաբանական է։ Առաջին հատուածի նախաբանից տեղեկանում ենք, որ հերձուածողները պառակտում են եկեղեցու հօտը, իրենք «օտարացեալք և վրիպեալք ի մայրենի գրկաց եկեղեցւոյ» լինելով։ Հեղինակը իւր պարտքն է համարում «յաստուածաբանութիւն մխել ճառս» ոչ սնափառութիւնից, այլ ժամանակի հարկից ստիպուած, մանաւանդ «յորժամ զերկխղածութեանդ ձերոյ ընկալաք ամենայորդոր փութով գիր»։ Ո՞վ է այդ անձնաւորութիւնը, որ թղթով յորդորում է Դաւթին

---

* Տես Արարատ մարտ, 1906։

** Die Handschriften Verzeichniss der königl. Bibliothek zu Berlin, X. Band. Verzeichniss der armenischen Handschriften von Dr. N. Karamianz, Berlin, 1888 եր. 24.

Դէպքից օգտուելով մեր շնորհակալութիւնն ենք յայտնում ճեմարանի նախկին սան պ. Արտաշէս Ծահրադեանին, որ այս գրութիւնն արտագրելու և ուղարկելու նեղութիւնը յանձն առաւ սիրայօժար կերպով։

գրիչ առնել հերձուածողների դէմ, տարաբաղդաբար ոչ մի ցուցում չունինք որոշելու։ Գրութեան ընթացքից երեւում է, որ հեղինակը մի բնութեան վարդապետութեան հետևող է Հայաստանեայց եկեղեցւ ուղղափառութեան մտքով և մաքառում է եկեղեցու պատմութեան մէջ յայտնի հերձուածողական ուղղութիւնների դէմ՝ առանց նրանց անունը յիշելու։ Վերջին տեղն են բռնում նեստորականներն ու քաղկեդոնականները, յատկապէս Սևերեանները, որոնց դէմ է ուղղուած և գրութեան թափը։

Երկրորդը գրուած է Անաստաս կաթուղիկոսի հրամանով՝ վերնագրին նայելով։ Գրութեան սկզբնաւորութիւնն էլ յարմար է վերնագրին։ Թուղթը գրուած է «հօտասէր» «հովուապետի» յօժարութեամբ, որ երկու կողմից էլ հաւատոյ դաւանութիւն էր պահանջել։ Ո՞յք են այդ երկու կուսակցութիւնները, որոնց ի միութիւն էր ուզում բերել հայրապետը, տարաբաղդաբար այս գրութեան մէջ պարզուած չէ. բայց պատմական տուեալներն ի նկատի ունենալով, կարելի է ընդունել, որ այդ երկու կուսակցութիւնները Յուլիանիտներն ու Սևերեաններն էին, ինչպէս հաստատւում է աւելի պարզ կերպով հեղինակի երրորդ գրութեամբ։

Երրորդ հատուածը գրուած է Աշոտ պատրիկի խնդիրքով, որ հեղինակին դաւանաբանական մի քանի հարցեր էր առաջարկել պարզելու։ Բացատրութիւնից երևում է, որ հարցերը կապ ունէին Յուլիանիտների և Սևերեանների ուղղութեան հետ և ճիշդ նոյն կուսակցութիւններն են, որոնց դէմ մաքառում են Օձնեցին, Խոսրովիկ Թարգմանիչ և Մանազկերտի ժողովի հայրերը։

Բովանդակութեան այս համառօտ նկարագրութիւնից արդէն որոշւում է հեղինակի ժամանակը։ Նա Է. դարու երկրորդ կիսի մատենագիր է. Անաստաս կաթուղիկոսի 661—666 թ. և Աշոտ պատրիկի 685—690 թ. ժամանակակից։ Հեղինակի ժամանակը որոշում ենք հիմնուելով վերնագրների ցուցումների վրայ, որ ուրիշ պայմաններում գուցէ կասկածելի կարող էր լինել։ Սակայն ի նկատի ու-

նենալով գրութիւնների չնչին բովանդակութիւնը, չենք կարող որ և է կեղծիք վերագրել հեղինակին։ Ի՞նչ շահ ունէր մի ուրիշ հեղինակ Դաւիթ անունով պսակելու այս երկրորդական գրութիւնները և կապելու Անաստաս կաթուղիկոսի և Աշոտ պատրիկի անունների հետ։ Մեր կարծիքով վերնագիրները նոյնչափ վաւերական պիտի համարել, որչափ և գրութիւնների բովանդակութիւնը, մանաւանդ, որ պատմական պարագաները միանգամայն վստահութիւն են ներշնչում ընդունելու, որ այդ բովանդակութեամբ գրութիւններ կարող էին ծագել Է. դարում։ Հայոց եկեղեցու մէջ Ը. դարու առաջին քառորդում մի մեծ վէճ և մաքառում էր սկսուած Յուլիանիտների և Սևերեանների դէմ։ Վիճաբանութեան սուր բնաւորութիւնն այդ ժամանակ առիթ է տալիս բնականաբար մտածելու, որ այդ վէճերը բաւական վաղ պիտի սկսուած լինէին Հայոց եկեղեցու մէջ։ Բոլորովին մի նոր շարժում չէր կարող այնքան շահագրգռել երկու կողմերին և մի ամբողջ թեր և դէմ գրականութեան առիթ լինել։ Մեծ ոյժ պէտք էր գործ դնել յատկապէս յուլիանիտների դէմ, որոնք Հայոց եկեղեցու մէջ արդէն բաւական զօրեղ կուսակցութիւն էին կազմում։ Այս մասին տեղեկութիւն են տալիս նոյն իսկ օտար պատմիչներ՝ Միքայէլ Ասորին և Բարեբրէոս։ Օձնեցու, Խոսրովիկ Թարգմանչի երկերը, Մանազկերտի մեծ ժողովն իրենց ծագման պատմութեան նախաշրջանը պիտի ունենային, և ահա Դաւիթ փիլիսոփայի փոքրիկ գրութիւններն ապացուցանում են, որ միութեան փորձերն ու վիճաբանութիւններն սկսուած էին դեռ ևս Է. դարում։

Գ.

Ո՞վ էր Դաւիթ փիլիսոփան։

Այս հարցին տարաբաղդաբար աւելի մանրամասնութիւններով պատասխան տալ չենք կարող. ստիպուած ենք քննութեան ենթարկել Դաւիթ անունով մատենագիրների մասին մեզ հասած տեղեկութիւնները, գուցէ նոցանից մէկը

նոյնանայ մեր հեղինակի հետ և այսպիսով աւելի որոշ գաղափար ստանանք նորա անձի և գործունէութեան մասին, քան այս գրութիւնները մեզ տալ կարող են։ Բնականաբար մեր քննութիւնը սահմանափակւում է Է. դարով կամ առ առաւելն Ը. դարու առաջին քառորդով. որովհետև նախընթաց պրակում տեսանք արդէն, որ մեր Դաւիթ փիլիսոփան ապրում էր Է. դարու երկրորդ կիսում։ Այս շրջանում մենք հաստատ տեղեկութիւն ունինք Դաւիթ անունով երեք անձի գոյութեան մասին՝ Դաւիթ փիլիսոփայ Բագրևանդացու, Դաւիթ Թարգման կամ Թարգմանիչ Տարօնացու և Դաւիթ Հռոմայեցի կամ Հիւպատի։

Ըստ երևոյթին մեր Դաւիթը հեշտութեամբ կարող է նոյնանալ Բագրևանդացու հետ. երկուսն էլ նոյն անունն ունին և փիլիսոփայ մականունը, իսկ ժամանակի վերաբերութեամբ ոչ մի դժուարութիւն չկայ։ Բագրևանդացին ներկայ էր Ներսէս Գ-ի օրով 648/9 թ. գումարուած Դունայ ժողովին, անհաւանական չէ, որ նա կենդանի լինէր ոչ միայն Անաստաս կաթուղիկոսի, այլ և Աշոտ պատրկի ժամանակ։ Անշուշտ այս է եղել պատճառը, որ Զամչեանից սկսած մեր Դաւիթը նոյն է համարուել Բագրևանդացու հետ*։ Սակայն իրերի փոքր ինչ աւելի լուրջ քննութիւնը մեզ բոլորովին հակառակ եզրակացութեան է տանում։

Սեբէոսի և նորան հետևող պատմիչների տուած տեղեկութեան համեմատ՝ Դաւիթ փիլիսոփայ Բագրևանդացին Հայաստան էր եկել Կոստանդ կայսեր կողմից Հայերին համոզելու, որ կրօնական միութիւն հաստատեն Բիւզանդացիների հետ։ Յոյները գանգատուել էին կայսեր, թէ Հայերը «Հռոմի հաղորդութիւն մարմնոյ և արեան Տեառն» չեն ընդունում, անարգանք են համարում Քրիստոսի համար Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տումարը և իրենց էլ անօրէնների տեղ դնում։ Կայսրը և պատրիարքը (Պօղոս) հրովարտակ են գրում, «զի միաբանութիւն հաւատոյ արաս-

* Զամչեան, Պատմ. Հայոց Բ. եր. 349 և 372. Զարբհանալեան. Պատմ. հին դպրութեան, Վենետիկ, 1897, եր. 454։

ցեն ընդ Հռոմի, զի մի խոտեսցեն զժողովն և զտումարն զայն»: Ներսէս Գ-ի և Թէոդորոս Ռշտունու առաջնորդութեամբ գումարւում է Դունայ ժողովը, ուր «տեսին (Հայք) զհրամանս թագաւորին, և լուան զբանս փիլիսոփային՝ որ ուսուցանէր զերրորդութիւնն բաժանմամբ ըստ տումարին Լևոնի»: Հայերն ի հարկէ միութեան համար հաւանութիւն չեն տալիս և մի ընդարձակ թղթով պատասխանում են կայսեր*:

Ասողիկ, որ երկրորդում է թէ այս ժողովի պատմութիւնը և թէ Հայոց գրած թուղթը, փոքր ինչ տարբերութիւններ ունի Սեբէոսից. նախ իմանում ենք, որ Դաւիթ փիլիսոփան «ի Բագրեւանդ գաւառէ ի Բագաւան գեղջէ» էր, և ապա, թէ նա ժողովում ուսուցանէր բաժանմամբ զերկուց բնութեանցն վարդապետութիւն ըստ ժողովոյն Քաղկեդոնի»**: Ասողկի խօսքերն աւելի պարզ են Դաւիթ Բագրեւանդացու դաւանաբանութեան մասին, բայց չենք կարծում, թէ նա ուրիշ աղբիւր ունեցած լինի աչքի առաջ բացի Սեբէոսից, ուրեմն և այդ խօսքերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ պարզաբանութիւն Սեբէոսի «ուսուցանէր զերրորդութիւնն բաժանմամբ ըստ տումարին Լևոնի» խօսքերի, որ պէտք է բաւական քաշքշել բնութեան խնդրի և Քաղկեդոնի ժողովի հետ կապելու համար: Յամենայն դէպս ըստ էութեան Ասողիկ իւր աղբիւրի. դէմ չէ մեղանչել՝ պարզելով նորա խօսքերը. երկուսն էլ Դաւիթ փիլիսոփայ Բագրեւանդացուն համարում են քաղկեդոնական, և եթէ այս տեղեկութիւնը համապատասխան է պատմական իրողութեան, դրականապէս ասել կարող ենք, որ Դաւիթ Բագրեւանդացին և մեր Դաւիթ փիլիսոփան նոյն անձնաւորութիւնը լինել չեն կարող, որովհետև վերջինս պարզ հակաքաղկեդոնական է:

---

* Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն. հրատ. Ք. Պ. Պետերբուրգ, 1879, եր. 119:

** Ստեփաննոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմ. տիեզերական երկրորդ տպագ. Պետերբ. 1885, եր. 91:

Թիւրիմացութեան տեղիք չտալու համար Դաւիթ Բագրեւանդացու քաղկեդոնական լինելու խնդիրը պէտք է փոքր ինչ աւելի պարզել. պատմական տուեալներին նայելով, Սեբէոսի և Ասողկի տուած տեղեկութիւնը Դաւիթ Բագրեւանդացու քաղկեդոնականութեան մասին աւելի երևակայական է, քան իրական։ Որովհետև Կոստանդ կայսեր ներկայացուցիչը չէր կարող իսկական մտքով քաղկեդոնականութեան պաշտպան լինել, նա կարող էր միայն Հայերին համոզել, որ միութիւն հաստատեն Յունաց հետ և չխոտեն Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տումարը։ Այս էր հրովարտակի բովանդակութիւնը և այս էլ համապատասխան է պատմական իրողութեան։ Կոստանդ կայսրը, ինչպէս և նորա պապը Հերակլ, երբէք քաղկեդոնական չէին եղել իսկական մտքով. նոքա հետևող էին բիւզանդական և արևելեան միաբնակ ազգերի կրօնական միութեան քաղաքականութեան, որի հիմքն էր կազմում մի կամքի վարդապետութիւնը, որ տրամաբանական հետևողութիւն էր մի բնութեան վարդապետութեան։ Քաղկեդոնականութիւնը չէր մերժուած, բայց իրօք լռութեան էր մատնուած։ Կոստանդ կայսրը կամենում էր աւելի զգոյշ և աւելի չէզոք լինել իւր Τύπος περὶ πίστεως կոչուած հրովարտակով, որ հրատարակեց 648 թ. *։ Նա, որ պատժեց Մարտին Ա. պապին և Մաքսիմոս Խոստովանողին իրենց հետևողական քաղկեդոնականութեան համար, չէր կարող Հայերից պահանջել, որ քաղկեդոնականութեան հետևեն տրամաբանական բոլոր եզրակացութիւններով։ Միութեան այս փորձերը Հայոց հետ ամենայն հաւանականութեամբ կապուած էին կայսեր վերոյիշեալ հրովարտակի հրատարակութեան հետ, և ուրեմն Դաւիթ Բագրեւանդացու առաքելութեան նպատակը պիտի լինէր համոզել Հայերին, որ բացարձակ կերպով չմերժեն Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տումարը, այլ լռելով՝ այդ մասին միութիւն հաստատեն Յունաց հետ։

* Այս հրովարտակի մասին տես Hefele, Conciliengeschlchte III. Freiburg n/B. 1877, § 306 և Harnack. Dogmengeschichte. II. եր. 403։

Պատմական այս լուսաբանութիւնից յետոյ՝ պարզ պէտք է լինի, որ Դաւիթ Բագրեւանդացու քաղկեդոնականութիւնը պայմանական էր և ոչ բացարձակ, որ երկու բնութեան հետ դաւանէր և երկու կամք ու ներգործութիւն, ինչպէս իսկական քաղկեդոնականները։ Բայց և այնպէս չենք կարող Բագրեւանդացուն նոյնացնել մեր գրութիւնների հեղինակ Դաւիթ փիլիսոփայի հետ, որովհետև վերջինս պարզ հակաքաղկեդոնական է։ Նա կաթուղիկէ եկեղեցու հետ նզովում է, ով «երկուս յարէ բնութիւնս ի միմեանս մի որդի պատճառելով և երկաքանչիւրոցն որոշէ զիւր ներգործութիւնս, իբր թէ մարմինն զիւրն կրէ տկարութիւն, իսկ աստուածութիւն զիւրն բացակատարէր սքանչելիս, որ է յայտնապէս երկուս ամպարշտեալ որդիս»։ Պարզ է, որ այս տողերի հեղինակը, քաղկեդոնականութիւնը նզովելով, չէր կարող այն դերը յանձն առնել, ինչ որ կատարում էր Բագրեւանդացին Դունայ ժողովում։

Գ.

Մեր Դաւիթ փիլիսոփայի հետ նոյն լինել չէ կարող և Դաւիթ Հիւպատ կամ Հռոմայեցի կոչուածը, որ ժամանակակից էր Ստեփանոս Իմաստասէր Սիւնեցուն և նրա գործակիցն էր թարգմանութիւնների մէջ։

Այս երկու նշանաւոր թարգմանիչների մասին տեղեկութիւն են տալիս Սամուէլ Անեցին, Կիրակոս Գանձակեցին և Օրբէլեան։ Առաջինը, որ ժամանակով ամենից հինն է հետևեալն է գրում․ «Յայսմ ժամանակի (775 թ. Ք. յ.) էր Ստեփաննոս գրան երէց՝ որ բանիբուն ճանաչիւր։ Եհաս ի կատարումն ամենայն իմաստասիրական և գրամարտիկոս արհեստից՝ հանդերձ հոգևորական առաքինութեամբ։ Էին և վարդապետք յաշխարհիս Հայոց՝ ընտրեալք և լուսաւորք՝ տէր Եփրեմ և Անաստաս և Խաչիկ և Դաւիթ Հռոմայեցին և մեծ իմաստասէրն Ստեփաննոս Սիւնեցին՝ աշակերտ Մովսէսի» *։

* Հրատ. Էջմիածնի ի ձեռն Արշակ Տ. Միքելեանի. Վաղարշապատ, 1893, եր. 87։

Գանձակեցին կրկնում է Սամուէլի խօսքերը, միայն թուականը նշանակում է Միբ (=773 թ.), և ապա աւելացնում է Սիւնեցու գրական վաստակների անունները*:

Օրբէլեան պատմելով Սիւնեցու վարքը, յիշում է, թէ ինչպէս նա Կ. Պօլսում «ծանօթացեալ մեծ Հիւպատոսի մի Դաւիթ անուն եւ թագաւորական սեղանոյն կենաւրի, և ձեռնտուութեամբ նորին թարգմանէ զգեղեցիկ գիրսն սրբոյն Դիոնեսիոսի և զնէ, ինքն դժուարագոյն և խրթին բանիցն լուծումն բան առ բան. թարգմանէ և զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիւսացւոյ զբնութեան և՛ զկազմութեան**:

Բայց այս պատմիչների սկզբնական աղբիւրը, ինչպէս և նկատել է Հ. Տաշեան իւր «Նեմեսիոսի յաղագս բնութեան մարդոյ» ուսումնասիրութեան մէջ†, եղել է այն յիշատակարանը, որ շատ յաճախ կրկնուած է ձեռագիրների մէջ Սիւնեցու թարգմանութիւնների վերջում, տալով իւրաքանչիւր թարգմանութեան տարբեր ժամանակը††: Այդ յիշատակարանից տեղեկանում ենք, որ Դիոնեսիոս Արիսպագացին թարգմանուած է «յերկրորդ ամի թագաւորութեանն Փիլիպպոսի (ըստ Մխիթար Այրիվանեցու ճառընտրի Փիլիկոսի 576 ա)» 712/3 թ., Կիւրղի Պարապմանց և Թըղթոց թարգմանութիւնը «յերկրորդ ամի թագաւորութեանն Անաստասի» 714/5 թ., իսկ Գրիգոր Նիւսացուն վերագրուած Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» երկի թարգմանութիւնը «յառաջին ամի թագաւորութեանն Լեւոնի» 717 թ.: Մէջ բերենք միայն վերջին թարգմանութեան յիշատակարանը, որովհետև միւսները բառացի նոյն են, բացի գրքերի անուններից և նոցա թուականների տարբերութիւնից. «Ի ՅՄԻԸ ամի արարածոյ աշխարհիս, հայոց Թւ. ՄԻԱ, ըստ յունարէն թւոյ ի ԺԴ երորդի ընդիքտիոնին.

---

* Հրատ. Ոսկան Տ. Յովհաննիսեանի, Մոսկուա. 1858 եր. 40.

** Հրատ. Կ. վ. Շահնազարեանցի Ա. Փարիզ, 1859, եր. 178.

† Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք Ա.—Զ. Վիեննա. 1895, եր. 7—12:

††. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1889, եր. 388, 519, 371:

յառաջին ամի թգթնն ղեւոնդի թգի. թքմնեցաւ գիրքս սրբոյս գրիգորի եւ՛ Նիւսացո՝ ի սորյգ աւրինակաց ի Կոստանդին», ի ձեռն Դաւթի Հիւպատոսի եւ թգաւկան սեղանոյն կինառի,եւ ի ձեռն Ստեփաննոսի քհի եւ քերդողի աշակերտի տն մուսխսի սինեց եւ»: Այս յիշատակարանն առնուած է Մխիթար Այրիվանեցու նշանաւոր ճառընտրից Կարինեան ցուցակի 924 (=944), 602 ա. որ գրուած է ԺԳ. դարում, 1287 թուից առաջ. որովհետև պատարագամատոյցի «Գոհութիւն և փառաբանութիւն» քարոզի մէջ յիշուած են Յակոբ հայրապետ (Կլայեցի +1287), քրիստոսագաւոր արքայն Լևոն(+1289), և Գեմետրէ (Վրաց թագաւոր(+1289): Այստեղ, ինչպէս ընթերցողները նկատել կարող են, Հայոց ՄԽԱ (772) կամ ըստ Գանձակեցու ՄԽԲ (773) թուականը չի համապատասխանում Լևոնի կայսրութեան առաջին տարուն. բայց Չամչեան (Բ. եր. 555) ձեռքի տակ է ունեցել նոյն յիշատակարանը «ըստ հայում թուականին ՃՂԵ» ընթերցուածով, որով վերանում է հակասութիւնը: Այսպիսով տեսնում ենք, որ այս սխալը շատ վաղ ժամանակներից սպրդած է եղել յիշատակարանի մէջ և այդպիսի սխալ օրինակից օգտուել են Սամուէլ Անեցին (բ-ի փոխարէն ե), Գանձակեցին և Այրիվանեցին, այն ինչ Օրբէլեանը ազատ է այդ սխալից, թէև բառացի օգտուել է յիշատակարանից, Ստեփանոսի մահը նշանակելով 735 թուին:

Վերոյիշեալ յիշատակարանների տուած տեղեկութեամբ մենք բաւական ճշգրիտ գաղափար ունինք Դաւիթ Հիւպատի ժամանակի և թարգմանական գործունէութեան մասին. նա գործակցել է Ստեփանոսին 712—716/7 թիւը: Արդ այս հանգամանքն ի նկատի ունենալով՝ ամենայն հաւանականութեամբ ասել կարող ենք, որ մեր Դաւիթ փիլիսոփան նոյն լինել չէ կարող Դաւիթ Հիւպատի հետ: Դաւիթ փիլիսոփան, որ ապրում էր Անաստասի ժամանակ, արժանացած էր նորա ուշադրութեան, որոշ չափով հեղինակութիւն էր վայելում նորա աչքում և մասնակից էր կրօնական միութեան խնդիրներին, պէտք է առնուազն

35—40 տարեկան մի անձն լինէր, իսկ այդպիսի մի մարդ չէր կարող 612—617 թուականին այնքան եռանդուն կերպով թարգմանութիւններով զբաղուել և պալատում կայսերական սեղանի պաշտօնեայ լինել։

Ե.

Եօթերորդ դարում յիշուած Դաւիթ անունով մատենագիրներից մէկն է Դաւիթ Թարգման կամ Թարգմանիչ Տարօնացին։ Այս անձի մասին ստացած մեր տեղեկութիւնները տարաբաղդաբար ընդարձակ չեն։ Մեր ամբողջ ծանօթութիւնը հիմնուած է երկտող մի փոքրիկ յիշատակարանի վերայ, որ գրուած է Բարսեղ Կեսարացու ծննդեան մասին գրած մի ճառի թարգմանութեան վերջում։ Մեզ յայտնի են այս յիշատակարանից երեք օրինակ ԺԲ. և ԺԳ. դարում գրուած ձեռագիրների մէջ։ Դոցանից մէկն է № 917 (կ. ց. 903) բոլորգիր, փոքրադիր ճառընտիրը, գրուած թղթի վերայ Ստեփան կրօնաւորի ձեռքով ՉԼԴ (1285) թուին։ Ամբողջը Բարսեղ Կեսարացու ճառերի ժողովածու է. «ի ծնունդն Փրկչին» վերնագրով և «Բի ծնունդըն իւրականն» սկսուածքով ճառը բռնում է 144^{բ}—155^{բ} թերթերը. որից յետոյ 156^{ա} «ի ծնունդ Փրկչին» կրկնուած վերնագրի տակ գրուած է այսպիսի յիշատակարան. «Դաւիթ Թարգման տարաւնացի զճառս զայս յետոյ դարձոյց ի յունէն ի հա բարբառ ի դամասկացոց քաղաքին, հրամանաւ Համազասպայ Կորապաղատի մամիկոնենից տէր։ Ու եղիցի աւրհնութիւն տն ի վերա նոցին»*։ Նախընթաց պրակում յիշած Մխիթար Այրիվանեցու ճառընտիրը նոյնպէս ունի այս ճառը և յիշատակարանը 902^{բ}—911^{բ}, միայն տարբեր ուղղագրութեամբ և վերջանում է «ի վերա նորա» խօսքերով, այսինքն Տիրոջ օրհնութիւնը հայցւում է միայն

* Այս յիշատակարանը ունի և Զարբհանալեան, Բարսղի ճառերի մի երկաթագիր օրինակից, միայն առանց վերջին նախադասութեան։ Հին դպրութիւն 1897, եր. 455, Մատենադարան հայկ. թարգմ. 1889, եր. 329։

Համազասպ Մամիկոնեանի համար։ Եւ վերջապէս № 1650 Գրիգոր Աբասայ որդու նշանաւոր Պատճառաց գրքի մէջ, 256ա, «Բի ծնունդն» ճառի պատճառից յետոյ գրուած է «Պատճառ ութուտասն ճառին, վս Հարցման Բարսղի առ ապողինար» վերնագիրը և ապա այսպիսի ծանօթութիւն. «Եւ ի վերնագրէն ուսանիս, զի յետոյ թարգմանեցաւ ճառս ի Դաւթէ թարգմանչէ, եւ եղաւ յայսր մատենի»... Սակայն ծանօթութիւն գրողը սխալուել է, կարծելով թէ Դաւիթ թարգմանիչը Բարսղի առ Ապողինար հարցմունքն է թարգմանել։ Դորա պատճառն այն է, որ յիշատակարանը և Հարցման վերնագիրը կցուած էին միմեանց, ինչպէս այդ տեսնում ենք և № 927 ձեռագրի մէջ։ Այս ձեռագիրը թէև թուական չունի, բայց ինչպէս յետոյ կտեսնենք, գրուած է ԺԲ. դարու վերջում կամ ԺԳ.-ի սկզբում։

Յիշատակարանի մէջ յիշուած Համազասպ Մամիկոնեանը Թէոդորոս Ռշտունու յաջորդն էր իբրև Հայոց իշխան, եթէ չհաշուենք Մուշեղ Մամիկոնեանի կարճ իշխանութիւնը։ Ռշտունու մահը կարելի է դնել ոչ վաղ, քան 655 թ., իսկ Համազասպի կիւրապաղատութիւնը 656—659 թ., երբ Կոստանդ կայսրը հնարաւորութիւն ունէր Հայաստանը կրկին իւր իշխանութեան տակ առնել Արաբների մէջ ծագած ներքին խռովութիւնների պատճառով։ Այս խռովութեան հետեւանքն այն էր, որ Մուավիան ստիպուած էր խաղաղութեան դաշինք կապել յունաց հետ 659 թ.։ Ասողիկ 655 թիւն է համարում Համազասպի Կիւրապաղատութեան առաջին տարին, իսկ Յովհաննէս կաթուղիկոս երեք տարի տալիս նորա իշխանութեան։ Երկուսն էլ մօտաւորապէս ճիշդ են, որովհետև յամենայն դէպս Համազասպի կիւրապաղատութիւնն ընկնում է Է. դարու յիսունական թուականի վերջերին։ Կայսրը նորան արծաթի գահոյք է տալիս և «զիշխանութիւն աշխարհին Հայոց, և պատիւ այլոց իշխանացն և գանձս զաւրացն». ուրիշ խօսքով Հայաստանի ներքին կառավարութեան ղեկը նորան է յանձնում։ Ժամանակակից պատմիչը այս տեղեկութիւնների հետ մեծ գովասանքով է խօսում նաև նորա ընթեր-

ցասիրութեան և ուսումնասիրութեան մասին*։ Ի՞նչ կապեր ունէր Դաւիթ Տարօնացին Համազասպ Մամիկոնեանի հետ, տարաբաղդաբար չգիտենք, բայց հաւանական է, որ վայելում էր նորա իշխանական շնորհը և ուղեկցել էր նորան դէպի Դամասկոս, ուր և թարգմանել էր նորա հրամանով Բարսղի վերոյիշեալ ճառը։

Այսպիսով տեսնում ենք, որ Դաւիթ Տարօնացին ժամանակակից է Անաստաս կաթուղիկոսին, ինչպէս և մեր Դաւիթ փիլիսոփան։ Դաւիթ Թարգմանիչ Տարօնացին Դաւիթ Բագրևանդացու հետ նոյն լինել չէ կարող, որովհետև երկուսի բնագաւառները միանգամայն տարբեր էին միմեանցից և երկրորդի բնակավայրն, ինչպէս երևում է Կ. Պոլսին էր, գոնէ այնտեղից էր ուղարկել նորան կայսրը Հայաստան։ Բայց Դաւիթ Թարգման Տարօնացուն մեր Դաւիթ փիլիսոփայի հետ նոյնացնելու ոչ մի դժուարութիւն չունենք։ Սակայն եթէ նոյն իսկ ապացուցուած էլ համարենք այս երկու անձնաւորութեան նոյնութիւնը, դարձեալ մեզ համար մութն է, թէ ի՞նչու մեր գրութիւնների հեղինակը փիլիսոփայ մակդիրն ունի և ի՞նչու Դաւիթ Տարօնացին Թարգման կամ Թարգմանիչ է կոչւում. ոչ առաջինը իւր դաւանական չնչին գրութիւններով փիլիսոփայ անունը կժառանգէր և ոչ վերջինը Բարսղի մի ճառը թարգմանելու համար Թարգմանիչ կկոչուէր։ Մեզ հարկաւոր են աւելի գրական ցուցումներ թէ այդ երկու անձանց նոյնութիւնը հաւանական դարձնելու և թէ Դաւիթ փիլիսոփայի անձնաւորութիւնն աւելի պարզելու համար, և բարեբաղդաբար Ստեփաննոս իմաստասիրի և մեր Դաւթի այս գրութիւնների մի փոքրիկ առընչութիւնը պարզում է ոչ միայն մեզ հետաքրքրող խնդիրը, այլ և լուծում գրական մի կարևոր հարց՝ Դաւիթ Հարքացու ժամանակը։

Գ. Վ. Յովսէփեան

(Շարունակելի)

---

* Սեբէոս, Պետերբուրգ, 1879, եր. 150։

1907 Թ.

„ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

(*Նոր շրջան՝* VII *տարի*)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստան *տարեկան* 10 *ր.*	Արտասահման 12 *ր.* (32 ֆ.)
կէս տարին 5 » 40 *կ*	» 7 » (18 ֆ)
1 *ամսուան* 1 »	» 1 « 20. (3½ ֆ.)

Հասցէն՝ Тифлисъ, редакція журнала «МУРЧЪ». *Արտասահմանից՝* Tiflis, Rédaction de la Revue «Mourtch».

Խմբագիր՝ Լ. Սարգսեան.

ՀՈՎԻՒ

Հոգեւոր-բարոյական, հասարակական եւ մանկավարժական շաբաթաթերթը հրատարակւում է շաբաթը մի անգամ, կիւրակի օրը

Տարեկան բաժանորդագինը . . . 4 *ռ.*
Կէս տարուանը . . . . . 2 *ռ.* 50 *կ.*
Ամսական . . . . — 40 *կ.*

Հասցէն՝ Тифлисъ редакція „Овивъ“.

Խմբ.-Հրատ. Եղնիկ ա. քահ. Երզնկեան.

Բացուած է Բաժանորդագրութիւն 1907 թուի

„ՀՈՍԱՆՔ“

ՀԱՍԱՐԱԿ., ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ.

Բաժանորդագինն՝ է Թիֆլիսում և գաւառներում տարուանը 6 *ր., ամսական* 50 *կ.*

Յայտարարութիւնների գինն է. առաջին երեսում իւրաքանչիւր տողին պետիտով 6 *կ., վերջին երեսում* 3 *կ.: Տարեկան և սեզոնական յայտարարութիւնները՝ փոխադարձ համաձայնութեամբ:*

Արտասահմանում և Պարսկաստանում 20 *ֆրանկ. կէս տարին* 10 *ֆրանկ, ամսական* 2 *ֆրանկ:*

Խմբագրութեան հասցէն հետեւեալն է. Тифлисъ, Редакція «Осанкъ» Николаевская № 9 *կամ* Tiflis Caucase Redaction «Hossank.»

Բացուած է Բաժանորդագրութիւն 1907 թ.

ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որ նուիրուելու է մասնաւորապէս Թիւրքահայկական հարցի լուսաբանութեանը. ծանօթացնելու է իւր ընթերցողներին հայ և Թուրք կեանքի քաղաքական, հասարակական, գրական ու գեղարուեստական զանազան երեւոյթների հետ և ձգտելու է հայ-Թիւրքական համերաշխ գործակցութեան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ

Թիֆլիս, տարեկան 3 ր 20 կ., վեց ամսուան 2 ր., Գաւառ, տարեկան 4 ր. վեց ամսուան 2 ր. 25 կ. Արտասահման տարուան 13 ֆր. վեց ամսուան 7 ֆրանկ:

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакція «Еркри Дзайнъ», Грибоѣдовская, № 16, д. Зубалова կամ Tlflis rédaction de l' «Erkir, Dzain», Criboedovskaya. № 16. maison Zoubaloff.

Թիֆլիսում կարելի է բաժանորդ գրուել և «Գուտենբերգ» գրավաճառանոցում:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ շաբաթաթերթի

Որին աշխատակցում են նկարիչներ՝ պ. պ. Շամշինեան, Զոմմեր, Ճեպկյեան, Ռօզդես. «Սլաֆ». «Սերաո», «Միֆասոլ» և ուրիշները:

Տարեկան բաժանորդագները կստանան պրեմիաներ. 1) Երկու մեծադիր (50×60 սանտիմ.) գունատիպ պատկեր հայկական կեանքից, 2) Պատի պատկերազարդ տախտակ օրացոյց 1907 Թ.

Տարեկ. գինը պրեմիաներով Թիֆլիս 4 ր. դուրսը 5 ր.
Կէս տարին . . . 2 » » 2 » 50 կ.
Երեք ամիսը . . . 1 » » 1 » 25 կ.
Արտասահման՝ տարեկան 6 ր., կէս տարին 3 ր.:

Հասցէն՝ Тифлисъ Редакпія «Аели», Дворцовая ул. կամ Tiflis Rédaction du journale «Haeli».

Խմբագիր-Հրատարակիչ՝ Բ. Ճեպկյեան.

Բացուած է բաժանորդագրութիւն 1907 թ.

„ԱԽՈՒՐԵԱՆ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

Որ լոյս է տեսնում այս Յունուարից

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒՄ։

«ԱԽՈՒՐԵԱՆԸ» ունենալու է յառաջադիմական ուղղութիւն և ձգտելու է ծառայել ժողովրդի կուլտուրական յառաջադիմութեան և նրա տնտեսական շահերին։

Խմբագրութեան անդամներն են՝ Ատրպէտ, Լեւոն Մանուէլեան, Երդ. Հաւատարմ. Յովհ. Տէր-Մարտիրոսեան։

Մասնակցել խոստացել են նաև շատ գրական ույժեր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Ալէքսանդրապօլում տարեկան 3 *ր., կէս տարին* 2 *ր., ուրիշ տեղեր տարեկան* 4 *ր., կէս տարին* 2 *ր.* 50 *կ., արտասահման* 12 *ֆր. կէս տարին* 7 *ֆր., առանձին համարը ամեն տեղ* 2 *կոպ. Կարելի է վճարել նաև ամսէ ամիս*

«ԱԽՈՒՐԵԱՆԸ» լոյս է տեսնելու ամենայն օր, բացի կիւրակի եւ տօներին յաջորդող օրերից

Խմբագրութեան հասցէ՝ Александрополь Редакція газеты «Ахурянъ». *Արտասահմանից՝* Alexandropol, Rédaction „Akhourian“ (Caucase).

Խմբագիր—Հրատարակիչ՝ Կ. Աֆրիկեան.

Բացուած է բաժանորդագրութիւն 1907 թ.

“ՁԱՅՆ”

քաղաքական, հասարակական և տնտեսական շաբաթաթերթի

«ՁԱՅՆԸ»-ը պիտի պաշտպան հանդիսանայ և արտայայտիչ լինի արդիւնաբերական և գիւղացիական բանւորների դասակարգային շահերի, քաղաքական և տնտեսական կեանքում։

ԲԱԺՆԵԳԻՆՆ Է՝

Թիֆլիսից դուրս տարեկան 3 *ռուբ.* 50 *կ., կէս տարին* 2 *ռուբ., ամսական* 35 *կոպ, համարը* 8 *կոպ.*

ԲԱՆՈՒՈՐՆԵՐ, ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԵՑԷՔ ՁԵՐ ԹԵՐԹԻՆ!

Հասցէն՝ Тифлисъ, редакція «Дзайнъ», Малая Ванкская. № 4,
Արտասահմանից՝ Tiflis, rédaction «Dzain», malaja Vankskaja № 4,

Խմբագիր՝ Տ. Խախանեան.

Հրատարակիչ՝ Մ. Դօլուխանեան

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1. *Հայերը Ռուսաստանում*. Մխիթար վարդապետ, *Վաղարշապատ*, 1906. *գինն է* 80 *կ*.

2. Начальная Русская Хрестоматія для Армянъ 1-ая книжка *դասաւանդութեան բացատրութիւններով, աշխատասիրեց*, Սեդրակ *Մանդինեան*, *Թիֆլիս*, 1907, *գինն է* 55 *կ*.

3. Des heiligen Irenäus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung in armenischer Version entdeckt. Herausgegben u. ins deutsche übersetzt v. Lic. Dr. Karapet Ter-Mèkèrttschian u. Lic. Dr. Erwand Ter-Minassiantz mit einem Nachwort u. Anmerkungen v. Adolf Harnack, Leipzig, 1907. *Գինն է* 6 *մարկ կամ* 2 *ր*. 75 *կ*.

4. *Աշխարհաքարի Քերականութիւն, դասագիրք ստորին դասարանների համար. յօրինեց Դոկտ. փիլ. Մ. Աբեղեան, ուսուցիչ Ս. Էջմիածնի Գ. Ճեմարանի, Վաղարշապատ*, 1906. *Գինն է* 75 *կ. գումարով գնողների համար* 50 *կ*.

5. *Անապատականները և վանականութիւն*, Յուսիկ եպիսկոպոս, *Վաղարշապատ*, 1906 *Թ*. *Գինն է* 40 *կ*.

6. *Կարլ Մենդելսզոհն Բարթոլդու* Պատմութիւն Յունաստանի, *Ալի փաշա և Հետերիա, Թարգմանեց Ս. Կանայեանց. Վաղարշապատ*, 1906. *Գինն է* 75 *կոպէկ*.

---

* Ստացուած գրքերի համար այսուհետեւ կանոնաւոր կերպով գրախօսութիւններ կգրուին.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Էջմիածնի Լուսաւորչական Հայոց Սինոդի վճռի համաձայն Ս. Էջմիածնի Տպարանական ժողովը այսու յայտարարում է ի գիտութիւն հասարակութեան, որ Էջմիածնի Տպարանը, ձուլարանը եւ կազմատունը բոլոր պարագաներով տրւում են կապալով։ Պայմանների հետ ծանօթանալ ցանկացողները կամ նոր պայմաններ առաջարկողները պէտք է դիմեն Տպարանական ժողովին հետեւեալ հասցէով—*Эчміадзинъ, Типографическому комитету.*